

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ПРАВОВЕДЕНИЕ
BULLETIN OF YEREVAN UNIVERSITY
JURISPRUDENCE

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ 1 (22)

ԵՐԵՎԱՆ - 2017

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
«БАНБЕР ЕРЕВАНИ АМАЛՏԱՐԱՆԻ. ՔՐԱՎՈՎԵԴԵՆԻԵ»
«BANBER YEREVANI HAMALSARANI. JURISPRUDENCE»

Գլխավոր խմբագիր՝ Միրզոյան Հ. Ղ.

Խմբագրական խորհուրդ.

Անտոնյան Յու. Մ. (*Մոսկվա*), Ավետիսյան Լ. Վ. (*գլխ. խմբագրի տեղակալ*),
Գաբրուզյան Ա. Հ. (*պատասխ. խմբագիր*), Գևորգյան Վ. Ա., Գոնչար Ն. Ա. (*գլխ.
խմբագրի տեղակալ*), Խաբրիևա Տ. Յա. (*Մոսկվա*), Կուրի Հելմուտ (*Ֆրայբուրգ*),
Հարությունյան Գ. Գ., Հայկյանց Ա. Մ., Հովակիմյան Ա. Է. (*պատասխ. քարտու-
ղար*), Ղազինյան Գ. Ս., Մեղրյան Ս. Գ., Յակովլև Վ. Ֆ. (*Մոսկվա*), Միմոնյան Ա. Հ.

Главный редактор: **Мирзоян Г. К.**

Редакционная коллегия:

Аветисян Л. В. (*зам. главного редактора*), **Айкянц А. М.**, **Антонян Ю. М.** (*Москва*),
Арутюнян Г. Г., **Габузян А. А.** (*ответ. редактор*), **Геворкян К. А.**, **Гончар Н. А.**
(*зам. главного редактора*), **Дюран Бернард** (*Монпелье*), **Казинян Г. С.**, **Кури Хель-
мут** (*Фрайбург*), **Мегрян С. Г.**, **Овакимян А. Э.** (*ответ. секретарь*), **Симонян А. Г.**,
Яковлев В. Ф. (*Москва*)

Editor-in-chief: **Mirzoyan H. Gh.**

Editorial Board:

Antonyan Yu. M. (*Moscow*), **Avetisyan L. V.** (*Deputy editor-in-chief*), **Duran
Bernard** (*Montpellier*), **Gabuzyan A. H.** (*Managing Editor*), **Gevorgyan K. A.**,
Ghazinyan G. S., **Gonchar N. A.** (*Deputy editor-in-chief*), **Harutyunyan G. G.**,
Haykyants A. M., **Hovakimyan A. E.** (*Executive Secretary*), **Kury Helmut**
(*Freiburg*), **Meghryan S.G.**, **Simonyan A. H.**, **Yakovlev V. F.** (*Moscow*)

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀՀ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2015 թ. սահմանադրական փոփոխությունների կարևորագույն ուղղություններից է անցումը կիսանախագահական կառավարման ձևից խորհրդարանականի: Այդպիսի անցման տեսական հիմք դարձան ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի մշակած և «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ»-ում (այսուհետ՝ նաև Հայեցակարգ) զետեղված դրույթները կիսանախագահական կառավարման ձևի «անհաղթահարելի» թերությունների և խորհրդարանական կառավարման ձևի առավելությունների մասին¹:

Պետք է արձանագրել, որ այլ հեղինակներ ևս առավելություն են տալիս խորհրդարանական կառավարման ձևին՝ համարելով այն պետական իշխանության ավելի կատարյալ տիպ, քան նախագահականը և կիսանախագահականը: Այս դրույթը հիմնավորելու համար նշում են խորհրդարանական կառավարման ձևի մի շարք առավելություններ և արձանագրում կառավարման այլ ձևերում այդ հատկանիշների բացակայության հանգամանքը: Հաճախ նաև հղում են կատարում Արևմտյան Եվրոպայի խորհրդարանական դրական փորձին և Լատինական Ամերիկայի պետությունների անհաջող նախագահական փորձին²:

Թերևս նույն մեթոդաբանությամբ և նույն հաջողությամբ կարելի է հիմնավորել, որ հենց կիսանախագահական կառավարման ձևն է պետական իշխանության ավելի կատարյալ տիպ, քանի որ այն ունի առավելություններ, որոնք խորհրդարանական կառավարման համակարգում բացակայում են: Ասենք, կիսանախագահական կառավարման ձևն ունի ավելի բարձր կայունության աստիճան քաղաքական ոչ հասուն համակարգերի պայմաններում և ճգնաժամային իրավիճակներում: Ինչ վերաբերում է պատմական փորձին, ապա այն չափազանց

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ», Եր., 2014, էջ 26-35:

² Մանրամասն տե՛ս **Медушевский А. Н.** Сравнительное конституционное право и политические институты. М., 2002, էջ 204-205:

բազմազան է: Մանավորապես, կարելի է հղում կատարել Գերմանիայի, հետպատերազմյան Ֆրանսիայի, Իտալիայի փորձին, որոնցում խորհրդարանական կառավարման համակարգը հանգեցրեց կա՛մ տոտալիտար ռեժիմի հաստատմանը (նացիստական Գերմանիա), կա՛մ կառավարական և խորհրդարանական երկարատև ճգնաժամերի: Հենց այդպիսի անկայունության հաղթահարման անհրաժեշտությամբ էր պայմանավորված Ֆրանսիայի հինգերորդ Հանրապետության ձևավորումը՝ անցումը խորհրդարանական կառավարման համակարգից կիսանախագահականի:

Կառավարման տարբեր ձևեր ի հայտ են եկել կոնկրետ պատմաքաղաքական պայմաններում՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցության հետևանքով: Հետևաբար՝ յուրաքանչյուր կառավարման ձևի ժողովրդավարական ներուժը, իրավական պետության ձևավորման հիմնախնդրին համապատասխանության աստիճանը և արդյունավետությունը պայմանավորված են հենց այդ նույն գործոններով՝ քաղաքական համակարգի և քաղաքացիական հասարակության վիճակով, քաղաքական մշակույթի և հասարակության իրավագիտակցության զարգացածության մակարդակով և այլն:

Հատկանշական է, որ իրավաբանական գրականության մեջ հիմնավորվում են նաև տրամագծորեն հակադիր տեսակետներ: Այսպես, Վ. Դ. Ջորկինը գտնում է, որ Ռուսաստանի համար առավել գերադասելի է նախագահական հանրապետությունը, քանի որ այն բնութագրվում է կայունությամբ և աչքի է ընկնում ճկունությամբ, տարբեր իրավիճակների և քաղաքական ուժերի իրական դասավորվածությանը հարմարվելու ունակությամբ³: Մանրամասնորեն վերլուծելով կառավարման տարբեր մոդելների առանձնահատկությունները՝ Ռուսաստանի Դաշնության համար նախագահական կառավարման ձևի նպատակահարմարության մասին կարծիք է հայտնում նաև Մ. Ա. Կրասնովը⁴: Տողերիս հեղինակը դեռևս 2003 թ. հիմնավորել է սահմանադրական միապետության ակնհայտ առավելությունները պետական կառավարման ժամանակակից այլ ձևերի նկատմամբ⁵: Այդպիսով՝ պետական կառավարման ժամանակակից բոլոր ձևերին ներհատուկ դրական և բացասական հատկանիշների առկայությունը հետազոտողների համար լայն հնարավորություններ է ստեղծում հիմնավորելու ցանկացած ձևի առավելությունները՝ շեշտադրելով համապատասխան ձևի դրական

³ Տե՛ս **Зорькин В. Д.** О президенте в конституционном строе РФ // "Конституционный вестник", 1990, № 2, էջ 50:

⁴ Տե՛ս **Краснов М. А.** Россия как полупрезидентская республика: проблема баланса полномочий // "Государство и право", 2003, № 10, էջ 23:

⁵ Տե՛ս **Վ. Ստեփանյան**, Կառավարման խորհրդարանական ձևից դեպի կիսանախագահական հանրապետություն // Օրենք և իրականություն, 2003, № 19-20, էջ 30:

հատկանիշները: Կարելի է պնդել, որ այս հարցում տարբեր հեղինակների դիրքորոշումներ ավելի շատ պայմանավորվում են սուբյեկտիվ գործոններով (քաղաքական նպատակներ, անձնական նախասիրություններ և այլն), քան օբյեկտիվ իրողություններով:

Պետական կառավարման յուրաքանչյուր մոդելի, ամբողջ պետական իշխանական համակարգի գործառական արդյունավետությունը և ժողովրդավարական ներուժը էական կախվածության մեջ են համապատասխան հարաբերությունների իրավական, առաջին հերթին՝ սահմանադրական կարգավորման որակից: Այստեղ առաջանում են որոշակի ռիսկեր, որոնք կարող են վճռորոշ ազդեցություն ունենալ պետական իշխանական համակարգի գործառության արդյունավետության վրա: Նշվածը վերաբերում է կառավարման ցանկացած ձևի և ցանկացած սահմանադրության: Բացառություն չէ նաև 2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությունը: Թերևս հենց այս հանգամանքով են պայմանավորված ժամանակակից աշխարհում պարբերաբար իրականացվող սահմանադրական բարեփոխումները:

Բարդ համակարգերի, այդ թվում՝ պետական իշխանության համակարգի արդյունավետ կիրարկման վճռորոշ նախապայմանը դրա կայունությունն է: Հատկանշական է, որ Հայեցակարգում բազմիցս կրկնվում են «կայունություն» և «անկայունություն» եզրույթները (էջ 13, 27, 32, 33 և այլն): Ավելին՝ «կայուն» եզրույթը օգտագործվում է հենց Սահմանադրության տեքստում: Համաձայն 2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 89 հոդվածի 3-րդ մասի՝ «ընտրական օրենսգիրքը երաշխավորում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորում»: Իհարկե, կայուն խորհրդարանական մեծամասնություն ձևավորելը ոչ թե ինքնանպատակ է, այլ խորհրդարանի կայունության անհրաժեշտ նախադրյալ: Խորհրդարանական կառավարման դեպքում պետական մարմինների ամբողջ համակարգում միայն խորհրդարանն է ձևավորվում համընդհանուր ընտրությունների արդյունքում, ունի առաջնային մանդատ և որպես հետևանք՝ լեգիտիմության առավել բարձր մակարդակ: Ազգային ժողովի կենտրոնական դերը պետական իշխանության համակարգում առանձնակի արդիականություն է հաղորդում այդ մարմնում կայուն մեծամասնություն ապահովելու հիմնախնդրին: Այդպիսի կայունությունը Ազգային ժողովի՝ իր գործառույթների արդյունավետ իրականացման անհրաժեշտ նախապայման է: Բացի դրանից՝ խորհրդարանի կայունությունը պարտադիր նախապայման է գործադիր իշխանության ամբողջ համակարգի, ներառյալ գործադիր իշխանության բարձրագույն մարմնի՝ կառավարության կայունության ապահովման համար⁶: Հետևաբար՝ խորհրդարանական

⁶ Տե՛ս **Ա. Ա. Հարությունյան**, Կառավարման ձևի կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, իրավ. գիտ. թեկ. ատենախոսության սեղմագիր, Եր., 2016, էջ 6:

կառավարման պայմաններում կայուն մեծամասնություն ապահովելու սահմանադրական և սահմանադրաիրավական երաշխիքների ամրագրումը ամբողջ պետական իշխանական համակարգի գործառույթյան (նույնիսկ՝ գոյատևման) գերխնդիրն է:

Սակայն քննարկվող սահմանադրական դրույթում տեղ է գտել մեթոդաբանական կոպիտ սխալ, որը պարունակում է էական ռիսկեր պետական իշխանության համակարգի հենց կայունություն երաշխավորելու համար: Բանն այն է, որ այս դրույթով ձևակերպված են երկու կարևորագույն, սակայն տարբեր նպատակներ՝ երաշխավորել՝ ա) մեծամասնության ձևավորում և բ) մեծամասնության կայունություն:

Ինչ վերաբերում է խորհրդարանական մեծամասնության ձևավորմանը, ապա այդ խնդիրը կարող է արդյունավետ լուծվել իրավական կարգավորման միջոցների կիրառմամբ: Դրա ապահովման սահմանադրական երաշխիք է 2015 խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 89 հոդվածի 1-ին մասի դրույթը, որով սահմանված է ոչ թե Ազգային ժողովի պատգամավորների կոնկրետ թվաքանակ, այլ նվազագույն թիվ. «Ազգային ժողովը կազմված է առնվազն հարյուր մեկ պատգամավորից»:

Սահմանադրությամբ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվաքանակի փոխարեն նվազագույն թվի ամրագրումը սահմանադրական լեզուով հնարավորություն է ստեղծում ընտրական օրենսգրքի միջոցով խորհրդարանում քանակական առումով ցանկացած մեծամասնություն ապահովելու համար: Խնդիրը միայն այն է, թե ինչպիսի մեծամասնությունն է առավել նպատակահարմար:

Ձևական իրավական տեսանկյունից առավել ընդունելի կարող է համարվել որակյալ՝ պատգամավորների ընդհանուր թվի երեք հինգերորդի մեծամասնությունը, քանի որ ձայների հենց այդպիսի հարաբերակցությամբ են ընդունվում սահմանադրական օրենքները, և Ազգային ժողովի կողմից նշանակվում մի շարք պաշտոնատար անձինք (հաշվեքննիչ պալատի նախագահ և անդամներ, գլխավոր դատախազ և այլն): Սակայն բովանդակային առումով պետք է հաշվի առնել, որ իրավական կարգավորման այս ոլորտում համապետական շահերի համակարգում առկա են որոշ հակասություններ: Չի կարող կայուն լինել այն խորհրդարանը, որն ի վիճակի չէ ընդունելու կարևորագույն օրենքներ և նշանակումներ կատարելու առանցքային պետական պաշտոններում: Միևնույն ժամանակ, երեք հինգերորդի կամ ավելի բարձր մեծամասնության դեպքում գործնականում անհնար է դառնում խորհրդարանական փոքրամասնության շահերի պաշտպանությունը, ինչը կարող է հանգեցնել մեկ կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի բռնապետությանը: Այսինքն՝ ձևավորվում է այն նույն իրավիճակը, որը նկարագրված է Սահմանադրական բարեփոխումների

հայեցակարգում. «Ազգային ժողովում Հանրապետության Նախագահի բացարձակ մեծամասնության առկայության և ներխորհրդարանական հակակշիռների բացակայության պայմաններում **մեծանում է քաղաքական մենիշխանության վտանգը**: Դա հանգեցնում է նրան, որ բացարձակ է դառնում նախագահական իշխանությունը՝ չունենալով գործուն հակակշիռներ ո՛չ օրենսդիր և ո՛չ գործադիր իշխանության կողմից»⁷: Թերևս երկու իրավիճակների տարբերությունը միայն այն է, որ խորհրդարանական կառավարման պայմաններում բացարձակ կարող է դառնալ վարչապետի իշխանությունը: Իսկ այդպիսի օրինակներ պատմությունը ցույց է տվել. Ա. Հիտլերը եղել է ոչ թե նախագահ, այլ կանցլեր (վարչապետ):

«Կայունություն» (стабильность, stability) եզրույթը բնորոշվում է որպես համակարգի ունակություն՝ գործել՝ չփոփոխելով սեփական կառուցվածքը, և պահպանել հավասարակշռությունը: Այդ հատկանիշը պետք է անփոփոխ լինի ժամանակի մեջ: Կայուն վիճակը համակարգի գործառնությունն է անհրաժեշտ ժամկետներում⁸:

Հետևաբար՝ խորհրդարանական մեծամասնության (խորհրդարանի) կայունության երաշխավորման նպատակի իրացումը ընտրական օրենսգրքի կարգավորման շրջանակներից դուրս է: Մեծամասնության կայունությունը ապահովելու հիմնախնդիրը առաջանում է արդեն խորհրդարանի գործունեության ընթացքում, և կայունության մակարդակի բարձրացմանն ուղղված նորմեր կարող են և պետք է ամրագրվեն ոչ թե ընտրական օրենսգրքում, այլ Սահմանադրությամբ և Ազգային ժողովի կանոնակարգով:

Ավելին՝ խորհրդարանական մեծամասնության կայունությունը և հետևաբար խորհրդարանի կայունությունն ընդհանրապես հնարավոր չէ ապահովել զուտ իրավական կարգավորման միջոցներով: Իրավական կարգավորման միջոցները կարող են որոշ չափով նպաստել խորհրդարանական մեծամասնության կայունության մակարդակի բարձրացմանը: Չուտ իրավական միջոցների կիրառմամբ խորհրդարանական մեծամասնության կայունությունը երաշխավորելու նպատակը կարելի է գնահատել որպես իրավական ֆետիշիզմի դրսևորում:

Խորհրդարանական մեծամասնության կայունության աստիճանը առաջին հերթին կախված է երկրում քաղաքական ուժերի հարաբերակցությունից, կուսակցությունների համակարգի հասունության աստիճանից, կոնկրետ քաղաքական իրավիճակներից: Այս դրույթը միանշանակ հիմնավորվում է ՀՀ փորձով. 1998 թ. փաստորեն մեկ օրվա ընթացքում

⁷ «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ», էջ 27-28:

⁸ <http://dic.academik.ru/dic.nsf/socio/3918/%DO%A1%DO%A2%DO%90%DO%91%DO%98%DO%9B%DO%AC>

փլուզվեց «Հանրապետություն» խմբակցությունը, որը խորհրդարանում ուներ որակական մեծամասնություն: Այլ երկրների պատմական փորձը նույն միանշանակությամբ ապացուցում է, որ առավել կայուն են այն երկրների խորհրդարանները, որտեղ գոյություն ունի հստակ երկկուսակցական համակարգ: Սակայն նույնիսկ այդ պարագայում խորհրդարանական մեծամասնության (խորհրդարանի) կայունության ապահովման հիմնախնդիրը չի վերանում, և կիրառվում են իրավական կարգավորման միջոցներ, որոնք որոշակիորեն նպաստում են կայունության մակարդակի բարձրացմանը: Վերջին տասնամյակներում ավելանում է սահմանադրական այն դրույթների քանակը, որոնք ուղղված են կառավարության կայունության ամրապնդմանը և խորհրդարանական բանավեճերում դեմագոգիան կանխելուն: Մանավորապես՝ կրճատվում են խորհրդարանի նիստերի և նստաշրջանների պարբերականությունը և տևողությունը, սահմանափակվում են ուղղումներ առաջադրելու պատգամավորների հնարավորությունները, ամրագրվում են ընթացակարգային նորմեր պատգամավորների քաղաքական պատասխանատվության բարձրացման համար և այլն: Քաղաքական անկայունության աստիճանը նվազեցնելու նպատակով որոշ երկրներում պետության գլխին վերապահվում են լրացուցիչ լիազորություններ⁹:

Ստիպված եմ արձանագրել, որ 2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված չէ որևէ դրույթ՝ ուղղված խորհրդարանի, հետևաբար նաև ամբողջ պետական իշխանության համակարգի կայունության ամրապնդմանը: Ինչ վերաբերում է Սահմանադրության 89 հոդվածի 3-րդ մասի քննարկված դրույթին, ապա այն նենգափոխելով «կայունություն» եզրույթի իմաստը՝ որակական հատկանիշից ձևափոխելով քանակականի, ոչ թե լուծում է քաղաքական կայունության իրավական ապահովման խնդիրը, այլ պարզապես «հանում» է այդ խնդիրը:

Մինչև նույն ժամանակ, կարծում ենք, որ մեզանում դեռևս հասունացած չեն նաև բավարար օբյեկտիվ պայմաններ խորհրդարանական կառավարման մոդելի արդյունավետ գործառության համար: Վ. Ի. Գերյեի դիպուկ բնորոշմամբ՝ խորհրդարանական կառավարումը «պետական իշխանության փոխանցումն է կուսակցություններին»¹⁰: Հետևաբար՝ խորհրդարանական կառավարման մոդելի արդյունավետ գործառության պարտադիր նախապայմանը կայացած, հզոր, պետական իշխանության իրականացման ունակություններով օժտված կուսակցությունների առկայությունն է: Մինչդեռ փորձը ցույց է տալիս, որ

⁹ Տե՛ս Медушевский А. Н., նշվ. աշխ., էջ 197-198:

¹⁰ Герье В. И. О конституции и парламентаризме в России. М., 1906, с. 26.

մեզանում հզոր է միայն իշխանության դեկի մոտ գտնվող կուսակցությունը և այնքանով, որքանով մնում է իշխանական: Մնում է միայն հուսալ, որ Ազգային ժողովի կանոնակարգում տեղ կգտնեն դրույթներ, որոնք որոշ չափով կնպաստեն խորհրդարանական կառավարման ամրապրված մոդելի կայունությանը:

Բանալի բառեր – *պետական կառավարման ձև, խորհրդարանական կառավարում, խորհրդարանական մեծամասնություն, Սահմանադրություն, քաղաքական կայունություն*

ВАГЕ СТЕПАНЯН – Проблема стабильности парламента в системе парламентского правления РА. – Переход от полупрезидентской формы государственного правления к парламентской, осуществлённый конституционными преобразованиями 2015 г., выдвинул на первый план проблему – как обеспечить стабильность парламентского большинства и, соответственно, Национального собрания в целом. Однако в Основном законе отсутствуют нормы, обеспечивающие подобную стабильность; закреплена лишь бланкетная норма (ст. 89, ч. 3), согласно которой «избирательный кодекс гарантирует формирование стабильного парламентского большинства». При этом ясно, что избирательный кодекс может гарантировать лишь формирование парламентского большинства, но не его стабильность. Стабильность возникает в процессе функционирования парламента и, следовательно, не поддаётся регулированию избирательного кодекса.

Следует также учитывать, что возможности правового регулирования данной сферы существенно ограничены. Уровень парламентской стабильности определяется объективными факторами, наличие которых в Армении вызывает серьёзные сомнения.

Ключевые слова: *форма государственного правления, парламентское правление, парламентское большинство, Конституция, политическая стабильность*

VAHE STEPANYAN – The Issue of Securing the Stability of the Parliament in the System of Parliamentary Governance of the Republic of RA. – The shift from the quasi-presidential government to a parliamentary one through the 2015 amendments to the Constitution raised the issue of securing the parliamentary majority, and thus, the issue of securing the stability of the parliamentary government.

The text of the amended Constitution, however, lacks any provisions that would act to provide such stability. As such, the Constitution only provides for a blanket provision (article 89, section 3) which states: “the Electoral Code guarantees formation of stable parliamentary majority.” However, the Electoral Code can only guarantee the formation of the parliamentary majority, but not the stability of the latter one. The issue

of stability arises throughout the course of operation of the parliament, and thus, is outside the scope of the regulation of the Electoral Code.

Further, one must also take into the account that the possibility of any statutory regulation of public intercourse in this field is severely limited. The level of the parliamentary stability is conditioned primarily by objective factors, the existence of which is highly questionable in the Republic of Armenia.

Key words: *Form of state governance, parliamentary governance, parliamentary majority, Constitution, political stability*

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՌԱԿԱ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ

ՄԵՐԳԵՑ ՄԵՂՐՅԱՆ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի¹ կիրառման հարուստ փորձը ցույց է տալիս, որ խախտված քաղաքացիական իրավունքների և օրինական շահերի պաշտպանության գործող դատավարական կառուցակարգերը դեռևս ծանրաշարժ են, ժամանակատար ու ծախսատար, երբեմն էլ՝ թերի, ինչը հարուցում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների դժգոհությունը, բացասաբար է անդրադառնում դատարանների ծանրաբեռնվածության և դատական իշխանության հեղինակության վրա, կասկածի տակ է դնում արդարադատության արդյունավետությունն ու որակը:

Աշխարհի շատ երկրներ, բախվելով քաղաքացիական գործերի ծավալների կայուն դինամիկ աճի և որպես հետևանք նաև՝ դատարանների գերծանրաբեռնվածության խնդիրներին, մշակել և ներդրել են դատավարական տարաբնույթ կառուցակարգեր, որոնք թույլ են տալիս կրճատել գործերի քննության տևողությունը, խնայել դատական համակարգի ռեսուրսները և նվազեցնել դատարանների բեռնվածությունը²:

«Ավանդական» վարույթի հետ մեկտեղ՝ պարզեցված և արագացված դատավարական ձևեր ներդնելու միտումը նկատվում է ոչ միայն ազգային մակարդակներում: Միջազգային կազմակերպությունները և անդրազգային կազմավորումները մշակել և ընդունել են մի շարք ակտեր, որոնք ևս հետապնդում են նշված նպատակը: Դրանցից հարկ է հատկապես նշել Ամերիկյան իրավունքի ինստիտուտի (ԱԻԻ) կողմից 2004 թվականի մայիսին և Մասնավոր իրավունքի միասնականացման միջազգային ինստիտուտի (ՄԻՄԻ) կողմից 2004 թվականի ապրիլին ընդունված «Անդրազգային քաղաքացիական դատավարության սկզբունքները»³:

¹ Տե՛ս ՀՀՊՏ 1998.09.09/20(53), ՀՕ-247: Այսուհետ՝ ՔԴՕ:

² Տե՛ս **Чуваева Е. В.** Упрощение и ускорение процесса как способ обеспечения доступа к правосудию, https://lomonosov-msu.ru/archive/Lomonosov_2015/data/7148/uid_37283_report.pdf

³ Տե՛ս <http://www.unidroit.org/english/principles/civilprocedure/ali-unidroitprinciples-e.pdf>: Այսուհետ՝ «Սկզբունքներ» կամ «Անդրազգային սկզբունքներ»: Հարկ է նկատել, որ փաստաթղթի նախաբանում նշվում է, որ Սկզբունքները առևտրային վեճերը դատական կարգով լուծելու **անդրազգային ստանդարտներ են**, որոնք հավասարապես կիրառելի են քաղաքացիական վեճերի շատ այլ տեսակների լուծման համար և կարող են հիմք հանդիսանալ քաղաքացիական դատավարության ոլորտը բարեփոխելու հետագա նախաձեռնությունների համար:

Ելնելով նշված հանգամանքներից՝ ՀՀ նախագահի 30.06.2012 թ. թիվ ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրով⁴ արդարադատության մատչելիության և ողջամիտ ժամկետներում գործի արդարացի դատական քննության իրավունքի համար անհրաժեշտ պայմաններ ապահովելը հռչակվեց որպես բարեփոխումների հիմնական նպատակներից մեկը, իսկ Ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների ցանկում նախատեսվեց նաև դատական քննության պարզեցված ընթացակարգերի կատարելագործումը (Ծրագրի հավելված, կետ 5.8):

Ի կատարումն Ռազմավարական ծրագրի պահանջների՝ ՀՀ արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի փորձագիտական խմբի կողմից մշակված և ներկայումս շրջանառության մեջ դրված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագծում⁵ «Վարույթն առաջին ատյանի դատարանում» վերտառությամբ երկրորդ բաժնի շրջանակներում առանձնացվել է «Պարզեցված ընթացակարգեր» ենթաբաժին, որի առանձին գլուխներով նախատեսվել և կարգավորվել են չորս վարույթներ, այդ թվում՝ հեռակա դատաքննությունը, որը, ի տարբերություն արագացված դատաքննության և կարգադրության վարույթի, ՀՀ գործող ՔԴՕ-ի նորմերով նախատեսված չէ և որոշակի առումով նորույթ է ՀՀ դատավարական օրենսդրության համար:

Հեռակա դատաքննության էությունը: *Հեռակա դատաքննությունը կարգավորվել է «Հեռակա դատաքննություն» վերտառությամբ 36-րդ գլխի շրջանակներում, որն ընդգրկում է 254-257 հոդվածները:*

Հեռակա դատաքննության ինստիտուտը առկա է մի շարք իրավական համակարգերում: Տարբեր անվանումներով (հեռակա վարույթ, դեֆոլտային վարույթ և այլն) և որոշակի առանձնահատկություններով այն հաջողությամբ կիրառվում է ԱՄՆ-ում, Անգլիայում և Ուելսում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Նիդերլանդներում, ՌԴ-ում, Ուկրաինայում և այլ երկրներում:

Դատարան չներկայանալը միշտ էլ դիտվել և ներկայումս էլ դիտվում է որպես դատական իշխանության կամքը չկատարելու միտում, հասարակական կարգի դեմ ոտնձգություն, մեղավոր վարքագիծ, որը չներկայացողի նկատմամբ պետք է առաջացնի տարբեր սանկցիաներ⁶:

Անդրազգային սկզբունքների 17.3 կետը դեֆոլտային (հեռակա) վճիռ կայացնելը դիտում է որպես դատարան ներկայանալու պարտա-

⁴ Տե՛ս ՀՀՊՏ 2012.07.11/33(907), Հոդ.827: Այսուհետ՝ Ռազմավարական ծրագիր:

⁵ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ), տե՛ս http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_525118627441_Qagh.dat_final-11.01.2016.pdf

⁶ Տե՛ս Ռ. Գ. Պետրոսյան, Դատարանը և քաղաքացիական դատավարությունը Արևելյան Հայաստանում XIX-XX դարերում, Եր., 2001, էջ 458-459:

կանությունը չկատարելու համար դատարանի կողմից գործին մասնակցող անձանց նկատմամբ կիրառվող իրավաչափ պատժամիջոց: Ըստ Սկզբունքների 15.1 կետի՝ հայցվորի դատարան չներկայանալու դեպքում դատարանը պետք է որոշում կայացնի գործով վարույթն ավարտելու մասին՝ առանց այն ըստ էության լուծելու, իսկ պատասխանողի կամ մեկ այլ կողմի դեմ, որն առանց հարգելի պատճառների չի ներկայանում դատարան, կարող է կայացվել դեֆոլտային (հեռակա) վճիռ (կետ 15.2), եթե հայցը ողջամտորեն հիմնավորված է ներկայացված փաստերով ու ապացույցներով և օրինական է բոլոր պահանջների մասով (կետ 15.3.3):

Եվրոպական երկրների դատավարական օրենսդրությունները ևս նախատեսում են որոշակի բացասական դատավարական հետևանքներ գործին մասնակցող այն անձանց համար, որոնք առանց հարգելի պատճառների չեն ներկայանում դատարանի կանչով: Հայցվորի չներկայանալը դատարան դիտվում է որպես «հրաժարում հետապնդումից» կամ ներկայացված պահանջից և հանգեցնում է «հայցի մերժման» (օրինակ՝ Գերմանիայում) կամ «հայցն առանց քննության» թողնելուն (օրինակ՝ Ռուսաստանում): Նման մոտեցում ցուցաբերվել է նաև Նախագծում, որի 165 հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ դատարանը հայցը թողնում է առանց քննության, եթե ծանուցված հայցվորը կամ նրա ներկայացուցիչը չի ներկայացել երկու հաջորդական դատական նիստերին և չի ներկայացրել գործի քննությունը հետաձգելու կամ գործն իր բացակայությամբ լուծելու վերաբերյալ միջնորդություն, և պատասխանողը չի միջնորդել շարունակելու գործի քննությունը:

Հեռակա դատաքննությունը (հեռակա կամ դեֆոլտային վճիռ կայացնելու հնարավորությունը), ըստ էության, հայցն առանց քննության թողնելու համարժեքն է: Եթե պատասխանող կողմն անհիմն չի ներկայանում դատարան, չի արձագանքում հակառակ կողմի պահանջներին ու փաստարկներին կամ բավարարվում է պատասխան ներկայացնելով, դա վկայում է ներկայացված հայցապահանջը, դրա հիմքում ընկած փաստերը, հակառակ կողմի փաստարկներն ընդունելու, դրանք վիճարկելու հիմքեր չունենալու, դատական պաշտպանության իրավունքից օգտվելու ցանկության բացակայության, իսկ հազվադեպ՝ հայցի անհիմն և մերժման ենթակա լինելու հարցում նրա համոզվածության և իր պաշտպանության վրա ռեսուրսներ անտեղի չծախսելու ցանկության մասին:

Հեռակա դատաքննությունն ընդհանուր առմամբ կարելի է բնորոշել որպես քաղաքացիական գործի քննության և լուծման պարզեցված կարգ, որը հայցվորի համաձայնությամբ կիրառվում է այն դեպքերում, երբ դատական նիստի ժամանակի ու վայրի մասին պատշաճորեն ծանուցված պատասխանողը չի ներկայացել դատարան և չի ներկայացրել գործի քննությունը հետաձգելու, գործն իր բացակայությամբ՝ ներկայաց-

ված փաստաթղթերի և նյութերի հիման վրա քննելու կամ դատական նիստն իր բացակայությամբ անցկացնելու մասին միջնորդություն: Վարույթի պարզեցումը կատարվում է այն բանի հաշվին, որ դատարանը ստանում է նախապատրաստական փուլում գործի դատաքննությանն անցնելու և գործում առկա ապացույցների հետազոտության արդյունքներով վեճն ըստ էության լուծելու հնարավորություն՝ չկաշկանդվելով պատասխանողի և նրա դիրքորոշման բացակայությամբ:

Հեռակա դատաքննություն կիրառելու հիմքերը: Նախագծի 254 հոդվածը սահմանել է պարզեցված վարույթի թույլատրելիության մի քանի պայմաններ, որոնց առկայության դեպքում դատարանը կարող է կիրառել հեռակա դատաքննություն:

1) *Պատասխանող կողմը պատշաճ կերպով ծանուցվել է նախնական դատական նիստի ժամանակի և վայրի մասին:* Եթե գործի նյութերում բացակայում են պատասխանողի ծանուցված լինելը հավաստող ապացույցներ, դատարանն իրավունք չունի կիրառելու հեռակա դատաքննություն և ընդհանուր կանոնի ուժով պարտավոր է գործի քննությունը հետաձգել: Ընդ որում, եթե գործով մասնակցում են մի քանի պատասխանողներ, նրանցից յուրաքանչյուրը պետք է պատշաճորեն ծանուցված լինի նախնական դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

2) Դատարանը կարող է արագացված դատաքննություն կիրառել այն դեպքերում, երբ ծանուցված պատասխանողը՝

ա. *չի ներկայացել նախնական դատական նիստին,*

բ. *չի ներկայացրել նիստը հետաձգելու, գործն իր բացակայությամբ ներկայացված փաստաթղթերի և նյութերի հիման վրա քննելու կամ դատական նիստն իր բացակայությամբ անցկացնելու մասին միջնորդություն:*

Գործին մի քանի պատասխանողների մասնակցության դեպքում հեռակա դատաքննություն կարող է կիրառվել նախնական դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճորեն ծանուցված բոլոր պատասխանողների չներկայանալու և նրանց կողմից նշված միջնորդությունները չներկայացնելու դեպքում (254 հոդվ., մաս 2):

Հարկ է նկատի ունենալ, որ ծանուցված պատասխանողի չներկայանալը դատական նիստին ոչ բոլոր դեպքերում է առաջացնում հեռակա դատաքննություն կիրառելու հնարավորություն: Ընդհանուր կանոնի համաձայն՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցված գործին մասնակցող անձի չներկայանալը դատական նիստին արգելք չէ գործի քննության համար (135 հոդվ., մաս 3):

Հեռակա դատաքննություն կիրառելու համար Նախագիծը կարևորում է պատասխանողի անգործության և անտարբերությանն հանգամանքը իր նկատմամբ հարուցված վարույթին (չներկայանալը և միջնորդություն չներկայացնելը): Եթե պատասխանողը կամ պատաս-

խանողներից որևէ մեկը, օգտվելով գործն իր բացակայությամբ՝ ներկայացված փաստաթղթերի և նյութերի հիման վրա քննելու, դատական նիստն իր բացակայությամբ անցկացնելու կամ գործի քննությունը հետաձգելու մասին միջնորդություն ներկայացնելու իրավունքից (135 հոդվ., մաս 1-2, 142 հոդվ.), դիմում է դատարանին նման խնդրանքով, դատարանը չի կարող տվյալ գործը քննել այս կարգով նույնիսկ այն դեպքերում, երբ բացակայության պատճառները անհարգելի ճանաչելով՝ մերժում է ներկայացված միջնորդությունը: Նման դեպքերում նախնական դատական նիստը պետք է շարունակվի ընդհանուր կարգով, քանի որ, մի կողմից՝ թվարկված միջնորդությունները ներկայացնելու պարագայում դատարանը չի կարող վստահ լինել, որ պատասխանողը խուսափում է դատական նիստին ներկայանալուց, մյուս կողմից՝ նման միջնորդություններից որևէ մեկը ներկայացնելու փաստն ինքնին վկայում է այն մասին, որ նա չի հրաժարվում ընդհանուր կարգով հայցի դեմ պաշտպանվելու, հայցի դեմ առարկություններ, դրանք հիմնավորող ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից (չէ՞ որ ներկայացված միջնորդությունը մերժելու մասին տեղեկանալուց հետո նա կարող է մասնակցել հաջորդ նիստերին): Թվարկված միջնորդություններից յուրաքանչյուրի ներկայացումը վկայում է պատասխանողի ընդհանուր կարգով իր իրավունքների պաշտպանությունն իրականացնելու ցանկության մասին, որի պարագայում հեռակա դատաքննություն կիրառելն անարդյունավետ կդարձնի տվյալ գործով դատաքննությունը: Չէ՞ որ հաջորդ դատական նիստին պատասխանողը կարող է ներկայացնել հայցի դեմ իր առարկությունները, այն հիմնավորող ապացույցները, ինչը, ի դեպ, Նախագիծը դիտարկում է որպես հեռակա դատաքննությունը դադարեցնելու և ընդհանուր կարգով գործի քննությունն իրականացնելու հիմք (256 հոդվ., մաս 1):

Ուշագրավ է, որ Նախագծի սկզբնական տարբերակում որպես հեռակա դատաքննություն կիրառելու հիմք նախատեսվում էր ծանուցված պատասխանողի չներկայանալը երկու հաջորդական դատական նիստերին: Մենք կողմնակից ենք նման մոտեցմանը առնվազն երկու պատճառով: Նախ՝ հաշվի առնելով կողմերի իրավահավասարության սկզբունքի պահանջները՝ կարծում ենք, որ կողմերի չներկայանալը դատական նիստին նրանց համար անբարենպաստ հետևանքներ պետք է առաջացնի հավասարազոր պայմաններում. եթե հայցն առանց քննության թողնելու հիմք է հայցվորի երկու հաջորդական դատական նիստերին չներկայանալը, ապա պատասխանողին վերաբերող կարգավորումները պետք է համարժեք լինեն: Բացի դրանից, գործով առաջին կամ հաջորդող դատական նիստից որևէ մեկին կողմի չներկայանալը և բացակայության պատճառների մասին դատարանին չհայտնելը շատ դեպքերում չեն կարող դատարանի մեջ համոզմունք ձևավորել, որ կողմը խուսափում է դատարան ներկայանալուց և չունի չներկայա-

նալու հարգելի պատճառ: Երկու հաջորդական նիստերին չներկայանալու պահանջ ամրագրելու դեպքում, մեր համոզմամբ, նվազագույնի կհասցվեն այն հնարավոր իրավիճակները, երբ կայացված վերջնական դատական ակտերը բեկանվում են այն պատճառաբանությամբ, որ կողմը զրկված է եղել իր դիրքորոշումն առաջին ատյանի դատարանում ներկայացնելու հնարավորությունից՝ իրենից անկախ պատճառներով: Նիստերից գեթ մեկին չներկայանալու և նշված միջնորդություններից մեկը չներկայացնելու հիմքով հեռակա դատաքննություն կիրառելը շատ նման է «պատասխանողի բացակայության փաստից օգտվելուն», ինչը, կարծում ենք, հեռակա դատաքննության ինստիտուտը կդարձնի անարդյունավետ: Նիստերից մեկին պատասխանողի չներկայանալու դեպքում դատարանը պետք է կամ ընդհանուր կարգով շարունակի գործի քննությունը նրա բացակայությամբ, կամ հետաձգի դատական նիստը՝ այն հաշվով, որ հաջորդ դատական նիստին պատասխանողը կարող է ներկայանալ կամ գոնե կներկայացնի տեղեկություններ իր բացակայության պատճառների մասին: Հաջորդող նիստին պատասխանողի չներկայանալու դեպքում միայն հավանականության բավականին մեծ աստիճանով կարելի է ենթադրություն անել գործի քննությանը պատասխանողի մասնակցելու ցանկության բացակայության մասին: Հակված ենք ենթադրելու, որ կայացված վերջնական դատական ակտերի կայունության հարցում մտահոգված դատավորները գործնականում հենց այսպես էլ կմոտենան հեռակա դատաքննություն կիրառելու հարցին:

3) Հայցվորը պետք է համաձայն լինի հեռակա դատաքննության:

Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ հեռակա վարույթի կարգով կայացված վճիռը հնարավոր կայունության առումով շատ ավելի ռիսկային է: Քննարկվող պարզեցված վարույթը կիրառելու մասին որոշում կայացնելու պահին ո՛չ դատարանը և ո՛չ էլ հայցվորը չեն կարող վստահ լինել, որ նախնական դատական նիստին չներկայացած պատասխանողի բացակայության պատճառները հարգելի չեն, և նա զրկված չէ այդ պահին դատարան ներկայանալու հնարավորությունից: Նախագծի՝ վերաքննիչ բողոքարկման իրավունքը կարգավորող նորմերի համաձայն՝ պատասխանողը վճռի դեմ վերաքննիչ բողոք բերելիս բողոքում բարձրացված հարցի կապակցությամբ կարող է ներկայացնել իր դիրքորոշումը և այն հաստատող ապացույցները, եթե առաջին ատյանի դատարանում զրկված է եղել դա անելու հնարավորությունից (327 հոդվ., մաս 3): Նման դեպքերում առաջին ատյանի դատարանի վճիռը ենթակա է բեկանման, եթե վերաքննիչ դատարանի գնահատմամբ ներկայացված ապացույցները էական նշանակություն ունեն գործի ճիշտ լուծման համար (335 հոդվ., մաս 2): Հետևաբար, առանց հայցվորի համաձայնության հեռակա դատաքննություն կիրառելը նրա համար կստեղծեր լրացուցիչ ռիսկեր, ընդ որում՝ իր կամքին հակա-

ռակ: Կարծում ենք, որ գործի քննության կարգը (ընդհանուր կամ հեռակա) որոշելիս հայցվորի կամահայտնությունը հաշվի առնելու պահանջը լիովին համապատասխանում է տնօրինչականության սկզբունքին:

Հնարավոր է իրավիճակ, երբ հայցվորը չներկայանա դատական նիստին՝ ներկայացնելով գործի քննությունը հետաձգելու կամ գործն իր բացակայությամբ՝ ներկայացված փաստաթղթերի և նյութերի հիման վրա քննելու կամ դատական նիստն իր բացակայությամբ անցկացնելու մասին միջնորդություն, իսկ պատասխանողն էլ, իր հերթին, չներկայանա դատարան, առանց ներկայացնելու իր բացակայության պատճառները: Քանի որ հեռակա դատաքննություն կիրառելու վերաբերյալ պահանջվում է հայցվորի հստակ ու միանշանակ կամահայտնություն, նման դեպքերում ևս հեռակա դատաքննություն կիրառվել չի կարող, և դատարանը, ելնելով իրավիճակից, կա՛մ պետք է հետաձգի նախնական դատական նիստը, կա՛մ շարունակի այն կողմերի բացակայությամբ:

Հաշվի առնելով հեռակա վարույթի առանձնահատկությունները՝ ենթադրվում է, որ հեռակա դատաքննության կարգով գործի քննությունը կատարելու վերաբերյալ համաձայնություն հայցվորը պետք է տա այն դեպքերում, երբ վստահ է իր ներկայացրած պահանջի իրավաչափության, այն ճշգրտելու (փոփոխելու) անհրաժեշտության բացակայության, ներկայացված հայցի հիմքերի ճշտության, լրիվության, ներկայացված ապացույցների բավարարության մեջ, ինչպես նաև նրանում, որ պատասխանողը չունի ներկայացված հայցի դեմ լուրջ առարկություններ, դրանք հաստատող ապացույցներ կամ, թեև ունի, չի կարող ներկայացնել դատական նիստին չներկայանալու հարգելի պատճառներ:

Հարկ է նկատել, որ հայցվորի համաձայնությունն ինքնին բավարար չէ հեռակա դատաքննության կարգով գործի քննությունն իրականացնելու համար: Նույնիսկ մյուս պայմանների առկայության պարագայում դատարանն ինքն է որոշում վարույթը նման կարգով իրականացնելու նպատակահարմարությունը: Որպես վարույթը կառավարող, գործի արդյունավետ քննությունը կազմակերպող և իրականացնող սուբյեկտ՝ դատարանը բոլոր դեպքերում պետք է հաշվի առնի գործի հանգամանքները, ինչպես նաև հեռակա վարույթը դադարեցնելու և կրկին ընդհանուր կարգով գործի քննությունը վերսկսելու հավանականությունը: Թերևս դրանով էլ պայմանավորված է այն, որ Նախագծի 254 հոդվածի 1-ին մասով նախատեսված է դատարանի՝ հեռակա դատաքննություն կիրառելու հայեցողական լիազորություն:

4) Հեռակա դատաքննություն կարող է կիրառվել բացառապես պատասխանողի առջև բացահայտված հայցի քննության համար: Պատասխանողի համար պետք է ապահովվի ներկայացված հայցի դեմ պաշտ-

պանվելու ողջամիտ հնարավորություն: Դրանով պայմանավորված՝ ընդհանուր կանոնների ուժով պատասխանողին վերապահվում է հայցադիմումը և կից փաստաթղթերը ստանալու պահից երկշաբաթյա ժամկետում հայցադիմումի պատասխան ներկայացնելու (128 հոդվ., մաս 1), մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը օրենքի պահանջների խախտմամբ ներկայացված պատասխանը կրկին ներկայացնելու (128 հոդվ., մաս 7), նույն ժամկետում հակընդդեմ հայց հարուցելու (129 հոդվ., մաս 1), փոփոխված հայցադիմումի վերաբերյալ դատարանի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում պատասխան ներկայացնելու (128 հոդվ., մաս 8), նախնական դատական նիստին մասնակցելու և մի շարք այլ հնարավորություններ: Տնօրինչականության սկզբունքի ուժով պատասխանողն ազատ է իր շահերի պաշտպանության մարտավարությունը որոշելու հարցում: Նա իր հայեցողությամբ է իրականացնում նշված իրավունքները, դատարանն էլ պարտավոր է ապահովել ողջամիտ պայմաններ դրանց իրացման համար: Եթե նախքան դատական նիստը պատասխանողը չի իրացնում նշված դատավարական իրավունքները, իսկ նիստին չներկայանալով՝ ըստ էության հրաժարվում է նաև դատավարության տվյալ փուլում հայցի դեմ պաշտպանվելու՝ օրենքով երաշխավորված և դատարանի կողմից ծանուցման փաստի ուժով ապահովված հնարավորությունից, ապա պատասխանողի նման վարքագիծը պետք է գնահատել որպես ընտրված մարտավարություն: Վերջինս կարող է պայմանավորված լինել նրանով, որ պատասխանողը վստահ է հայցը մերժման ենթակա լինելու հարցում կամ կարծում է, որ հայցի կապակցությամբ իր դիրքորոշումը լիարժեք ներկայացրել է հայցադիմումի պատասխանում: Հնարավոր է նաև, որ պատասխանողը, չունենալով հակընդդեմ պահանջներ, հայցի դեմ լուրջ առարկություններ և ապացույցներ, նախնական դատական նիստին չի ներկայանում, քանի որ չի ցանկանում անտեղի վատնել իր միջոցները և ժամանակը:

Բոլոր դեպքերում գործի քննությունը հեռակա դատաքննության կարգով կարող է իրականացվել բացառապես հայցադիմումի շրջանակներում ներկայացված հայցի առարկայի և հայցի հիմքերի շրջանակներում, որոնց վերաբերյալ պատասխանողը տեղեկացվել է հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը նրան ուղարկելու միջոցով⁷: Հենց այդ հայցից պաշտպանվելու իրավունքի պաշտպանության իրականացման համար դատարանը պետք է ապահովի ողջամիտ պայմաններ: Հետևաբար, եթե դատարանը բավարարում է հայցի առարկայի և (կամ) հիմքի փոփոխությունը թույլատրելու մասին հայցվորի միջնորդությունը, ինչի մասին պատասխանողն անտեղյակ է, տվյալ դա-

⁷ Ст' у «Комментарий к гражданскому процессуальному кодексу Российской Федерации (постатейный)». М., 2014, էջ 441:

տական նիստում հեռակա դատաքննություն կիրառվել չի կարող (254 հոդվ., մաս 3): Հայցի առարկան և հիմքը կամ դրանցից յուրաքանչյուրը փոփոխելու վերաբերյալ հայցվորի միջնորդությունը բավարարելու դեպքում դատարանը նախնական դատական նիստը պետք է հետաձգի՝ պատասխանողին տրամադրելով փոփոխված հայցադիմումի վերաբերյալ հայցադիմումի պատասխան ներկայացնելու ողջամիտ ժամկետ (128 հոդվ., մաս 8):

Բնականաբար, փոփոխված հայցադիմումի վերաբերյալ հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետն անցնելուց հետո նշանակված դատական նիստին չներկայանալու և հեռակա դատաքննություն կիրառելու մյուս պայմանների առկայության դեպքում դատարանը կարող է գործը քննել քննարկվող վարույթի կարգով:

5) ***Հեռակա դատաքննություն կիրառվել չի կարող, եթե դատարանը վարույթ է ընդունել պատասխանողի ներկայացրած հակընդդեմ հայցը կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձի հայցը*** (254 հոդվ., մաս 4): Տվյալ սահմանափակումը պայմանավորված է հեռակա դատաքննության պարզեցված բնույթով: Հակընդդեմ հայցը և վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձի հայցը վարույթ ընդունվելու դեպքում գործը բարդանում է, դատարանը ստիպված է լինում մեկ վարույթի շրջանակներում քննել երկու (կամ երեք) թեև փոխկապակցված, սակայն որոշակի առումով ինքնուրույն հայցեր, որոնց քննությունը հեռակա կարգով անհնար է: Չէ՞ որ նման դեպքերում հեռակա դատաքննություն կիրառելու համար դատարանը պետք է ստանա թե՛ սկզբնական հայցվորի, թե՛ հակընդդեմ պատասխանողի և թե՛ երրորդ անձի համաձայնությունը, մինչդեռ նրանցից որևէ մեկի չներկայանալու դեպքում նման համաձայնություն ստացվել չի կարող:

Հեռակա դատաքննության կարգը: Հեռակա դատաքննություն կիրառելու մասին դատարանը կայացնում է ***արձանագրային որոշում*** (255 հոդվ., մաս 1): Նախագիծը չի նախատեսում նախնական նիստից դուրս նման որոշում կայացնելու հնարավորություն: Հեռակա դատաքննություն կիրառելու մասին որոշումը կարող է կայացվել այն նախնական նիստում, որին պատասխանող կողմը չի ներկայացել և չներկայանալու պատճառների մասին չի տեղեկացրել դատարանին օրենքով նախատեսված միջնորդություններից որևէ մեկը ներկայացնելու միջոցով: Տվյալ նիստում հեռակա դատաքննություն կիրառելու մասին որոշում չկայացնելու դեպքում նման որոշում կայացնելու հնարավորությունը սպառվում է:

Նախագծի 255 հոդվածի 1-ին մասի բովանդակությունից բխում է, որ նախքան հեռակա դատաքննության մասին որոշում կայացնելը դատարանը պետք է ըստ անհրաժեշտության կատարի 153 հոդվածով

նախատեսված նախապատրաստական գործողությունները, օրինակ՝ հայցվորի հետ քննարկի հայցի առարկան և հիմքը, վիճելի իրավահարաբերության բնույթը, կիրառելի իրավական նորմերը, պատասխանողի առարկությունների փաստական և իրավական հիմքերը, գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը և այլն: Տվյալ պահանջի կատարումը թույլ կտա նախքան հեռակա դատաքննության անցնելը վեր հանել նման կարգով գործը քննելու անհնարի-նությունը կամ աննպատակահարմարությունը: Չէ՞ որ, օրինակ, գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը և ապացուցման պարտականության հարցերը քննարկելու արդյունքում հայցվորի մոտ կարող է ի հայտ գալ նոր ապացույցներ կամ նոր միջնորդություններ ներկայացնելու կամ հայցը փոփոխելու անհրաժեշտություն, վիճելի իրավահարաբերության բնույթը և դատավարության մասնակիցների կազմը քննարկելիս դատարանը կարող է հետևության գալ, որ անհրաժեշտ է գործի քննությանը ներգրավել երրորդ անձ և այլն:

Հեռակա դատաքննություն կիրառելու մասին արձանագրային որոշումը կայացնելուց անմիջապես հետո դատարանը ձեռնամուխ է լինում պատասխանողի բացակայությամբ գործի դատաքննությանը: Նշվածը ենթադրում է, որ դատարանը չի կրում դատաքննություն սկսելու մասին պատասխանողին ծանուցելու պարտականություն: Անցումը նախնական նիստից դատաքննության կատարվում է նույն նիստում: Ընդ որում, գործի դատաքննությունը սկզբունքորեն կարող է ավարտվել նույն օրը:

Նախագիծը չի անդրադառնում այն հարցին, թե պարտավոր է արդյոք դատարանը ծանուցել պատասխանողին դատական նիստի ժամանակի և վայրի մասին այն դեպքերում, երբ չի ավարտում գործի դատաքննությունը հեռակա դատաքննություն կիրառելու մասին որոշում կայացնելու օրը և հետաձգում է դատական նիստը: Կարծում ենք, որ այդ հարցին պետք է տալ դրական պատասխան, քանի որ դատական նիստի ժամանակի և վայրի մասին չտեղեկացված գործին մասնակցող անձի բացակայությամբ գործը քննելը դատական ակտն անվերապահորեն բեկանելու հիմք է (324 հոդվ., մաս 2, կետ 2): Պետք է նկատի ունենալ, որ թեև նախնական նիստին չներկայանալը հեռակա դատաքննություն կիրառելու հիմք է, այն չի բացառում պատասխանողի՝ հաջորդ նիստերին ներկայանալու և հայցի դեմ պաշտպանվելու իրավունքը: Այդ մասին վկայում է նաև Նախագծի 256 հոդվածի 1-ին մասի բովանդակությունը, որից ուղղակիորեն բխում է, որ պատասխանողը հեռակա դատաքննության կարգով գործի քննության ընթացքում կարող է ներկայացնել նոր ապացույցներ՝ դրանք թույլատրելու միջնորդությամբ, ինչպես նաև ապացույցներ ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ, որոնք բավարարելու դեպքում դատարանը պետք է դա-

դարեցնի հեռակա դատաքննությունը և գործը քննի ընդհանուր կարգով:

Հեռակա դատաքննության կարգով գործի ըստ էության քննությունը կատարվում է ընդհանուր հայցային վարույթի կանոնների պահպանմամբ (255 հոդվ., մաս 1): Հեռակա դատաքննության ընթացքում դատարանի և գործին մասնակցող անձանց գործողությունները սկզբունքորեն չեն տարբերվում ընդհանուր կարգով դատաքննության ժամանակ կատարվող գործողություններից: Վարույթը հեռակա բնույթ ունի միայն դատական նիստին չներկայացած պատասխանողի համար⁸:

Հետևելով Անդրազգային սկզբունքների 15.3 կետի պահանջներին՝ մայրցամաքային իրավական համակարգի զարգացած երկրների օրինակով Նախագծով սահմանվել է. «Հեռակա դատաքննության կարգով գործի ըստ էության քննության ընթացքում դատարանն ընդհանուր հիմունքներով հետազոտում է գործին մասնակցող անձանց կողմից մինչև հեռակա դատաքննություն կիրառելու մասին որոշում կայացնելը պատասխանողի առջև բացահայտված ապացույցները՝ հաշվի առնելով նաև հայցադիմումի պատասխանում արտահայտված դիրքորոշումը» (255 հոդվ., մաս 2): Այլ կերպ ասած՝ դատարանը դատական նիստում գործին մասնակցող ներկայացած անձանց և նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ բանավորության, անմիջականության, մրցակցության և իրավահավասարության սկզբունքների պահպանմամբ պետք է հետազոտի գործ հարուցելու և այն դատական քննության նախապատրաստելու ժամանակ գործին մասնակցող անձանց, այդ թվում՝ պատասխանողի ներկայացրած ապացույցները, հաշվի առնի նրանց փաստարկները, առարկությունները և իրավական դիրքորոշումը:

Գործի քննությունն ավարտելը և հեռակա դատաքննության կիրառառումը դադարեցնելը: Ապացույցները հետազոտելուց հետո նախագահողը, ավարտելով գործի դատաքննությունը, հայտարարում է վերջնական դատական ակտի հրապարակման ժամանակը և վայրը: Քանի որ հեռակա դատաքննության կարգով գործի ըստ էության քննությունը կատարվում է ընդհանուր հայցային վարույթի կանոնների պահպանմամբ, ապացույցները հետազոտելուց հետո նախագահողը նախքան գործի քննությունն ավարտելու մասին հայտարարելը գործին մասնակցող անձանց պետք է հարցնի, թե նրանք արդյոք չեն ցանկանում ներկայացնել լրացուցիչ նյութեր՝ դրանք հետազոտելու միջնորդությամբ (163 հոդվ., մաս 1): Նախագահողը գործի դատաքննությունը պետք է ավարտի միայն նման միջնորդությունների բացակայության դեպքում:

Քանի որ հեռակա դատաքննություն կիրառելու դեպքում դատա-

⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 442:

րանը չի կայացնում ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում, ուստի քննարկվող վարույթում չեն գործում հայցադիմումի պատասխան ներկայացնելու, հայցը փոփոխելու, ապացույցներ, դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելու, նոր նյութափրավական փաստեր վկայակոչելու, հակընդդեմ պահանջներ ներկայացնելու, երրորդ անձանց վարույթ մտնելու ժամանակային սահմանափակումները, որոնք նախատեսված են ընդհանուր հայցային վարույթում (128 հոդվ., մաս 7, 155 հոդվ., մաս 1, 59 հոդվ., մաս 3, 156 հոդվ., 129 հոդվ., մաս 1, 34 հոդվ., մաս 1): Հետևում է, որ գործին մասնակցող անձինք նշված գործողությունները կարող են կատարել նաև հեռակա դատաքննության կարգով գործի քննության ընթացքում մինչև գործի դատաքննությունն ավարտելու մասին հայտարարելը⁹:

Նշվածը հաշվի առնելով՝ Նախագիծը նախատեսում է հեռակա դատաքննությունը դադարեցնելու հիմքերը և դատավարական կարգը: Մասնավորապես սահմանվում է, որ դատարանը որոշում է կայացնում հեռակա դատաքննության կիրառումը դադարեցնելու և գործի քննությունն ընդհանուր կարգով իրականացնելու մասին, եթե՝

1) գործը հեռակա դատաքննության կարգով քննելու ընթացքում գործին մասնակցող անձը ներկայացրել է նոր ապացույց այն թույլատրելու միջնորդությամբ կամ նոր ապացույց ձեռք բերելուն ուղղված միջնորդություն, և այդ միջնորդությունը դատարանը բավարարել է.

2) գործը հեռակա դատաքննության կարգով քննելու ընթացքում ի հայտ են եկել այլ հանգամանքներ, որոնք պարզելու համար անհրաժեշտ է գործի քննությունն անցկացնել ընդհանուր կարգով (256 հոդվ., մաս 1):

Դատաքննության կիրառումը դադարեցնելու և գործի քննությունն ընդհանուր կարգով իրականացնելու մասին որոշումը կայացնելու դեպքում դատարանը վերսկսում է նախնական դատական նիստը: Նշված որոշումը՝ նախնական դատական նիստի ժամանակի և վայրի մասին նշումով, եռօրյա ժամկետում պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ ուղարկվում է գործին մասնակցող անձանց (256 հոդվ., մաս 2, 3):

Վերջնական դատական ակտը: Նախագծի 257 հոդվածի համաձայն՝ հեռակա դատաքննության կարգով կայացվող վերջնական դատական ակտի վրա տարածվում են Օրենսգրքի ընդհանուր կանոնները: Թեպետ հեռակա դատաքննությունը պարզեցված է, բայց քննարկվող վարույթի կարգով կայացվող վերջնական դատական ակտը պետք է բավարարի լիարժեք դատաքննության հիման վրա կայացված վերջ-

⁹ Ուշագրավ է, որ Նախագծում տեղ գտած ընդհանուր կանոնի համաձայն՝ գործի դատաքննությունը ավարտվելուց հետո մինչև վճռի հրապարակումը գործին մասնակցող անձինք չեն կարող ներկայացնել միջնորդություններ: Այդ ժամանակահատվածում ներկայացված միջնորդությունները ենթակա չեն քննարկման (163 հոդվ., մաս 2):

նական դատական ակտին ներկայացվող բոլոր պահանջները (լինի օրինական, հիմնավորված, պատճառաբանված և այլն): Ընդհանուր կանոնները տարածվում են նաև հեռակա դատաքննության կարգով վերջնական դատական ակտը կայացնելու, հրապարակելու, գործին մասնակցող անձանց հանձնելու (ուղարկելու) և օրինական ուժի մեջ մտնելու վրա:

Պետք է նկատի ունենալ, որ հեռակա դատաքննության կարգով վճռի կայացումն ամենևին էլ չի նսեմացնում այս վճռի՝ որպես արդարադատության ակտի նշանակությունը: Այն օժտվում է օրինական ուժի մեջ մտած վճռի բոլոր հատկանիշներով՝ անհերքելիությամբ, բացառիկությամբ, պարտադիրությամբ, նախադատելիությամբ և կատարելիությամբ¹⁰:

Հեռակա դատաքննության կարգով կայացված վերջնական ակտի բողոքարկումը: Անդրազգային սկզբունքների 15.4 կետի համաձայն՝ հեռակա (դեֆոլտային) վճիռը ենթակա է բողոքարկման կամ անվավեր ճանաչման: Սկզբունքներին կից մեկնաբանություններում նշվում է, որ «դատավարության մասին ազգային օրենքը պետք է նախատեսի կանոններ, որոնք թույլ կտան կողմերին բողոքարկել վճիռը վերադասատյաններում կամ վիճարկել վճիռն այն կայացրած դատարանում, եթե այդ վճիռը կայացվել է առանց պահպանելու դեֆոլտը կարգավորող կանոնները» (կետ P-15F): Ընդ որում, սահմանվում է սկզբունք, ըստ որի՝ «այն կողմը, որի դեմ դեֆոլտի վճիռ է կայացվել, պետք է իրավունք ունենա ներկայացնելու ապացույց, որ ծանուցումը բացակայում էր, կամ ներկայացնելու որևէ այլ պատշաճ պատճառաբանություն» (P-15G):

Հեռակա դատաքննության վարույթն էլ ավելի պարզեցնելու և հնարավոր դատական սխալներն ու չարաշահումները բացառելու նկատառումներից ելնելով՝ Նախագիծը մշակելիս որոշում է կայացվել հրաժարվել եվրոպական որոշ երկրների և ՌԴ-ի օրենսդրություններով նախատեսված՝ վճիռն այն կայացնող դատարանի կողմից պատասխանողի միջնորդությամբ վերացնելու հնարավորությունից: Փոխարենը, ի լրումն դատական ակտերի բեկանման այլ հիմքերի, Նախագիծով նախատեսվել է, որ չծանուցված պատասխանողի բացակայության պայմաններում քննված գործով կայացված վճիռը ենթակա է բեկանման (324 հոդվ., մաս 2, կետ 2), իսկ եթե բողոք բերողի դիրքորոշումը հաստատող և վերաքննիչ դատարան ներկայացված ապացույցն առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ չի ներկայացվել գործին մասնակցող անձի կամքից անկախ հանգամանքներով (այն է՝ հարգելի պատճառներով), ապա վերաքննիչ դատարանը բեկանում է դատական ակտը և գործն ուղարկում է համապատասխան դատա-

¹⁰ Տե՛ս Ռ. Գ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 470:

բան՝ նոր քննության, եթե գտնուի է, որ ներկայացված ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար (335 հոդվ., մաս 2):

Կարծում ենք, որ նման կարգավորումը պարունակում է դատական նիստին հարգելի պատճառներով չներկայացած և վերջիններիս մասին դատարանին հայտնելու հնարավորությունից օբյեկտիվորեն զրկված պատասխանողի իրավունքների ապահովման գործուն երաշխիք:

Ամփոփելով շարադրվածը՝ կարելի է հետևություն անել, որ ՀՀ քաղաքացիական դատավարությունում քննարկվող ինստիտուտի ներդրումն անշուշտ դրական երևույթ է: Այն խախտված և վիճարկվող սուբյեկտիվ իրավունքների արդյունավետ պաշտպանության մասին սահմանադրական դրույթների իրացման կարևորագույն երաշխիքներից է, որը միևնույն ժամանակ հնարավորություն կտա բեռնաթափելու դատարանները՝ դրանց ազատելով քաղաքացիական վեճերը քննելու բարդ, ժամանակատար ու ծախսատար դատավարական ձևից, ուժեղացնելու իրավունքի նախականիչ գործառույթը, իրավունքի սուբյեկտների մեջ դաստիարակելու իրենց վրա դրված դատավարական պարտավորությունները ժամանակին կատարելու պատասխանատվություն:

Բանալի բառեր – *արդարադատության արդյունավետություն, դատարանների ծանրաբեռնվածություն, գործի նախապատրաստում դատաքննության, պարզեցված ընթացակարգեր, հեռակա դատաքննություն*

СЕРГЕЙ МЕГРЯН – Заочное производство в проекте гражданского процессуального кодекса РА. – В статье рассматривается институт заочного производства, предусмотренный в проекте ГПК Армении. Проанализированы сущность и основные особенности данного вида производства, его основные преимущества и роль с точки зрения снижения судебной нагрузки, оптимизации рассмотрения и разрешения гражданских дел и повышения эффективности правосудия. На основе доктринальных подходов к основным особенностям заочного производства, а также транснациональных стандартов гражданского процесса и опыта зарубежных стран рассмотрены вопросы, касающиеся применения заочного производства, особенности процессуального порядка рассмотрения и разрешения гражданского дела. Кроме того, в статье проанализирован процессуальный порядок обжалования заочного решения суда. Сформулированы и обоснованы замечания и предложения по усовершенствованию заочного производства.

Процедуру заочного производства, предусмотренную проектом ГПК РА, можно считать удачной и соответствующей международным стандартам. Она существенно снизит судебную нагрузку, сократит временные и финансовые затраты лиц, участвующих в деле, ускорит получение судебной защиты и в целом реализацию важнейших задач судопроизводства – процессуальной экономии и оптимизации рассмотрения и разрешения гражданских дел.

Ключевые слова: *эффективность правосудия, судебная нагрузка, подготовка дела к судебному рассмотрению, упрощённые процедуры, заочное производство*

SERGEY MEGHRYAN – *Default Judgment in the Draft Civil Procedural Code of the RA.* – The institution of default judgment (proceedings in absentia) envisaged in the draft Civil Procedural Code of the Republic of Armenia is discussed in the article presented. The essence and key features of the judgment mentioned, its main advantages and the role in terms of reducing court load, optimization of hearings, settlement of civil cases and enhancing the efficiency of justice are analyzed.

Based on doctrinal approaches on the peculiarities of considering cases in default judgment as well as analysis of transnational standards of civil procedure and foreign practice the author has conducted detailed study on the grounds of applying default judgment, the circumstances excluding consideration of cases in default judgment and the peculiarities of the procedural order of consideration and settlement of civil cases. Along with this, the article scrutinizes the procedural order of challenging the default judgment.

Within the article the author has formulated and substantiated a range of suggestions and remarks aimed at amending default judgment.

The conclusion is drawn up that the default judgment envisaged in the draft Civil Procedural Code of RA should be considered as successful and in line with transnational standards of settlement of cases through the mentioned institution. In the author's opinion, it may facilitate the considerably reduction of the court load, elimination of time and financial expenses of persons involved in the case, expedient granting of judicial protection and realization of the most important tasks of litigation in general – procedural economy and optimization of consideration and settlement of civil cases.

Key words: *efficiency of justice, court load, preparation of the case for court hearing, simplified procedure, default judgment*

**ԴԱՏԱՎՈՐԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԸ
ՆՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՈՎ ՎԵՐԱՆԱՅԵԼՈՒ
ՔԱՂԱՔԱՑԻԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՔ**

ՎԱՅԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Քաղաքացիական շրջանառության մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի լիարժեք դատական պաշտպանությունն առաջին հերթին պայմանավորված է դատական իշխանության՝ որպես արդարադատության իրականացման ինստիտուցիոնալ-գործառնությային համակարգի, ինչպես նաև դատավորի՝ որպես դատական իշխանության անմիջական և միակ կրողի¹, համապատասխանաբար՝ արդարադատություն իրականացնելու իրավասությամբ օժտված անձի² գործունեության արդյունավետությամբ: Ընդ որում, դատական իշխանության լիարժեք և արդյունավետ գործառնությունը եթադրում է ՀՀ իրավական համակարգում կազմակերպարավական այնպիսի երաշխիքների ամրագրում, որոնք առավելագույնս ուղղված կլինեն դատարանների և դատավորների սահմանադրաիրավական կարգավիճակից բխող խնդիրների իրացմանը, որպիսի պայմաններում կապահովվեն արդարադատության իրականացման հիմնական որակական հատկանիշները, դատական համակարգի անկախությունը, այդ թվում՝ դատավորի սոցիալ-իրավական պաշտպանվածությունը: Այս հիմնադրույթների կենսագործումն ապահովող իրական և անհրաժեշտ օրենսդրական երաշխիքների բացակայությունը դատարանի անկախության սկզբունքը կվերածի ձևական իրողության, և այդպես էլ այն կյանքի չի կոչվի³: ՀՀ վճռաբեկ դատարանը հատուկ ընդգծել է, որ դատավորի անկախությունը, լինելով վերջինիս սահմանադրաիրավական կարգավիճակի բաղկացուցիչ տարր, կոչված է ապահովելու դատական իշխանության ինքնուրույնությունը. այն հանրային շահերի, այդ թվում՝ արդարադատության շահի կարևորագույն նախապայման

¹ Դատավորի այդպիսի բնորոշում է տրվել ՀՀ սահմանադրական դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 20-ի ՄԴՈ-647 որոշմամբ (ՀՀՊՏ 2006.11.01/56(511)), (11-րդ կետ):

² ՀՀ դատական օրենսգրքի (ՀՀՊՏ 2007.04.18/20(544)) 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր դատավոր օժտված է արդարադատություն իրականացնելու իրավասությամբ:

³ Տե՛ս «Դատավորի ձեռնարկ», գիտագործնական վերլուծություն (հեղինակային խումբ), Եր., 2010, էջ 22:

Է⁴: Հարկ է նշել նաև, որ քննարկվող հիմնադրույթները, բխելով միջազգային իրավական փաստաթղթերից, ստացել են սահմանադրական ձևակերպում (ՀՀ Սահմանադրության 94 և 97 հոդվածներ) և կանխորոշել են ազգային օրենսդրության զարգացման հիմնական միտումներն ու ուղղությունները: Այս առումով հատկապես կարևորվում են «Դատավորների կարգավիճակի մասին» 1998 թվականի հուլիսի 10-ի եվրոպական խարտիան և Եվրոպական խարտիայի պարզաբանման հուշագիրը, ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից 1985 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 40/32 և 1985 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 40/46 բանաձևերով հաստատված՝ «Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքները» և դրա հավելվածը՝ ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից թիվ 2200A(XXI) բանաձևով հաստատված «Դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքները», Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 1994 թվականի հոկտեմբերի 13-ի «Դատավորների անկախության, արդյունավետության ու դերի մասին» թիվ R(94)12 և 2010 թվականի նոյեմբերի 17-ի՝ «Դատավորների անկախության, գործունեության արդյունավետության և պատասխանատվության մասին» թիվ CM/Rec(2010)12 հանձնարարականները, ԵԱՀԿ/ԺՄԻԳԻ՝ «Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում, Կենտրոնական Ասիայում դատական անկախության վերաբերյալ Կիևյան հանձնարարականները»⁵, Վենետիկի հանձնաժողովի մի շարք եզրակացություններ ու զեկույցներ⁶ և այլն:

Դատական իշխանության արդյունավետ գործառության և դատավորի անկախության իրավական երաշխիքների ապահովման հիմնախնդիրները թե՛ իրավակիրառ, թե՛ զուտ գիտական առումներով միշտ էլ իրավաբան գիտնականների, վերլուծաբանների ուշադրության կենտրոնում են գտնվել, որպիսի պայմաններում դատավորների անկախության ապահովման սահմանադրաիրավական խնդրի հետ մեկտեղ քննարկվել են նրանց պատասխանատվության ենթարկելու հարցերը՝ դրանք դիտարկելով իրավական փոխկապվածության մեջ⁷: Սա-

⁴ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10 որոշումը, կետ 34:

⁵ Տե՛ս <http://www.osce.org/ru/odihr/73488?download=true> կայքում:

⁶ Տե՛ս [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-JD\(2009\)001-rus](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-JD(2009)001-rus) կայքում և այլն:

⁷ Տե՛ս **Գ. Ղազինյան, Ա. Հովհաննիսյան**, Նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտման հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելը և դրա իրավական հետևանքները, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», 2015, № 1 (16), էջ 13-25, **Хачатурян Д. М.** Независимость судей в Республике Армения: судоустройственные и уголовно-процессуальные гарантии. Автореферат дисс.... уч. ст. канд. юрид. наук. Ер., 2000, **Ս. Ռ. Մարաբջան**, Դատական ակտերի վերանայման հնարավորությունը դատավորի կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Արդարադատության խորհրդի որոշման հիման վրա // Դատական իշխանություն, թիվ 3/140, մարտ 2011, էջ 29-30, **Գ. Մուղնեցյան, Տ. Ավետիսյան**, Դատավորի կարգապահական պատասխանատվության սահմանադրաիրավական բնույթը, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», 2016, № 3:

կայն կատարված հետազոտությունները հիմնականում միտված են եղել Արդարադատության խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի և պայմանների, ինչպես նաև այս ինստիտուտի սահմանադրականության հարցը որոշելուն, այդ թվում՝ խնդրո առարկայի իրավակարգավորմանը վերաբերող միջազգային փորձի ուսումնասիրությանը: Ընդ որում, հեղինակները հանգել են տարբեր՝ երբեմն իրար հակասող հետևությունների: Մասնավորապես, մի դեպքում նշվել է, որ Արդարադատության խորհրդի (այսուհետ՝ նաև ԱԽ)՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործառույթի և դրա իրացման հետևանքով ձևավորված գործնական հարաբերությունների համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ ԱԽ-ի դերը ինստիտուցիոնալ առումով ճիշտ չի ընկալվում: Մասնավորապես՝ օրենսդրի կողմից ԱԽ-ի դերը դատական օրենսգրքով որոշակիորեն հեռացվել է ԱԽ-ի սահմանադրաիրավական դերից: Դատական օրենսգրքի դրույթները գործնականում իրացնելիս որոշ դեպքերում ԱԽ-ն փաստացի դառնում է դատական ատյան, որի որոշումները, դրանցում նյութական և դատավարական նորմերի վերաբերյալ տեղ գտած մեկնաբանությունները և դիրքորոշումները կաշկանդում են դատավորներին: Մինչդեռ վերջինիս սահմանադրաիրավական գործառույթները ԱԽ-ին վերագրում են բոլորովին այլ էություն, և ստեղծված իրավիճակը ուղղակիորեն չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 91 հոդվածին⁸:

Մյուս դեպքում դատավորների կարգավիճակի իրավակարգավորման միջազգային փորձի և կարգապահական պատասխանատվության ինստիտուտի սահմանադրաիրավական առանձնահատկությունների ուսումնասիրությունից⁹ հեղինակները հանգել են եզրակացության, որ պետք է բացառել նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտման հիմքով դատավորին ԱԽ-ի կողմից կարգապահական պատասխանատվության ենթարկելը: Հակառակ դեպքում օրենսդրական նման կարգավորումը կասկածի տակ է դնում դատական ամբողջ համակարգի արդյունավետությունը՝ անվստահություն սերմանելով այդ համակարգի առանձին ատյանների կողմից իրենց գործառույթները պատշաճ իրականացնելու նկատմամբ: ՀՀ արդարադատության խորհուրդը կկարողանա իրացնել վերը նշված գոր-

⁸ Տե՛ս **Գ. Մուղնեցյան, Տ. Ավետիսյան**, նշվ. աշխ.:

⁹ Տե՛ս Բսպանիայի Թագավորության կենտրոնական դատական խորհրդի կարգավիճակի և լիազորությունների վերլուծություն, http://www.poderjudicial.es/cgpi/es/Poder_Judicial/Consejo_General_del_Poder_Judicial/Informacion_Institucional/Que_es_el_CGPI/Mision, Ֆրանսիայի Հանրապետության դատական օրենսգրքի 259.15 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի և Բարձրագույն խորհրդի կարգավիճակի վերլուծություն, http://www.ejustice.just.fgov.be/cgi_loi/change_lg.pl?language=fr&la=F&table_name=loi&cn=1967101002, Մոլդովայի Հանրապետության սահմանադրական դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 28 որոշումը, կետ 7.4 http://www.constcourt.md/public/files/file/Actele%20Curtii/acte_2010/h_28.pdf:

ծառայողը միայն այն դեպքում, երբ վերադաս դատարանը ստորադաս դատարանի կայացրած անօրինական դատական ակտը բեկանի (փոփոխի), և դրանով հիմնավորվի, որ արդարադատություն իրականացնելիս դատավորի կողմից չարամտորեն կամ կոպիտ անփութությամբ թույլ է տրվել նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտում¹⁰:

Մեկ այլ դեպքում իրավաբանական գրականության մեջ հանդիպում ենք ներկայացված մոտեցումներին տրամագծորեն հակադիր եզրահանգման. դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ԱԽ-ի որոշումը կարող է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման իրական հիմք լինել¹¹: Նման պայմաններում այն դատական ակտը, որը կայացնելիս դատավորի կողմից թույլ է տրվել նյութական կամ դատավարական օրենքի ակնհայտ և կոպիտ խախտում, ոչ միայն չի կարող համապատասխանել օրինականության, հիմնավորվածության, արդարության չափանիշներին և ունենալ դաստիարակչական նշանակություն, այլև այդ ակտը օրինական ուժի մեջ թողնելու պայմաններում կարող է կասկածի տակ դնել արդարադատության համակարգի հեղինակությունը:

Մեր կարծիքով, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ինստիտուցիոնալ-գործառնության շրջանակներում հատկությունների և դրա իրավական հետևանքների վերլուծությունը անհրաժեշտ է վերաիմաստավորել բոլորովին այլ տեսանկյունից, այն է՝ ԱԽ-ի սահմանադրաիրավական կարգավիճակի և փաստացի դերի միջև հակասություններ բացահայտելու կամ նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ կամ կոպիտ խախտումներին գնահատական տալու իրավասության իրավաչափությունը գնահատելու փոխարեն ավելի ճիշտ կլիներ կենտրոնանալ դատական իշխանության սահմանադրական խնդրի, արդարադատության իրականացման վերջնական արդյունքների, մասնավորապես՝ սուբյեկտիվ իրավունքների ճիշտ և արդյունավետ պաշտպանության կառուցակարգերի ապահովման, այդ թվում՝ քննարկվող հիմքով դատական ակտը վերանայելու հնարավորությունն ապահովելու հիմնախնդրի վրա: Այս առումով ելակետային պետք է համարել հետևյալ հարցադրումների պարզաբանումը.

- որքանո՞վ են նույնանում վերաքննության կամ վճռաբեկության կարգով դատական ակտը վերանայելու և դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթի շրջանակներում նյութական կամ դատավարական օրենքի նորմի խախտումները հաստատելու առանձնահատկությունները,
- միջազգային-իրավական և սահմանադրական տեսանկյունները

¹⁰ Տե՛ս **Գ. Ղազիկյան, Ա. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 20:

¹¹ Տե՛ս **Ս. Ռ. Մարաբյան**, նշվ. աշխ., էջ 29-30:

րից իրավաչափ է արդյոք դատավորի կարգապահական պատասխանատվության վարույթի շրջանակներում նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումների դրսևորումներին իրավական գնահատական տալը,

- արդյոք նպատակահարմար է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը դիտարկել նոր հանգամանքների շրջանակներում, և ինչ նշանակություն կարող է ունենալ այն գործին մասնակցող անձանց սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի վերականգման գործում:

Ներկայացված հիմնախնդիրների բացահայտման համար էմպիրիկ-մեթոդաբանական հիմք են ՀՀ արդարադատության խորհրդի գործունեության վերլուծությունը, այս ինստիտուտի կարգավորմանն ուղղված սահմանադրական, միջազգային իրավական, ճյուղային օրենսդրությունը, ինչպես նաև խնդրո առարկայի վերլուծության վերաբերյալ վերը ներկայացված հիմնական տեսական ուղղությունները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՔԴՕ) 203.33 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նոր հանգամանքները դատական ակտի վերանայման հիմք են, եթե Արդարադատության խորհուրդն ընդունել է որոշում, որով տվյալ դատական ակտը կայացրած դատավորը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության ՀՀ դատական օրենսգրքի 153 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով, այն է՝ նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը: ՀՀ ՔԴՕ-ի 226-228 հոդվածների և ՀՀ դատական օրենսգրքի 153 հոդվածի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ վերաքննության կամ վճռաբեկության վարույթների շրջանակներում դատարանի հիմնական առաքելությունը դատական սխալի գործի ելքի վրա ազդող նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումներին իրավական գնահատական տալն ու այն վերացնելն է: Մասնավորապես, ՀՀ ՔԴՕ 227 հոդվածի 2-րդ և 228 հոդվածի 1-ին մասերի համաձայն՝ նյութական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման, իսկ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի ըստ էության ճիշտ վճիռը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով: Իրավասու դատարանն այս դեպքում առաջնահերթ պարզում է, թե նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը ինչ ազդեցություն ունի գործի ելքի վրա, կարող է այն հանգեցնել դատական ակտի բեկանման, կամ առկա է արդյոք դատական ակտի անվերապահ բեկանման հիմք, թե ոչ: Մինչդեռ կարգապահական վարույթի շրջանակներում Արդարադատության խորհրդի հիմնական խնդիրը ոչ թե դատական ակտի

բեկանման հանգեցնող նյութական կամ դատավարական օրենքի նորմի խախտումները բացահայտելն ու դրանց համարժեք իրավական գնահատական տալն է, այլ այդպիսի խախտումների ակնհայտ և կոպիտ լինելու հանգամանքը, դատավորի կողմից խախտումները չարամտորեն կամ կոպիտ անփութությամբ կատարելու փաստը պարզելն է: Ասվածը հիմնավորվում է ՀՀ դատական օրենսգրքի 153 հոդվածի 3-րդ մասի ձևակերպմամբ, որի համաձայն՝ դատական ակտը բեկանելը կամ փոփոխելն ինքնին չի առաջացնում այդ ակտը կայացրած դատավորի պատասխանատվություն: Հետևում է, որ նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը, որը հանգեցնում է դատական ակտի բեկանման, կարգապահական պատասխանատվություն կառաջացնի միայն այն դեպքում, երբ այդպիսի խախտումը թույլ է տրվել ակնհայտ կամ կոպտորեն: Բացի դրանից, կարգապահական վարույթի շրջանակներում իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումներին իրավական գնահատական տալու Արդարադատության խորհրդի պարտականությունն ընդհանրապես պետք չէ պայմանավորել վերադաս դատական աստիճանների կողմից դատական սխալի արձանագրման փաստով: Կարող են բազմաթիվ դեպքեր լինել, երբ դատական ակտի վերանայման վարույթի շրջանակներում, որոշակի սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոններով պայմանավորված, իրավունքի նորմի խախտումները դատարանի կողմից համարժեք իրավական գնահատականի ընդհանրապես չարժանանան: Նման պարագայում կարգապահական վարույթի շրջանակներում ԱԽ-ի կողմից իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումներն արձանագրելու և համարժեք գնահատականի արժանացնելու փաստը լրացուցիչ երաշխիք կամ իրավական կառուցակարգ է՝ ուղղված գործին մասնակցող անձանց արդար դատաքննության և դատական պաշտպանության իրավունքների իրացմանը, խախտված սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության ապահովմանը: Ընդ որում, ԱԽ-ի ընդունած որոշման հիման վրա դատական ակտի վերանայումն այս իմաստով պետք է դիտարկել գործին մասնակցող անձանց իրավունքների պաշտպանության իրավական կառուցակարգերի ապահովման շրջանակներում՝ այն պայմանավորելով հենց խորհրդի սահմանադրաիրավական խնդիրների ճիշտ ընկալման և իմաստավորման անհրաժեշտությամբ: Մասնավորապես, բացահայտելով ՀՀ արդարադատության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակն ու անդրադառնալով վերջինիս լիազորությունների հարցին, ՀՀ սահմանադրական դատարանը 2012 թվականի դեկտեմբերի 18-ի ՍԴՈ-1063 որոշմամբ ՀՀ արդարադատության խորհուրդը դիտում է որպես *դատական իշխանության համակարգի գործառական արդյունավետությունն ապահովելու հարցում իր սահմանադրական հստակ գործառույթներն ունեցող ու անկախ գործող ենթահամակարգ*: Դատական իշխանության համակարգի գործառական արդյու-

նավետությունն ապահովելու սահմանադրաիրավական խնդրի իմաստավորումն ակնհայտորեն երևում է նաև ՀՀ Սահմանադրության 173 հոդվածի նոր տեքստի բովանդակությունից, որի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը, որին վերապահված են նաև Արդարադատության խորհրդի լիազորությունները, անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը: Ակնհայտ է նաև, որ թե՛ իրավական և իրավակիրառ, թե՛ գիտական մակարդակներում դատավորի անկախության ապահովման բովանդակային բաղկացուցիչ է վերջինիս իրավական պատասխանատվության ինստիտուտը, որը համակցության մեջ դիտարկվում է դատարանի գործառության արդյունավետության, արդար դատաքննության իրավունքի ապահովման կառուցակարգերի շրջանակներում: Դատարանի սահմանադրաիրավական առաքելությունն արդարադատություն իրականացնելն է, որն ուղղված է խախտված կամ վիճարկվող սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ դատարանը՝ որպես արդարադատության իրականացման ինստիտուցիոնալ-գործառությային համակարգի սուբյեկտ, ինչպես նաև դատավորը՝ որպես արդարադատություն իրականացնելու բացառիկ իրավատույամբ օժտված անձ, շեղվում է իր սահմանադրական խնդրից, նման խախտումները համարժեք գնահատականի արժանացնելու և վերացնելու անհրաժեշտություն է առաջանում, որպիսին ապահովելու հիմնական իրավական գործիք է կարգապահական վարույթի շրջանակներում ընդունված որոշման հիման վրա նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման ինստիտուտը: Այլ կերպ ասած, եթե դատական իշխանության ոչ արդյունավետ և սխալ գործունեության հետևանքով քաղաքացիական շրջանառության մասնակցի սուբյեկտիվ իրավունքը մնում է անպաշտպան, կամ երբ իրավունքի խախտումները թույլ են տրվել հենց դատարանի կողմից, ապա ԱԽ-ի որոշման հիման վրա նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման հնարավորությունն այն լրացուցիչ իրավական երաշխիքն է, որն ուղղված է գործին մասնակցող անձանց իրավունքների պաշտպանությանը: Հակառակ պարագայում արդար դատաքննության և դատական պաշտպանության սուբյեկտիվ իրավունքներն ուղղակիորեն կդառնան անիրացվելի: Եթե ստորադաս դատական ատյանը թույլ է տվել ոչ իրավաչափ վարքագիծ, որի դրսևորումները դատական ակտի բողոքարկումով վերադաս դատական ատյանների կողմից չեն վերացվել, ապա այդպիսի վարքագծի իրավական հետևանքները գնահատելու և սուբյեկտիվ իրավունքները պաշտպանելու, արդարադատության շահերի վրա ունեցած բացասական ազդեցությունը և վերջնական նպատակների հետ համատեղելիությունը որոշելու անհրաժեշտությունն ուղղակիորեն հրամայական պահանջ է դառնում: *Հետևաբար, կարող ենք փաստել, որ կարգապահական վարույթի շրջանակներում*

նյութական կամ դատավարական օրենքի նորմի խախտումները գնահատելու գործընթացը կարևորվում է ոչ թե գործի էլքի վրա ազդեցության կամ դատական ակտի բեկանման հանգեցնելու տեսանկյունից, այլ հստակորեն ունի իրավունքի նորմի խախտումների որակական և բովանդակային նշանակությունը բացահայտելու նպատակ, որպիսի պայմաններում պարզ է դառնում դատավորի ոչ իրավաչափ վարքագծի ակնհայտ լինելու կամ կոպտության, դատարանի չարամտության կամ անփութության աստիճանը, ինչը հիմք է տալիս եզրահանգումներ անելու դատական ակտը կայացրած դատավորի պրոֆեսիոնալիզմի, բարոյաէթիկական հատկանիշների մասին:

Հարկ է նշել, որ արդարադատություն իրականացնելու իրավասությամբ չօժտված մարմնի կողմից դատական ակտի բովանդակության անդրադառնալու, իրավունքի նորմի խախտումները գնահատելու իրավագործության վերաբերյալ միատեսակ մոտեցում չի ձևավորվել ոչ միայն դատական իրավունքի տեսության մեջ, այլև զարգացած իրավական համակարգ ունեցող երկրների խնդրո առարկայի իրավակարգավորմանն ուղղված ճյուղային օրենսդրությամբ և միջազգային-իրավական փաստաթղթերում: Այսպես, Եվրոպական մի շարք երկրների (Բելգիայի Թագավորություն, Ֆրանսիայի Հանրապետություն, Իսպանիայի Թագավորություն և այլն) իրավական համակարգերում դատական խորհուրդների կողմից դատավորներին կամ դատարաններին օրենքի մեկնաբանության կամ կիրառման վերաբերյալ ցուցումներ տալու, դատական ակտերի բովանդակությունը ստուգելու օրենսդրական սահմանափակումներ և արգելքներ են գործում¹²: Սակայն այդ նույն օրենսդրական արգելքների դրսևորումները ևս տարբեր կերպ են մեկնաբանվում: Մասնավորապես, Կենտրոնական դատական խորհրդի կողմից դատարանին օրենքի մեկնաբանության և կիրառության վերաբերյալ ցուցում, հրահանգ, հրաման կամ կարգադրություն տալուց զերծ մնալը դեռևս չի նշանակում իրավունքի նորմի կոպիտ կամ ակնհայտ խախտումներին, ինչպես նաև դատական իշխանությունը հեղինակագրկող վարքագծին գնահատական տալու իրավագործության բացակայություն: Կամ Լիտվայի Հանրապետության «Դատարանների մասին» օրենքի 83 հոդվածի մեկնաբանություններից պարզ է դառնում, որ «Պատվի դատարանի» կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերից է դատավորի ոչ պրոֆեսիոնալ վարքագիծ դրսևորելը, որի շրջանակներում կարելի է դիտարկել կոպիտ անփութությամբ իրավունքի նորմի խախտումը: Կամ Եթե Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 1994 թվականի հոկ-

¹² Տե՛ս Բելգիայի Թագավորության, Իսպանիայի Թագավորության Կենտրոնական դատական խորհրդի կարգավիճակի և լիազորությունների և Ֆրանսիայի Հանրապետության դատական օրենսգրքի 259.15 հոդվածի մեկնաբանություններ, **Voermans W., Albers P.**, Councils for the Judiciary in EU countries, European Commission for the Efficiency of Justice (CEPEJ), February, 2003, http://www.coe.int/t/dghl/cooperation/cepej/textes/CouncilOfJusticeEurope_en.pdf

տեմբերի 13-ի՝ «Դատավորների անկախության, արդյունավետության ու դերի մասին» թիվ R(94)12 և 2010 թվականի նոյեմբերի 17-ի «Դատավորների անկախության, գործունեության արդյունավետության և պատասխանատվության մասին» թիվ CM/Rec(2010)12 հանձնարարականներով, Վենետիկի հանձնաժողովի՝ «Արդարադատության ապահովման համակարգերի արդյունավետությունը» զեկույցում տեղ գտած եզրակացություններով չի խրախուսվում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթի շրջանակներում դատական որոշումների բովանդակության ստուգումը, ապա ԵԱՀԿ/ԺՄԻԳԻ՝ «Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում, Կենտրոնական Ասիայում դատական անկախության վերաբերյալ Կիևյան հանձնարարականների» 25-րդ կետի համաձայն. «Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներով պետք է լուծվեն ենթադրյալ մասնագիտական խախտումների այն դեպքերը, որոնք կոպիտ են, աններելի և խարխլում են դատական իշխանության հեղինակությունը: Դատավորները չպետք է պատասխանատվության ենթարկվեն իրենց որոշումների կամ վճիռների բովանդակության, այդ թվում՝ տարբեր դատարանների կողմից իրավական նորմերի տարաբնույթ մեկնաբանության, դատական սխալների օրինակների կամ դատարանների քննադատության համար»: Հետևում է, որ Կիևյան հանձնարարականները չեն բացառում իրավական նորմի սխալ կիրառման հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը: Դատավորի աշխատանքը ենթադրում է իրավական նորմի մեկնաբանության, ինչպես նաև ներքին համոզման և մտավոր-տրամաբանական աշխատանքի որոշակի ինքնուրույնություն, որը չի կարելի սահմանափակել կամ դատավորին կաշկանդել կարգապահական վարույթի շրջանակներում կայացված որոշումներով: Սակայն եթե դատավորը քաղաքացիական գործ քննելիս սխալ է կիրառել իրավունքի նորմը՝ չի կիրառել այն օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը պետք է կիրառեր կամ կիրառել է այն օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտ, որը չպետք է կիրառեր, որի հետևանքով չեն պաշտպանվել քաղաքացիական շրջանառության մասնակցի սուբյեկտիվ իրավունքները, և խարխլվել է արդար դատաքննության կամ դատական պաշտպանության իրավունքը, ինչը վկայում է նաև դատավորի կողմից մասնագիտական պարտականություններն ակնհայտ և կոպտորեն խախտելու մասին, կարող է հանգեցնել կարգապահական պատասխանատվության¹³:

¹³ Խոսքը նաև այն դեպքերի մասին է, երբ դատարանը խախտում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված՝ քաղաքացիաիրավական նորմերի կիրառման կանոնները, մասնավորապես, եթե պետք է կիրառեր գործարար շրջանառության սովորույթ, օրենքի կամ իրավունքի անալոգիա, սակայն դա չի արել կամ արել է ոչ ճիշտ հաջորդականությամբ:

ՀՀ դատական օրենսդրության համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ ԱԽ-ին վերապահված են բոլոր այն իրավական ներգործության միջոցներն ու գործիքները, որոնք անհրաժեշտ են օրենքի նորմերի ակնհայտ կամ կոպիտ խախտումները հաստատելու և համարժեք իրավաբանական գնահատականի արժանացնելու համար: Այսպես, ՀՀ դատական օրենսգրքի 158 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը քննելիս Արդարադատության խորհուրդը գործում է որպես դատարան: Որպես դատարան գործելիս Արդարադատության խորհրդում գործերի քննության կարգի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի նորմերն այնքանով, որքանով դրանք իրենց էությանմբ կիրառելի են Արդարադատության խորհրդում գործի քննության նկատմամբ և չեն հակասում օրենսգրքի նորմերին: Այս առումով հատկանշական է ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումն առ այն, որ «գործում է որպես դատարան» եզրույթի առնչությամբ նկատի պետք է ունենալ Արդարադատության խորհրդի գործունեության կարգը, այլ ոչ թե նրա՝ որպես արդարադատություն իրականացնող դատարանի գործառական դերը¹⁴: ՀՀ սահմանադրական դատարանի այս դիրքորոշումը հիմք է հանդիսացել, որ ՀՀ դատական օրենսգրքի 153 հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված հիմքերով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավասությունը համարվի արդարադատություն իրականացնելու հակասահմանադրական իրավագործություն: Մեր կարծիքով, անհրաժեշտ է հստակ տարբերակել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթի շրջանակներում իրավունքի նորմերի խախտումները հաստատելու՝ ԱԽ-ի խնդրային և նպատակային ուղղվածությունը: Կարգապահական վարույթը միանշանակորեն արդարադատություն համարել չի կարելի. այս պարագայում վարույթն իրականացնող մարմնի խնդիրն արդարադատություն իրականացնելը և գործին մասնակցող անձանց սուբյեկտիվ իրավունքի անմիջական պաշտպանությունը չէ, այլ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը ստուգելը և համապատասխան որոշում կայացնելն է: ՀՀ օրենսդրությամբ հստակ սահմանված են ՀՀ դատական իշխանության համակարգի կողմից արդարադատություն իրականացնելու ինստիտուցիոնալ-գործառութային ձևերը, այն է՝ առաջին ատյանի դատարանները սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունն իրականացնում են քաղաքացիական, քրեական և վարչական գործերն ըստ էության քննելու և լուծելու, իսկ վերաքննիչ և վճռաբեկ ատյանները՝ դատական ակտի վերանայման արդյունքում դրա օրինա-

¹⁴ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2012 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ՍԴՈ-1063 որոշումը, կետ 6:

կանությունն ու հիմնավորվածությունը ստուգելու միջոցով: ԱԽ-ի որոշումն անմիջականորեն ուղղված չլինելով գործին մասնակցող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը՝ հիմք է, որպեսզի արդարադատություն իրականացնելու բացառիկ իրավագործությամբ օժտված սուբյեկտը՝ դատարանը, վերանայի դատավորի ակնհայտորեն ոչ իրավաչափ վարքագծի հետևանքով կայացված դատական ակտը և դատական սխալի վերացմանն ուղղված համարժեք դատավարական ներգործության միջոցներ կիրառի: Ընդ որում, այս հիմքով դատական ակտի վերանայումը դեռևս ինքնին չի ենթադրում դատական ակտի բեկանում կամ փոփոխություն, քանի որ վերադաս դատական ատյանը պետք է ամեն դեպքում գնահատի նոր հանգամանքի ազդեցությունը գործի ելքի վրա: Այսպես, ՀՀ ՔԴՕ-ի 204.38 հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ դատարանը կարող է չփոփոխել վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը, եթե ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ նոր հանգամանքներն ըստ էության չէին կարող ազդել գործի ելքի վրա¹⁵: Մասնավորապես, դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտում է համարվում դատավորի կողմից օրենքով չնախատեսված հայցի ապահովման միջոց ձեռնարկելու վերաբերյալ որոշում կայացնելը, որով խախտվել են պատասխանողի իրավունքներն ու օրինական շահերը: Սակայն ԱԽ-ի կողմից դատավորին այս հիմքով կարգապահական պատասխանատվության ենթարկելը չի կարող նոր հանգամանքով դատական ակտի վերանայման վարությամբ վճռի փոփոխման կամ բեկանման հանգեցնել, քանի որ բացակայում է գործի ելքի վրա բացասական ազդեցությունը¹⁶:

ՀՀ Սահմանադրության նոր տեքստում ևս ամրագրվել է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, ինչպես նաև Դատական օրենսգրքով սահմանված այլ դեպքերում Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան (հոդված 175-ի 2-րդ մաս), ինչը նշանակում է, որ կարգապահական վարույթը դատավորի կողմից արդարադատություն իրականաց-

¹⁵ ՀՀ սահմանադրական դատարանը 2011 թ. փետրվարի 25-ի ՍԴՈ-943, 28.09.2012 թ. ՍԴՈ-1049 և մի շարք այլ որոշումներով փաստել է, որ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայումը պետք է փաստի ուժով (ipso facto) հանգեցնի դատական ակտի բեկանմանը: Ինչ վերաբերում է իրավասու մարմնի լիազորություններին, ապա ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ պայմանավորված յուրաքանչյուր կոնկրետ գործի առանձնահատկություններով՝ տվյալ գործը կա մ կարող է ուղարկվել նոր քննության գործը քննած դատարան, կա մ դատական ակտը բեկանած դատարանը կարող է փոփոխել բեկանված ակտը, եթե հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս առանց նոր քննության կայացնելու նոր դատական ակտ:

¹⁶ Տե՛ս Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Հովհաննիսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Արդարադատության խորհրդի թիվ ԱԽ-21-Ո-18 գործի նյութերը:

նելու գործընթացում խախտումներ կատարելու, սահմանադրական պարտականությունները չկատարած կամ ոչ պատշաճ կատարած կամ լիազորությունները չարաշահած դատավորի նկատմամբ իրավական ներգործության միջոցներ կիրառելու՝ Սահմանադրությամբ նախատեսված ընթացակարգ է, որի հիման վրա կայացված որոշումը քաղաքացիական դատավարությունում առաջացնում է օրենքով կանխորոշված իրավական հետևանքներ:

ՀՀ ՔԴՕ 204. 33 հոդվածի 3-րդ մասը նոր հանգամանքով դատական ակտի վերանայման հիմք է համարում նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտման հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը: Նշված իրավանորմի բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս, որ որպես նոր հանգամանք գործին մասնակցող անձանց իրավունքների և պարտականությունների վրա ազդեցություն կամ ներգործություն կարող է ունենալ իրավունքի նորմի խախտման փաստը: Մինչդեռ թե՛ օրենսդրական, թե՛ տեսական մակարդակներում նշված հիմնախնդիրն անտեսված է: Մասնավորապես, Արդարադատության խորհրդի որոշումների ուսումնասիրությունից ոչ միայն ակնհայտ են դառնում դրանց պատճառաբանական մասերում առկա նույնաբովանդակ ձևակերպումների և վերլուծությունների առկայությունը, այլև Արդարադատության խորհրդի հայեցողության սահմանները, կարգապահական պատասխանատվության միջոցի ընտրությունը որոշելու կառուցակարգերի, չափորոշիչների բացակայությունը: Այս ամենի հիման վրա ԱԽ-ը կարգապահական վարույթի շրջանակներում հաստատելով նյութական կամ դատավարական օրենքի ակնհայտ և կոպիտ խախտման փաստը, որոշ դեպքերում դատավորին ենթարկել է կարգապահական պատասխանատվության՝ ընտրելով օրենքով նախատեսված պատասխանատվության կոնկրետ միջոցը, սակայն որոշ դեպքերում էլ բավարարվել է հարցի քննարկմամբ¹⁷: Խնդիր չունենալով եզրահանգումներ անելու նշված որոշումների իրավաչափության վերաբերյալ, հարկ ենք համարում նշել, որ օրենսդրորեն նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման հնարավորություն պետք է նախատեսել ոչ թե Արդարադատության խորհրդի՝ ՀՀ դատական օրենսգրքի 153 հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված հիմքերից որևէ մեկով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշման, այլ ԱԽ-ի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտման փաստը հաստատող ցանկացած որոշման ընդունման պարագայում:

¹⁷ Տե՛ս Արդարադատության խորհրդի 2009 թ. ապրիլի 23-ի ԱԽ-11-Ո-22, 2011 թ. հունիսի 24-ի՝ ԱԽ-13-Ո-17, 2015 թ. ապրիլի 13-ի՝ ԱԽ-13-Ո-15, 2015 թ. ապրիլի 13-ի՝ ԱԽ-13-Ո-16, 2015 թ. ապրիլի 13-ի՝ ԱԽ-13-Ո-17, 2015 թ. ապրիլի 13-ի՝ ԱԽ-13-Ո-18, 2016 թ. ԱԽ-21-Ո-18 և այլ որոշումներ:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք փաստել, որ ներկայիս իրավակարգավորման պարագայում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթը սահմանադրական օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգ է, որի շրջանակներում Արդարադատության խորհուրդը (Բարձրագույն դատական խորհուրդը) օժտված է նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումները հաստատելու՝ վերաքննության կամ վճռաբեկության վարույթներում դատական ակտի բեկանման կամ փոփոխման հանգեցնող իրավունքի նորմերի խախտումները գնահատելու իրավագործությունից ինստիտուցիոնալ-գործառությանին առումով տարբերվող խնդրային և ինքնուրույն սահմանադրաիրավական ուղղվածություն ունեցող իրավագործությամբ: Ընդ որում, ելնելով գործին մասնակցող անձանց արդար դատաքննության և դատական պաշտպանության իրավունքների լիարժեք իրացման անհրաժեշտությունից, նոր հանգամանքով դատական ակտի վերանայման հիմք պետք է համարել ոչ թե դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշում ընդունելու, այլև ԱԽ-ի կողմից նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը հաստատելու փաստը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33 հոդվածի 3-րդ մասում կատարելով համապատասխան փոփոխություն:

Բանալի բառեր - նոր հանգամանք, իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտում, կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշում, խախտման փաստի հաստատում, վերանայման հիմք, բեկանման հիմք

ВАГЕ ОГАННИСЯН – Решение о привлечении судьи к дисциплинарной ответственности как гражданско-процессуальное основание для пересмотра судебного акта по новому обстоятельству. – Полноценное и эффективное функционирование судебной власти предполагает закрепление таких гарантий в правовой системе, которые обеспечат реализацию задач, вытекающих из конституционно-правового статуса судов и судей. При этом следует обеспечить основные качественные параметры правосудия, независимость судебной системы, а также эффективную защиту прав и законных интересов участников гражданского процесса. В статье проанализированы возможные правовые последствия, возникающие в гражданском процессе в результате применения к судье средств правового воздействия. Такие средства применяются в силу нарушений, допущенных при отправлении правосудия. Кроме того, их можно применить к судье, не выполнившему или ненадлежащим образом исполнившему свои конституционные обязанности или злоупотребившему таковыми. Исходя из необходимости полноценной реализации прав на справедливый процесс и судебную защиту лиц, участвующих в деле, основанием для пересмотра судебного акта должно считаться не решение о привлечении судьи к дисциплинарной ответственности, а подтверждение Советом факта очевидного и грубого нарушения нормы материального или процессуального закона. Необходимо внести соответствующую поправку в п. 3 ст. 204.33 Гражданского процессуального кодекса РА.

Ключевые слова: *новое обстоятельство, очевидное и грубое нарушение нормы права, решение о привлечении к дисциплинарной ответственности, подтверждение факта нарушения, основание для пересмотра, основание для отмены*

VAHE HOVHANNISYAN – *The Decision to Bring a Judge to Disciplinary Responsibility as a Civil-Procedural Ground for the Review of Judicial Act due to New Circumstance.* – Complete and effective functioning of judicial power presumes securing of such guarantees in RA legal system, that are in their maximum intended to the realization of tasks arising from constitutional – legal status of courts and judges and will ensure the main qualitative parameters of justice administration, independence of judicial system, as well as effective protection of rights and legal interests of civil process participants.

The article discusses possible legal consequences arising in civil procedure as a result of a decision adopted in line with the procedure provided by Constitution in regard imposing legal sanctions towards a judge who either has committed violations during justice administration or not performed or improperly performed his/her constitutional obligations or abused them.

The author concludes, that based on the need of full realization of parties' rights to fair trial and judicial protection, the Council's acknowledgment of the fact of clear and grave breach of material or procedural legal norm instead of an adopted decision by the Council to bring a judge to disciplinary responsibility shall serve as the basis for revision of judicial act. It is proposed to amend part 3 of the article 204.22 of the RA Code of Civil Procedure accordingly.

Key words: *new circumstance, clear and grave violation of legal norm, decision to bring to disciplinary responsibility, acknowledgment of the fact of violation, ground for judicial review, ground for overruling*

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԲԱՆԿ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՎԱՀՐԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) արժեթղթերի փոխարկումը հիմնականում դասվում է բաժնետոմսերի տեղաբաշխման ձևերի շարքին: Սակայն որոշ դեպքերում արժեթղթերի փոխարկումը որպես գործիք է օգտագործվում նաև վերակազմակերպվող ընկերության արժեթղթերը նոր ստեղծվող կամ արդեն իսկ գոյություն ունեցող ընկերության բաժնետոմսերի կամ բաժնեմասերի փոխարկելիս, ինչպես նաև Ընկերության երկու կամ ավելի բաժնետոմսերը նույն տեսակի (դասի) մեկ նոր բաժնետոմսի (այսուհետ՝ բաժնետոմսերի կոնսոլիդացիա կամ համախմբում) կամ նույն տեսակի (դասի) երկու կամ ավելի բաժնետոմսերի (այսուհետ՝ բաժնետոմսերի բաժանում) փոխարկելիս:

Բաժնետոմսերի հետզման հանգեցնող բանաձևով արժեթղթերի կոնսոլիդացիայի իրականացումը (reverse stock split) զարգացած արժեթղթերի շուկա ունեցող երկրներում հիմնականում իրականացվում է այն դեպքում, երբ ֆոնդային բորսայում արժեթղթերի հրապարակային վաճառք իրականացնող կազմակերպությունը ցանկանում է լքել այդ հարթակը կամ ընդհակառակը՝ բորսայական առևտրի ընթացքում բաժնետոմսերի շուկայական գինը բորսայում սահմանված նվազագույն գնից նվազելու դեպքում ցանկանում է պահպանել բորսայում իր արժեթղթերի ցուցարկված լինելու հնարավորությունը¹: Հետխորհրդային պետություններում բաժնետոմսերի համախմբումը տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, «բացասական» բաժնետերերի կողմից ընկերության բաժնետոմսերի ձեռքբերման հնարավորության սահմանափակման², «զուգահեռ» ընկերության ստեղծման³ և այլ բաժնետերերի հետ ֆիդուցիար (վստահության վրա հիմնված) փոխհարաբերությունների

¹ Մանրամասն տե՛ս **Michael J. Lawson**, Reverse Stock Splits: The Fiduciary's Obligations under State Law, California Law Review, Volume 63, Issue 5, September 1975, էջ 1226-1249:

² Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Ганжуренко И. В., Костючек О. М., Рудык А. М., Сова С. К.** Структура собственности корпоративного предприятия, Одесса, 2007, էջ 94:

³ Տե՛ս **Могилевский С. Д.** Акционерные общества. М., 1998, էջ 156:

հաստատման⁴ հետ մեկտեղ՝ դասվում է հսկիչ փաթեթների ձևավորման մեխանիզմների թվին:

Հսկիչ փաթեթի ձևավորման ցանկացած մեխանիզմ, այդ թվում՝ բաժնետոմսերի կոնսոլիդացումը, որպես կանոն, պետք է իրականացվի ընկերության կառավարման և գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ առաջնորդվելով բացառապես ընկերության *(այլ ոչ թե ընկերության խոշոր բաժնետիրոջ կամ բաժնետերերի որոշակի խմբի)* բիզնես շահերով և բացառելով այդ նպատիկին հասնելու համար հնարավոր այլ գործիքների կիրառման հնարավորությունը: Բաժնետոմսերի կոնսոլիդացումը իր հերթին պետք է իրականացվի այնպես, որ ապահովվի ոչ միայն մատնանշված խնդիրների իրագործումը, այլև փոքրամասնություն կազմող բաժնետերերի շահերի պաշտպանությունը, չդառնա իրավունքի չարաշահման հնարավորություն ընձեռող օրենքով ամրագրված գործիք:

Ընդհանուր առմամբ, բաժնետերերի իրավունքների համակողմանի պաշտպանությունը տնտեսական հարաբերությունների զարգացման կարևորագույն նախադրյալներից է, և դրանց պաշտպանության արդյունավետ երաշխիքների բացակայությունը կորցնում է ընկերություններում ներդրումներ կատարելու գրավչությունը:

Տնտեսական գործունեության ընթացքում կորպորատիվ տիպի իրավաբանական անձի ընտրության պարագայում բախվում են բազմաթիվ անձանց շահեր, որոնց հավասարակշռմանն ու ապահովմանը պետք է ուղղված լինի տվյալ ոլորտը կարգավորող օրենսդրությունը: Օրինակ՝ բաժնետիրական ընկերությունում կարող են բախվել բաժնետերերի առանձին խմբերի, ընկերության պարտատերերի և բաժնետերերի, բաժնետերերի ու կառավարիչների, կառավարիչների և աշխատակիցների, ինչպես նաև այլ շահագրգիռ անձանց շահերը, որոնց հավասարակշռմանն ու ապահովմանը պետք է ուղղված լինի նաև այս խնդիրներին վերաբերող դատական պրակտիկան:

Հայաստանի Հանրապետությունում բաժնետիրական ընկերությունների⁵ քանակի շեշտակի ավելացմանը նպաստեց պետական գույքի սեփականաշնորհումը, որի հետևանքով մասնակի անհատույց սեփականաշնորհված ընկերությունների խոշոր բաժնետերերը ձեռնամուխ եղան փոքրամասնություն կազմող բաժնետերերից ձերբազատվե-

⁴ Մանրամասն տե՛ս **Ионцев М. Г.** Акционерные общества, М., 2002, էջ 66:

⁵ Մեր ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Հայաստանի Հանրապետությունում դասական իմաստով բաժնետիրական ընկերություններ, օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների բերումով, գոյություն չունեն: Մասնավորապես, պետական գույքի մասնավորեցման հետևանքով բաժնետիրական ընկերությունները ստեղծվեցին ոչ թե կապիտալի կենտրոնացման, այլ ապակենտրոնացման նպատակով, իսկ այլ եղանակով ստեղծված բաժնետիրական ընկերությունները հանդես են գալիս հիմնականում փակ բաժնետիրական ընկերությունների ձևով կամ ստեղծվել են մի քանի անձանց ներդրումների հաշվին:

լու գործընթացին: Այդ նպատակին հասնելու համար խոշոր բաժնետերերն օգտագործում էին (են) «Բաժնետիրական ընկերությունների մասին» (ուժը կորցրած) և ՀՀ գործող օրենքներով⁶ ընձեռված բոլոր հնարավորությունները, որոնցից մեկն էլ բաժնետոմսերի համախմբումն է⁷:

Բաժնետիրական հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության և դատական պրակտիկայի ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ օրենսդիրն ընտրել է խոշոր բաժնետերերի իրավունքների պաշտպանությանը նախապատվություն տալու քաղաքականություն, որի հետևանքով փոքրամասնությունն կազմող բաժնետերերը, ըստ էության, զրկվում են ընկերությունում կատարված, օրենսդրի տեսանկյունից փոքր, սակայն առանձին բաժնետերերի համար իրենց կյանքի ընթացքում ձևավորած խնայողությունները պաշտպանելու հնարավորությունից: Երբեմն փորձ է արվում խոշոր բաժնետերերի ու ընկերության շահերը նույնացնելու և դրանով հիմնավորելու խոշոր բաժնետերերին այնպիսի իրավունքների տրամադրումը, որպիսիք կարող են հանգեցնել բաժնետոմսերի փոքր փաթեթների տիրապետող բաժնետերերին նրանց կամքին հակառակ ընկերությունից դուրս մղելուն: Այս մոտեցումը կորպորատիվ հարաբերությունների զարգացման և Հայաստանի Հանրապետությունում ներդրումներ կատարելու կամ արդեն իսկ կատարված ներդրումների պաշտպանվածության տեսանկյունից, մեղմ ասած, անընդունելի է:

Բաժնետոմսերի համախմբման ինստիտուտը ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր, որոնց քննարկումն արդիական է թե՛ «սովորական» բաժնետիրական ընկերությունների և թե՛ բանկ հանդիսացող բաժնետիրական ընկերությունների առումով: Նշված ինդիքները փորձենք քննարկել 1994 թ. սեփականաշնորհված «Գալակտիկա» ԲԲԸ-ի օրինակով: Այս ընկերության բաժնետոմսերը տեղաբաշխված են 60 բաժնետերերի միջև: Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 450000000 դրամ և բաժանված է 450000 բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը 1000 դրամ անվանական արժեքով: Բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է սեփականաշնորհման արդյունքում, և այն դեկավարող կոլեկտիվին հաջողվել է սեփականաշնորհումից հետո ճիշտ օգտագործել ընկերությանն ընձեռված հնարավորությունները և իր գործունեության բնագավառում առաջատար դիրքեր գրավել: Բացի դրանից, ընկերությունը ժամանակ առ ժամանակ, հիմնական միջոցների վերագնահատման շնորհիվ, կանոնադրական կապիտալը մեծացրել է, և բաժնետոմսերի ամենափոքր փաթեթը գերազանցում է 300-ը: Մտանալով կայուն շահույթ՝ ընկերությունը բաժնետերերին պարբերաբար վճարում է շահութաբաժիններ, ուստի բաժնե-

⁶ ՀՀՄՏ 1996/9, 17.05.1996-06.12.2001, ՀՀՊՏ 25.09.2001:

⁷ Մանրամասն տե՛ս **Վ. Դ. Ավետիսյան**, Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2013, էջ 168-184:

տերերը որևէ ցանկություն չունեն օտարելու, փոխանակելու կամ նվիրելու իրենց պատկանող բաժնետոմսերը:

Այս իրավիճակում անհրաժեշտություն է առաջանում ձևավորելու բաժնետոմսերի փոքր փաթեթ, որն ընկերությունը ցանկանում է վաճառել ընկերության զարգացման հարցում շահագրգիռ և այդ նպատակին հասնելու համար ներդրումներ կատարելուն պատրաստ «Գնորդին» և տպագրելու փաստաթղթային բաժնետոմսեր: Ընկերության հայտարարված բաժնետոմսերի քանակը շատ քիչ է, և լրացուցիչ տեղաբաշխման համար անհրաժեշտ քանակությամբ բաժնետոմսեր չկան: Այս դեպքում հարց է ծագում, թե ինչպես հասնել առաջադրված խնդրի լուծմանը: Ընկերության կողմից արդեն իսկ տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումն իմաստ չունի, քանի որ բաժնետերերից ոչ մեկը բաժնետոմսերը վաճառելու ցանկություն չի հայտնի, «զուգահեռ» ընկերություն ստեղծելը ևս ձեռնտու չէ, քանի որ այն բավականին ժամանակատար գործընթաց է, իսկ ընկերությունը չի ցանկանում լրացուցիչ բաժնետոմսեր թողարկել, քանի որ քվեարկությամբ արդեն իսկ ձևավորված համակարգը փոփոխելը ցանկալի չէ:

Թվում է, թե առաջացել է անելանելի իրավիճակ: Մինչդեռ ծագած խնդրի լուծումը տալիս է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 56 հոդվածը, որի 1-ին մասը սահմանում է, որ ընկերությունն իրավունք ունի ժողովի որոշմամբ համախմբելու (կոնսոլիդացնելու) տեղաբաշխված բաժնետոմսերը, որի արդյունքում ընկերության երկու և (կամ) ավելի բաժնետոմսերը փոխարկվում են նույն տեսակի (դասի) մեկ նոր բաժնետոմսի: Այդ դեպքում կանոնադրության մեջ կատարվում են ընկերության տեղաբաշխված և հայտարարված բաժնետոմսերի քանակի ու անվանական արժեքի համապատասխան փոփոխություններ:

Համախմբման հետևանքով կոտորակային բաժնետոմսեր առաջանալու դեպքում վերջիններս ընկերության կողմից ենթակա են հետզնման՝ դրանց շուկայական արժեքով: Ընդ որում, հետզնումն իրականացնելու համար բաժնետոմսերի սեփականատերերի համաձայնությունն օրենսդրի տեսանկյունից պարտադիր չէ:

Այս առումով հետաքրքրական է Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի 1982 թվականի հոկտեմբերի 12-ի՝ «Բրամելիդը և Մալմսթրոմն ընդդեմ Շվեդիայի» գործով որոշման մեջ արտահայտած դիրքորոշումը: Այս գործով դիմողները վիճարկել էին այն փաստը, որ իրենք իրենց բաժնետոմսերից զրկվել էին իրենց կամքին հակառակ, ոչ ի շահ հանրության և առանց արդարացի փոխհատուցման⁸: Հանձնաժողովը շվեդական օրենսդրությամբ նախատեսված փոքրամասնություն կազմող բաժնետերերի պարտականությունն իրենց բաժնետոմ-

⁸ Հայաստանի Հանրապետությունում նման իրավիճակի մենք հաճախ հանդիպում ենք բաժնետոմսերի կոնսոլիդացիայի հետևանքով բաժնետոմսերը հետզնմելիս:

սերը խոշոր բաժնետիրոջը հանձնելու մասով չի դիտել որպես 1-ին արձանագրության 1-ին հոդվածի 1-ին նախադասությամբ նախատեսված՝ գույքից անարգել օգտվելու իրավունքի խախտում: Միաժամանակ հանձնաժողովը գտել է, որ ամեն դեպքում օրենքը չպետք է ստեղծի այնպիսի անհավասար վիճակ, որ մի անձը կամայականորեն և անարդարացի⁹ իր գույքից (բաժնետոմսերից) զրկվի հոգուտ մեկ այլ անձի¹⁰:

Ծագած խնդրի լուծման անհրաժեշտ իրավական հիմքն առկա է, սակայն տեղաբաշխված բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացումը) իրականացնելու համար անհրաժեշտ է նաև, որ ընկերությունն ունենա համապատասխան ազատ ֆինանսական միջոցներ, որպեսզի կարողանա շուկայական արժեքով հետ գնել համախմբման (կոնսոլիդացման) միջոցով առաջացած 5-7 տոկոս կազմող կոտորակային բաժնետոմսերը:

Այսպիսով, որպեսզի «Գալակտիկա» ԲԲԸ-ն կարողանա հասնել իր առջև դրված խնդիրների իրագործմանը, օրենքի 56 հոդվածի 1-ին կետի 1-ին մասի համաձայն՝ բաժնետերերի ընդհանուր ժողովը պետք է որոշում կայացնի հետևյալ հարցերի շուրջ.

ա) տեղաբաշխված բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացման) մասին, որով 1000 դրամ անվանական արժեքով տեղաբաշխված 150 հին բաժնետոմսերը փոխարկվում են նույն դասի մեկ նոր բաժնետոմսի՝ 150000 դրամ անվանական արժեքով,

բ) կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին՝ կապված բաժնետոմսերի քանակի և անվանական արժեքի փոփոխման հետ,

գ) կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին՝ կապված հայտարարված բաժնետոմսերի քանակի հետ, եթե ընկերության կանոնադրությունում արդեն իսկ նախատեսված է հայտարարված արժեթղթերի որոշակի քանակություն:

Այս պայմաններում հարց է ծագում, թե որտեղից պետք է առաջանա անհրաժեշտ 5-7 տոկոս բաժնետոմսերի փաթեթը, որպեսզի այն հնարավոր լինի վաճառել «ներդրողին», և փաստաթղթային արժեթղթերի թողարկման բավականին թանկարժեք գործընթացը ինչպես կարելի է էժանացնել:

Ընդհանուր առմամբ, փոքր թվով բաժնետերեր կարող են գտնվել, որոնք կունենան բաժնետոմսերի այնպիսի քանակություն, որն առանց

⁹ Ստորև կփորձենք պարզել՝ արդյոք ՀՀ օրենսդրությամբ բաժնետոմսերի կոնսոլիդացման արդյունքում առաջացող կոտորակային բաժնետոմսերի հետգնման հետ կապված հարաբերությունները կարգավորված են արդարացի և կամայականությունների տեղիք չեն տալիս:

¹⁰ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի 1982 թվականի հոկտեմբերի 12-ի «Բրամելիդը և Մալմսթրոմն ընդդեմ Շվեդիայի» գործով որոշումը (application 8588/79, 8589/79):

մնացորդի կբաժանվի 150-ի: Որպես կանոն՝ բաժնետերերի մեծ մասի մոտ այդպիսի մնացորդներ կառաջանան, որոնք հանդես կգան կոտորակային բաժնետոմսերի ձևով: Օրինակ՝ 380 բաժնետոմս ունեցող բաժնետիրոջ մոտ կմնա 80 բաժնետոմս, 420 բաժնետոմս ունեցողի մոտ՝ 120 բաժնետոմս և այլն, որոնք էլ ընկերության կողմից ենթակա են հետգնման՝ դրանց շուկայական արժեքին համապատասխան:

Ընկերության կողմից հետգնված կոտորակային բաժնետոմսերի համախմբման միջոցով ձևավորվում են մեկից ավելի ամբողջական բաժնետոմսեր, որոնք կուտակվում են ընկերությունում և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 58 հոդվածի 7-րդ կետին համապատասխան՝ հետգնման պահից մեկ տարվա ընթացքում ենթակա են տեղաբաշխման: Հակառակ դեպքում ժողովը պետք է որոշում ընդունի այդ բաժնետոմսերի մարման միջոցով կանոնադրական կապիտալի նվազեցման մասին:

Մեզ, իհարկե, հետաքրքրում է տեղաբաշխման տարբերակը, քանի որ այդ բաժնետոմսերի գնորդը նախապես հայտնի է: Ինչպես ցույց է տալիս պրակտիկայի ուսումնասիրությունը՝ այս մեխանիզմի իրագործումը հնարավորություն է տալիս ձևավորելու բաժնետոմսերի փաթեթ, որը կազմում է կանոնադրական կապիտալի 5-7 տոկոսը, ինչը և հնարավոր է վաճառել պոտենցիալ ներդրողին: Իհարկե, կոտորակային բաժնետոմսերի քանակը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ձևավորվում է ըստ բաժնետերերին պատկանող բաժնետոմսերի քանակի և համախմբման (կոնսոլիդացման) համար ընտրված բանաձևի:

Բաժնետոմսերի համախմբման կիրառման պրակտիկայի ուսումնասիրությունը թույլ է տալիս վեր հանել որոշ առանձնահատկություններ, որոնց վրա պետք է հատուկ ուշադրություն դարձնել բաժնետոմսերի համախմբումն իրականացնելիս:

Առաջին. անհրաժեշտ է բավականին նրբանկատորեն պատրաստվել բաժնետերերի ընդհանուր ժողովի կազմակերպմանը, հստակ հիմնավորել ընկերության շահերից բխող այն դրդապատճառները¹¹, որոնք անհրաժեշտություն են առաջացրել իրականացնելու բաժնետոմսերի համախմբում:

¹¹ Մեր կողմից ուսումնասիրվող տարբերակում համախմբման իրականացումը կորպորացիայի շահերից էլնելով հիմնավորվում է նրանով, որ ա) ցածր անվանական արժեք ունեցող 450000 բաժնետոմսերն զգալիորեն դժվարացնում են ռեեստրի վարման աշխատանքները, և այդ պայմաններում ներդրումների ներգրավման նպատակով նոր բաժնետոմսերի տեղաբաշխումն էլ ավելի կբարդացնի այդ գործընթացը: Իսկ մեր կողմից բերված օրինակում բաժնետոմսերի համախմբման միջոցով բաժնետոմսերի անվանական արժեքի բարձրացումը հնարավորություն տվեց 150-ը 1-ի փոխանակման շնորհիվ բաժնետոմսերի քանակը հասցնել 3000-ի՝ առանց կանոնադրական կապիտալի փոփոխման, բ) համախմբման իրականացումը հնարավորություն կընձեռի տպագրելու որակյալ փաստաթղթային բաժնետոմսեր, քանի որ բաժնետոմսերի տպագրությունն ինքնին բավականին ծախսատար գործընթաց է: Բնականաբար, 450000 որակյալ արժեթղթերի տպագրությունը շատ ավելի թանկ կարժենա, քան 3000-ինը:

Երկրորդ. համախմբված բաժնետոմսի անվանական արժեքը չպետք է ավելի բարձր լինի մեկ բաժնետիրոջը պատկանող բաժնետոմսերի ամենափոքր փաթեթի ընդհանուր արժեքից:

Բերված օրինակում համախմբված բաժնետոմսի անվանական արժեքը բաժնետոմսերի ամենափոքր փաթեթի ընդհանուր արժեքից երկու անգամ ցածր է: Այս դեպքում բաժնետոմսերի ամենափոքր փաթեթին տիրապետող բաժնետերը երաշխավորված է, որ բաժնետոմսերի համախմբման դեպքում կստանա նվազագույնը երկու նոր բաժնետոմս: Հակառակ դեպքում բաժնետոմսերի ամենափոքր փաթեթին տիրապետող բաժնետերն ընդհանրապես կզրկվեն բաժնետոմս ունենալու իրավունքից: Այդ իսկ պատճառով համախմբման իրականացման մեխանիզմն արդյունավետ չէ, երբ ընկերությունում առկա են բաժնետոմսերի փոքր փաթեթներ ունեցող բաժնետերեր, իսկ բանկերի պարագայում, մեր կարծիքով, նման իրավիճակում համախմբման իրականացումը արգելվում է: Իհարկե, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքն ամեննին էլ չի պարտադրում հաշվի առնել փոքրամասնություն կազմող բաժնետերերի շահերը, այլ ընկերությանը հնարավորություն է տալիս հետ գնելու առաջացած կոտորակային բաժնետոմսերը:

Այս առումով անհրաժեշտ է նշել, որ մեր հանրապետությունում բաժնետոմսերի համախմբումը մեծ մասամբ իրականացվում է ոչ թե հաշվի առնելով կորպորացիայի շահերը, այլ հաշվի առնելով խոշոր բաժնետերերի շահերը, որոնք, մեր կարծիքով, հաճախ չեն համընկնում կորպորացիայի շահերին: Այդպիսիք իրավունքի չարաշահում են և նպատակ են հետապնդում ազատվելու «ոչ ցանկալի» մանր բաժնետերերից և ոչ արդարացի գնով, ընկերության ֆինանսական միջոցներով տիրանալու նրանց պատկանող բաժնետոմսերին ու հասանելիք շահութաբաժիններին, որի իրականացման հնարավորություն ընձեռելն օրենսդրության մակարդակով անթույլատրելի է:

Այդ մասին են վկայում ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի կողմից բաժնետոմսերի համախմբման վերաբերյալ տարված քաղաքականությունը և քննված մի շարք գործերով կայացված որոշումները, որոնցով փորձ էր արվել կանխելու նման արատավոր երևույթների զարգացումը մեր հանրապետությունում¹²:

¹² Օրինակ՝ «Կոտայք գարեջրերի գործարան» ԲԲԸ-ն, որի կանոնադրական կապիտալը կազմում էր 202993000 դրամ և բաժանված էր ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստող յուրաքանչյուրը 1000 դրամ անվանական արժեքով 202993 բաժնետոմսերի, որոշում էր կայացրել բաժնետոմսերի համախմբման վերաբերյալ, և համախմբումը կատարվել էր 1000-ը 1-ի գործակցով, այսինքն՝ 1000 դրամ անվանական արժեքով 1000 բաժնետոմսերը փոխարկվել էին 1000000 դրամ անվանական արժեքով 1 նոր բաժնետոմսով: Որոշումը կայացնելու պահի դրությամբ ընկերության բաժնետոմսերը տեղաբաշխված էին հետևյալ կերպ՝ 71 տոկոսը (144127 հատ) պատկանում էր «Y» ԲԲԸ-ին, 25.9 տոկոսը (52586 հատ)՝ «Z» ՍՊԸ-ին, իսկ մնացած 3 տոկոսը (6280 հատ)՝ թվով 114 մանր բաժնետերերի: Ընդ որում,

Սակայն ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի լուծարումից հետո նշված խնդրին վերաբերող դատական պրակտիկան ընտրեց խնդրի լուծման հակադիր ճանապարհը: Մասնավորապես, «Երևանի Արարատ կոնյակի-գինու-օղու կոմբինատ» բաց բաժնետիրական ընկերությունում 12.10.2008 թ. կատարված կոնսոլիդացման հետևանքով բաժնետոմսերից գրկված բաժնետերերի կոնսոլիդացման մասին ժողովի որոշումը անվավեր ճանաչելու մասին հայցը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.05.2009 թ. վճռով մերժվեց¹³: «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 56 և 58 հոդվածների սահմանադրականության հարցին է անդրադարձել նաև Սահմանադրական դատարանը՝ քաղաքացիներ Ռուբեն Ավագյանի, Հրաչիկ Հակոբջանյանի, Հրաչյա Ավետիսյանի, Արայիկ Ավետիսյանի դիմումի հիման վրա՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 56, 57 և 58 հոդվածների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 13.07.2010 թվականին կայացված որոշմամբ, որով դատարանը «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 56 հոդվածը ճանաչեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող:

Դիմողները կոնսոլիդացման հետևանքով սեփականության իրավունքից գրկվելը դիտել էին որպես սեփականությունից գրկում՝ առանց սեփականությունից դատական կարգով գրկելու՝ սահմանադրական պահանջի ապահովման: Ակնհայտ է, որ դիմողների նման պահանջը

114 բաժնետերերից մեկ բաժնետիրոջը պատկանող բաժնետոմսերի ամենափոքր փաթեթը կազմում էր երկու բաժնետոմս, իսկ ամենամեծ փաթեթը՝ 850: Փաստորեն, վերը նշված գործակցով կատարված համախմբմամբ 114 բաժնետերերի մոտ առաջացան կոտորակային բաժնետոմսեր, որի հետևանքով տվյալ բաժնետերերը գրկվեցին մեկ ամբողջական բաժնետոմսի նկատմամբ իրենց ունեցած սեփականության իրավունքից: Այդ կապակցությամբ ՀՀ արժեթղթերի հանձնաժողովում հրավիրված լուսմների ժամանակ ընկերությունը համախմբման կատարումը պատճառաբանել էր նրանով, որ նման եղանակով փորձել էր դուրս գալ հաշվետու թողարկողի կարգավիճակից, սակայն կոնսոլիդացման համար ընտրված բանաձևից ակնհայտ էր, որ նման որոշման կայացումը որևէ տնտեսական կամ ընկերության շահերին համապատասխանող այլ շարժառիթով պայմանավորված չէր: Լուսմների արդյունքում ՀՀ արժեթղթերի հանձնաժողովը հանգել էր այն եզրակացությանը, որ նման եղանակով կատարված համախմբման հետևանքով ոտնահարվել են ՀՀ Սահմանադրությամբ և այլ օրենքներով ու իրավական ակտերով սահմանված սեփականատիրոջ ու բաժնետիրոջ իրավունքները, և ընկերությանը պարտադրել էր նման եղանակով բաժնետոմսերի համախմբում իրականացնելուց ձեռնպահ մնալ: Բնականաբար, կոնկրետ այս օրինակում նման հիմնախնդիր չէր առաջանա, եթե բաժնետոմսերի համախմբումն իրականացվեր 2-ը 1-ի գործակցով և ընկերության կորպորատիվ շահը հաշվի առնելով:

¹³ Կարծում ենք, որ հայցապահանջը մերժելու պատճառներից մեկը եղել է նաև այն, որ հայցվորները խոշոր բաժնետիրոջ կողմից կոնսոլիդացման իրականացման մասին որոշման կայացումը չեն կարողացել հիմնավորել որպես իրավունքի չարաշահում, չեն բացահայտել տվյալ որոշումներում կորպորացիայի շահի բացակայությունը, այլ ընտրել են իրենց արդարացի պահանջը հիմնավորելու վերը նշված, ի սկզբանե ձախողման դատապարտված տարբերակը:

չէր բավարարվի, քանի որ դեռևս 18.04.2006 թվականի ՄԴՈ-630 որոշմամբ սահմանվել էին սեփականությունից զրկելու ինստիտուտին բնորոշ պարտադիր տարրերը, որպիսիք բաժնետոմսերի կոնսոլիդացման ժամանակ ակնհայտորեն բացակայում են: Մասնավորապես, կոնսոլիդացման դեպքում ապահովվում է սեփականության իրավունքի շարունակականությունը, սեփականության դադարեցումը չի ենթադրում որպես պատասխանատվության միջոցի կիրառում և չունի անհատույց բնույթ¹⁴:

Սրա հետևանքով բաժնետոմսերի կոնսոլիդացիան Հայաստանի Հանրապետությունում լայն կիրառում ստացավ, և հազարավոր բաժնետերեր իրենց կամքին հակառակ զրկվեցին և օրենսդրության անկատարության պատճառով դեռ կզրկվեն բաժնետոմսերի նկատմամբ իրենց ունեցած սեփականության իրավունքից:

Թվում էր, թե իրավիճակը որոշակիորեն ավելի բարվոք է բանկային գործունեությամբ զբաղվող բաժնետիրական ընկերությունների բաժնետերերի պարագայում, քանի որ գործունեության տվյալ ոլորտը կարգավորող՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 37 հոդվածի 1-ին մասը արգելում է բանկի կողմից իր բաժնետոմսերը գեղջելը, գնելը կամ հատուցմամբ այլ կերպ ձեռք բերելը, դրանք գրավ ընդունելով վարկ տալը, բացառությամբ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 36 հոդվածի վեցերորդ մասին համապատասխան՝ բանկի կողմից իր բաժնետոմսերը (բաժնեմասերը, փայերը) ձեռք բերելու դեպքերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ բանկի բաժնետոմսերը գրավ ընդունելը կամ ձեռք բերելը անհրաժեշտ է տվյալ բանկի նկատմամբ նախկինում ծագած պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով հնարավոր կորուստները կանխելու համար, ընդ որում՝ բանկը պարտավոր է տվյալ բաժնետոմսերը սեփականության իրավունքով ձեռք բերելու պահից երկու ամսվա ընթացքում իրացնել դրանք:

2013 թ. մարտին «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից իրականացված բաժնետոմսերի կոնսոլիդացիայի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ, ըստ էության, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի վերը նշված նորմը ընկերության կողմից կոնսոլիդացիայի իրականացման մասին որոշում կայացնելու արգելք չի հանդիսացել, որի հետևանքով ընկերության երեք բաժնետերեր զրկվել են յոթ բաժնետոմսերի նկատմամբ իրենց ունեցած սեփականության իրավունքից:

Կոնսոլիդացիայի արդյունքում թվով 5 կոտորակային բաժնետոմսերի սեփականատեր Արտաշես Հովհաննեսյանը փորձել է դատական կարգով վիճարկել կոնսոլիդացիայի իրականացման մասին ընկերության կայացրած որոշման իրավաչափությունը, սակայն վերջինիս

¹⁴ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թ. հուլիսի 13-ի ՄԴՈ-903 որոշումը:

պահանջը դատարանի տարատեսակ, գործին առնչվող, որոշ դեպքերում չառնչվող փաստարկներով մերժվել է: Դատարանը գտել է, որ բանկերը, չնայած գործունեության տվյալ ոլորտը կարգավորող օրենսդրությամբ նախատեսված ուղղակի արգելքին, կարող են ղեկավարվել «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և իրականացնել բաժնետոմսերի կոնսոլիդացիա՝ կոտորակային բաժնետոմսերի հետագա հետգնումով, ինչը, մեր կարծիքով, մեղմ ասած, համոզիչ չէ:

Երրորդ. բաժնետերը պետք է կամավոր ընտրի իր կոտորակային¹⁵ բաժնետոմսերի տնօրինման եղանակը:

Ցանկանում ենք նշել, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը չի բանաձևում «կոտորակային բաժնետոմսերի» հասկացությունը, ինչպես նաև չի կարգավորում այդ բաժնետոմսերի շրջանառության կամ դրանց սեփականատերերին պատկանող իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները, ինչը գործնականում տարատեսակ մեկնաբանություններ և վեճեր է առաջացնում:

Կոտորակային բաժնետոմսը գույքի ընդհանուր սեփականության իրավական ռեժիմի մասնավոր դրսևորումը չէ, այլ արժեթղթի նկատմամբ իրավունքների հատուկ բաժանում (հետևաբար՝ արժեթղթերից բխող իրավունքների համապատասխան բաժանում), որի հետևանքով առաջանում են նոր օբյեկտների նկատմամբ իրավունքների ծագման հիմքեր¹⁶: Կոտորակային բաժնետոմսերի գոյությունը՝ որպես քաղաքացիական իրավունքի ինքնուրույն օբյեկտ, բաժնետոմսի անբաժանելիության սկզբունքից հարկադրված հատուկ շեղում է, ուստի առաջին հերթին անհրաժեշտ է սահմանել այնպիսի իրավակարգավորում, որի պայմաններում առավելագույնս կպաշտպանվեն կոտորակային բաժնետոմսերի սեփականատերերի շահերը, ինչպես նաև չի խաթարվի կորպորատիվ իրավահարաբերությունների բնականոն ընթացքը:

Նման պայմաններում հարց է ծագում, թե, բացի «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կոտորակային բաժնետոմսերի հետգնման տարբերակից, ինչպիսի այլընտրանք կարելի է տրամադրել կոտորակային բաժնետոմսի սեփականատիրոջը, եթե որոշում է ընդունվել բաժնետոմսերի համախմբման մասին: Բաժնետոմսերի սեփականատիրոջն իր կոտորակային բաժնետոմսերը տնօրինելու այլընտրանքային հնարավորության տրամա-

¹⁵ Կոտորակային են համարվում այն ոչ ամբողջական բաժնետոմսերը, որոնք առաջանում են ընկերության կողմից իրականացվող այս կամ այն կորպորատիվ գործողության հետևանքով, օրինակ՝ բաժնետոմսերի համախմբում, բաժանում, կանոնադրական կապիտալի ավելացում (ընկերության գույքի հաշվին), կանոնադրական կապիտալի նվազեցում, վերակազմակերպում և այլն:

¹⁶ Տե՛ս **Ռ. Մ. Մերոբյան**, Կորպորատիվ արժեթղթերի շրջանառության մի քանի հիմնահարցեր, «Պետություն և իրավունք», 2005, № 1 (27), էջ 35:

դրումը ոչ այնքան իրավական, որքան հոգեբանական հիմնահարց է: Որպեսզի կոտորակային բաժնետոմսի սեփականատերն իրեն խաբված չզգա, անհրաժեշտ է, որ օրենքը կոտորակային բաժնետոմսերի սեփականատերերին հնարավորություն ընձեռի միավորելու իրենց կոտորակային բաժնետոմսերը և որպես համասեփականատերեր տիրապետելու դրա արդյունքում առաջացած մեկ կամ մի քանի ամբողջական բաժնետոմսերի:

Չնայած այն հանգամանքին, որ բաժնետերերը ոչ միշտ են ընտրում բաժնետոմսը վաճառելու այլընտրանքային եղանակները, բայցնայնպես, կարծում ենք, որ նման հնարավորության նախատեսումը փոքրամասնություն կազմող բաժնետերերի իրավունքների պաշտպանության տեսակետից կդիտվեր որպես մեկ քայլ առաջ:

Օրենքի այս բացն ինչ-որ չափով փորձել էր լրացնել ներկայումս չգործող՝ Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագիրքը, որի 112.1բ–28 կանոնի «142.8» ենթակետը սահմանում էր, որ կորպորատիվ գործունեության իրականացման արդյունքում կոտորակային (ոչ ամբողջական) արժեթղթերի (այդ թվում՝ բաժնետոմսերի) առաջացման դեպքում դրանք ենթակա են թողարկողի կողմից դրանց շուկայական գնով հետգնման՝ օրենքով սահմանված կարգով: Այս նպատակներից ելնելով՝ կենտրոնական դեպոզիտարիան կորպորատիվ գործողություն իրականացնելիս պարտավոր է՝

1) իրականացնել յուրաքանչյուր գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) կոտորակային արժեթղթերի առանձին հաշվառում,

2) գրանցված սեփականատերերին (անվանատերերին) 10 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցել նրանց անձնական հաշիվներում կոտորակային արժեթղթերի հաշվառման վերաբերյալ՝ նրանց տրամադրելով այն գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակը և կապի միջոցները, որոնց հաշիվներում հաշվառված են թողարկողի՝ տվյալ դասի կոտորակային արժեթղթերը, և տեղեկացնելով, որ նրանք, ցանկության դեպքում, կարող են միավորել իրենց պատկանող կոտորակային արժեթղթերը և ամբողջ թվով արժեթղթերի վերածելուց հետո իրացնել այդ արժեթղթերով հավաստված իրավունքները¹⁷:

Չորրորդ. բաժնետոմսերի համախմբումն իրականացնելիս անհրաժեշտ է ընտրել այնպիսի բանաձև, որ կոտորակային արժեթղթերի միացման արդյունքում «պոչեր» չառաջանան, այլ ձևավորվեն ամբողջական բաժնետոմսեր: Հակառակ դեպքում ընկերությունը ստիպված

¹⁷ Ըստ էության, պրակտիկայում Կանոնագրքի՝ կոտորակային բաժնետոմսերը միավորելու հնարավորություն ընձեռող նորմը չէր կիրառվում, քանի որ Կանոնագրքի պահանջները տարածվում էին միայն հաշվետու թողարկողների նկատմամբ, ինչպես նաև հակատում էին «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 56 հոդվածի իմպերատիվ նորմերին:

կլինի մարել այդ մնացորդները, ինչը, բնականաբար, կհանգեցնի կանոնադրական կապիտալի փոփոխման: Իսկ օրենքի 36 հոդվածի 4-րդ կետն ընկերությանը պարտադրում է կանոնադրական կապիտալի նվազեցման մասին որոշում ընդունելուց հետո՝ 30-օրյա ժամկետում, այդ մասին գրավոր ծանուցել իր պարտատերերին: Պարտատերերն իրավունք ունեն ծանուցումն ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, ընկերությունից պահանջելու պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ, պարտավորությունների դադարեցում կամ վաղաժամկետ կատարում, ինչպես նաև վնասների հատուցում:

Բնականաբար, նման խնդրից խուսափելու համար անհրաժեշտ է ձեռնպահ մնալ մնացորդների գոյացումից, որպեսզի բաժնետոմսերի համախմբումն արդյունավետորեն և արագ նպաստի ծառայած խնդիրների լուծմանը:

Սահմանադրական դատարանի վերը նշված որոշման մեջ անդրադարձ է կատարվել նաև կոտորակային բաժնետոմսերի առաջացման խնդրին: Մասնավորապես, որոշման 7-րդ կետում արդարացիորեն նշվում է, որ ձեռնարկատիրական գործունեության ոլորտում նշված գործընթացի օբյեկտիվ և անխուսափելի հետևանքն է կոտորակային բաժնետոմսերի առաջացումը, որոնց առկայությունը նպատակահարմար չէ ինչպես արժեթղթերի շուկայի կայունության ապահովման, այնպես էլ բաժնետիրական ընկերության արդյունավետ կառավարման տեսանկյունից: Հղում է կատարվում Լեհաստանի, Չեխիայի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենսդրական կարգավորմանը, որոնք որպես կոտորակային բաժնետոմսերի գոյությունը բացառող միջոց նախատեսում են կոտորակային բաժնետոմսերի պարտադիր հետգնումը կամ կամավոր հետգնումը, ինչը պարունակում է փակուղային իրավիճակ ստեղծելու վտանգ¹⁸:

Մեծ Բրիտանիայի օրենսդրությամբ արգելվում է այնպիսի գործողությունների կատարումը, որպիսիք կարող են հանգեցնել կոտորակային բաժնետոմսերի առաջացմանը, Ամերիկայի Միացյալ Նահանգների օրենսդրությամբ որպես կոտորակային բաժնետոմսի սեփականատիրոջը տրվող փոխհատուցման չափ սահմանվում է կոնսոլիդացման արդյունքում առաջացած մեկ բաժնետոմսի արժեքը¹⁹, Շվեյցարիայի բաժնետիրական օրենսդրությամբ բաժնետոմսերի կոնսոլիդացիան թույլատրվում է բոլոր բաժնետերերի համաձայնությամբ՝ պայմանով, որ կանոնադրական կապիտալի չափը չի փոփոխվի²⁰, այսինքն՝ կբացառվի կոտորակային բաժնետոմսերի առաջացումը, և այլն:

¹⁸ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թ. հուլիսի 13-ի ՄԴՈ-903 որոշումը:

¹⁹ Տե՛ս **Бушев А. Ю., Попондопуло В. Ф.** О балансе интересов акционеров при консолидации акций // "Арбитражные споры", 2004, № 3 (27), էջ 128:

²⁰ Տե՛ս **Агеев А. Б.** Акционерное законодательство Швейцарии, постатейный комментарий. М., 2005, էջ 11:

Այս առումով հատկանշական է Ռուսաստանի Դաշնության օրենսդրության զարգացման պատմությունը, որտեղ մինչև 07.08.2001 թ. առկա էր վերը նշված հիմնահարցի նույն իրավակարգավորումը, որը ներկայումս գործում է Հայաստանի Հանրապետությունում: Ռուսաստանի Դաշնության «Բաժնետիրական ընկերությունների մասին» նոր օրենքի 25 հոդվածի 3-րդ մասով սահմանվեց, որ կոտորակային բաժնետոմսերի սեփականատերերը դրանց նկատմամբ սեփականության իրավունքը չեն կորցնում, կոտորակային բաժնետոմսերի սեփականատերերը շարունակում են համարվել ընկերության բաժնետերեր՝ կոտորակային բաժնետոմսի սեփականատիրոջը բնորոշ իրավունքներով ու պարտականություններով հանդերձ²¹: Միաժամանակ կոտորակային բաժնետոմսերի սեփականատերերին իրավունք վերապահվեց ընկերությունից պահանջելու իրենց պատկանող բաժնետոմսերի հետգնում:

Այս քայլով ռուս օրենսդիրը կանխեց սեփականաշնորհման հետևվանքով ձևավորված մի քանի միլիոնի հասնող փոքրամասնություն կազմող բաժնետերերի՝ կոնսոլիդացիայի միջոցով ունեզրկման գործընթացը, որը սկիզբ էր առել Ռուսաստանի Դաշնությունում: Բիարկե, այս մոտեցումը Ռուսաստանի Դաշնության որոշ տեսաբանների կողմից չի դիտվում որպես կորպորատիվ կառավարման արդյունավետությունը բարձրացնող քայլ²², սակայն կորպորատիվ հարաբերությունների ձևավորման սկզբնական փուլում գտնվող պետությունում, որտեղ առկա է միջին խավ ձևավորելու, հասարակության մեջ հանդուրժողականության և արդարության մթնոլորտ ձևավորելու խնդիր, այդպիսի իրավակարգավորումը դարձավ ստեղծված իրավիճակի քիչ թե շատ արդարացի լուծումներից մեկը:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ ակնհայտ են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ բաժնետոմսերի համախմբման ինստիտուտի կարգավորման անկատարությունը, խոշոր բաժնետերերի և ընկերության շահերի միջև հստակ սահմանագծի բացակայությունը, օտարերկրյա իրավունքի՝ առանց ազգային առանձնահատկությունները հաշվի առնելու փոխառումը, ինչը մեր իրականությունում ստեղծել է մի իրավիճակ, երբ խոշոր բաժնետերերն առանց որևէ հիմնավորման կարող են ընկերության ֆինանսական միջոցների, ինչպես նաև բաժնետերերին հասանելիք շահութաբաժինների հաշվին ազատվել փոքրամասնություն կազմող բաժնետերերից, տիրանալ նրանց շահութաբաժիններին և անարգել իրագործել կապիտալը մի քանի ան-

²¹ См. у Комментарий к Федеральному закону «Об акционерных обществах». По состоянию на 7 августа 2001 г. А. А. Дунаевский, А. Д. Осинковский, Е. А. Борисенко. М., 2001, էջ 97:

²² Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Бушев А. Ю., Попондопуло В. Ф.** О балансе интересов акционеров при консолидации акций // "Арбитражные споры", 2004, № 3 (27), էջ 105–128:

հատների ձեռքում կենտրոնացնելու արատավոր երևույթը:

Բաժնետիրական ընկերության, ընկերության և բաժնետերերի, առանձին բաժնետերերի և բաժնետերերի խմբերի շահերի հավասարակշռման անհրաժեշտությունից ելնելով, որպես վերը նշված հիմնախնդրի լուծում, առաջարկում ենք «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքներում կատարել համապատասխան փոփոխություններ և բաժնետոմսերի համախմբումն իրականացնելու հնարավորությունը պայմանավորել հետևյալ հանգամանքներով.

- բաժնետոմսերի համախմբումը պետք է իրականացվի՝ ելնելով բացառապես ընկերության կորպորատիվ, այլ ոչ թե առանձին բաժնետերերի կամ բաժնետերերի խմբի շահերից,

- համախմբման մասին որոշման կայացումը պայմանավորել ոչ թե ձայների պարզ, այլ որակյալ մեծամասնությամբ,

- կոտորակային բաժնետոմսեր ունեցող բաժնետերերին հնարավորություն ընձեռել համախմբման մասին որոշումը կայացնելուց հետո որոշակի ժամկետում միավորելու իրենց պատկանող կոտորակային բաժնետոմսերը և այդ եղանակով ձևավորել ամբողջական բաժնետոմսեր,

- կոտորակային բաժնետոմսերի սեփականատերերի կողմից սահմանված ժամկետում կոտորակային բաժնետոմսերը միավորելու իրավունքի իրականացումից չօգտվելու դեպքում նախատեսել ընկերության կողմից արդարացի գնով այդպիսիք հետ գնելու պարտականություն:

Բանալի բառեր – *բանկ, բաժնետոմսերի համախմբում, խոշոր բաժնետեր, փոքրամասնություն կազմող բաժնետերեր, կոտորակային բաժնետոմսեր, բաժնետոմսերի հետգնում, բաժնետերերի իրավունքների պաշտպանություն*

ВАГРАМ АВЕТИСЯН – Особенности консолидации акций акционерных обществ, являющихся банками. – Институт консолидации акций регулируется законодательством РА весьма несовершенно. Отсутствует чёткое разграничение интересов крупных и мажоритарных акционеров, а также компаний, не затронута применение в Армении законов иностранных государств. Названные проблемы создают ситуацию, в которой основные акционеры акционерных обществ, являющихся банками, без какого-либо обоснования, за счёт финансовых средств компании и дивидендов могут избавиться от миноритарных акционеров, беспрепятственно осуществив централизацию капитала между несколькими лицами. Любой механизм, который направлен на создание контрольного пакета акций (в том числе консолидация акций), повышает эффективность акционерного общества. Тем не менее, консолидация акций должна осуществляться так, чтобы, не злоупотребляя правами, не только решить упомянутые задачи, но и обеспечить защиту интересов миноритарных акционеров.

В статье говорится о необходимости сбалансировать интересы банков и их акционеров. Предлагается внести ряд изменений и дополнений в законы РА «Об акционерных обществах» и «О банках и банковской деятельности».

Ключевые слова: банк, консолидация акций, дробные акции, выкуп акций, основной акционер, миноритарный акционер, защита прав акционеров

VAHRAM AVETISYAN – *Features of the Reverse Stock Split of Joint Stock Companies-Banks.* – The author discussed the imperfect regulation of the institute of reverse stock split in the legislation of RA, the absence of clear differentiation line between interests of the main shareholders and the company, as well as the issues of application of foreign legislation in RA, without taking into consideration national peculiarities. The abovementioned issues compose a situation, where main shareholders of joint-stock companies- banks, without any justification, at the expense of financial funds of the company and dividends of stockholders can get rid of small shareholders, take possession of their dividends and carry out the practice of centralization of the capital between several persons, without any prohibition.

Any mechanism, which is directed to compose the controlling block of shares (including consolidation of safety stocks) as a rule has the aim to increase the effectiveness of management and activities of joint-stock company. However, the consolidation of safety stocks must be done in a way that can ensure not only carrying out the abovementioned goals, but also can provide protection of small shareholders' interests without any abuse of the powers given.

Taking into consideration the necessity to balance the interests of joint-stock companies-banks and their stockholders, the author suggests several amendments in "Law on Joint-stock companies" and "Law on Banks and Banking", which will allow finding solution to the abovementioned issue.

Key words: bank, reverse stock split, fractional shares, redemption of shares, the main shareholder, minority shareholder, protection of shareholders' rights

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԱՆՉԱՓԱՀԱՄԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՊԱՏԺԻ ԵՎ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Անչափահասների գործերով արդարադատություն իրականացնելու գործընթացում ամենակարևոր և պատասխանատու որոշումներից մեկը երեխայի կողմից կատարված հանցագործությանն արձագանքելու գործուն և առավելագույնս «երեխայի լավագույն շահերից» բխող միջոցի ընտրությունն է: Նման որոշում կայացնելը բավականին բարդ է, քանի որ մի կողմից առկա է հանցանք կատարած երեխա, ում վարքագիծը մեծապես պայմանավորված է եղել տարիքային առանձնահատկություններից բխող իրողությամբ, և առկա է մտահոգություն, որ քրեախրավական ներգործության միջոցների կիրառումը կարող է անդառնալիորեն և բացասաբար անդրադառնալ նրա հետագա կյանքի վրա, մյուս կողմից՝ կատարված հանցագործությամբ խախտվել են այլ անձի իրավունքները, հասարակության կամ պետության շահերը, և դրան չարձագանքելը երեխայի մեջ կարող է ձևավորել անպատժելիության զգացում՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Ուստի իրավասու մարմնի առաջնային խնդիրը պետք է լինի կատարված արարքին տալ համաչափ պատասխան, ընտրել պատժի կամ քրեախրավական ներգործության այնպիսի տեսակ, որը հանցանք կատարած անչափահասի համար կլինի իմաստավորված, կապահովի հասարակությունում նրա վերաինտեգրումը, վերասոցիալականացումը և նոր հանցագործությունների կանխարգելումը:

Նշված խնդրի լուծման համար առանցքային կարևորություն ունեն այն սկզբունքները և մոտեցումները, որոնք պետք է կիրառվեն անչափահասների գործերով արդարադատություն իրականացնելիս: Անչափահասների նկատմամբ պատժ կամ քրեախրավական ներգործության այլ միջոց նշանակելիս դատարանները դեկլարվում են երկու խումբ սկզբունքներով՝

1. պատժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, որոնք հավասարապես կիրառելի են թե՛ չափահասների, թե՛ անչափահասների նկատմամբ,
2. անչափահասների նկատմամբ կիրառվող առանձնահատուկ սկզբունքներով՝ պայմանավորված անչափահասների տարիքային, սոցիալական, ֆիզիոլոգիական, հոգեբանական առանձնահատկություններով:

1-ին խմբին են դասվում *օրինակաճանություն* (նշանակվող պատժի նախատեսված լինելը Քրեական օրենսգրքում), *նշանակվող պատժի որոշակիություն* (դատավճռում հստակ պետք է նշված լինի ինչպես պատժատեսակը, այնպես էլ պատժաչափը), *արդարության և անհատականացման* (նշանակվող պատժը պետք է համապատասխանի կատարված արարքին, հանցավորի անձնավորությանը), *հիմնավորվածություն* (դատարանի կողմից պետք է հիմնավորվեն կոնկրետ գործով այս կամ այն պատժատեսակի կամ քրեախրավական ներգործության միջոցի նշանակման անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը), *մարդասիրության* (պատիժը չպետք է անձին ֆիզիկական կամ հոգեկան տառապանք պատճառի կամ նվաստացնի նրա արժանապատվությունը) սկզբունքները: Դրանք արտացոլված են նաև ՀՀ գործող քրեական օրենսգրքի հոդված 61-ում, որը սահմանում է.

«1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

3. Հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել խիստը նշանակվում է, եթե նվազ խիստ տեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները»:

Վերջին ձևակերպումը «քրեական ռեպրեսիայի տնտեսման» սկզբունքի դրսևորում է, որի էությունն այն է, որ դատարանը միշտ պետք է նախապատվություն տա առավել մեղմ պատժատեսակին, եթե այն բավարար է սոցիալական արդարությունը վերականգնելու, անձի հետագա հանցավոր վարքագիծը կանխելու, նրա վերասոցիալականացման համար: Այս սկզբունքը առանձին կարևորություն ունի անչափահասների նկատմամբ պատիժ նշանակելիս:

Այնուհանդերձ, ՀՀ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ ՀՀ-ում դատարանները դատավճիռ կայացնելիս ոչ միշտ են հիմնավորում ավելի խիստ պատժատեսակի կիրառման իրենց դիրքորոշումը, այլ բավարարվում են միայն կոնկրետ գործով, իրենց համոզմամբ, արդյունավետ պատժատեսակի և պատժաչափի մատնանշմամբ: Բացի դրանից, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 61-ի 3-րդ մասում արտացոլված դրույթը պահանջում է հիմնավորել միայն առավել խիստ պատժի նշանակման անհրաժեշտությունը, մինչդեռ ճիշտ կլիներ, որ դատարանը հիմնավորեր, թե ինչու հնարավոր չէ նշանակել առավել մեղմ պատիժ կամ քրեախրավական ներգործության այլ միջոց: Դա չափազանց կարևոր է հատկապես անչափահասների

պարագայում, քանի որ հաճախ անհրաժեշտություն է առաջանում հիմնավորելու, թե ինչու դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառումը բավարար չի կարող լինել հանցանք կատարած անչափահասի հետագա հանցավոր վարքագիծը կանխելու առումով:

Պատժի նշանակման ընդհանուր սկզբունքներից բացի՝ հանցավոր վարքագիծ դրսևորած անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելիս կիրառվում են նաև առանձնահատուկ սկզբունքներ և մոտեցումներ: Մասնավորապես, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ CM/Rec (2008)11 հանձնարարականում սահմանված՝ «Պատիժների կամ այլ միջոցների ենթարկված անչափահաս իրավախախտների վերաբերյալ Եվրոպական կանոնների» կետ 2-ի վերլուծությունից հետևում է, որ անչափահասների նկատմամբ պատիժներ կամ նրանց հանցավոր վարքագծին արձագանքելու այլ եղանակներ նշանակելիս առաջնահերթություն պետք է տրվի դաստիարակչական բնույթի, կանխարգելիչ և վերականգնողական միջոցներին: Օրինակ, եթե հնարավոր է պատժի նպատակներին հասնել անչափահասի նկատմամբ ոչ թե պատիժ, այլ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով, ապա պետք է ընտրվի քրեաիրավական արձագանքման այդ տարբերակը:

Նույն փաստաթղթում նշված են նաև անչափահասների գործերով արդարադատության «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայով սահմանված սկզբունքները՝ խտրականության արգելքը, «երեխայի լավագույն շահերը», երեխայի բնականոն զարգացումն ապահովող ներգործության միջոցի ընտրությունը որպես առաջնահերթություն դիտելը, ազատությունից զրկելու հետ կապված ներգործության միջոցները որպես ծայրահեղ միջոց դիտարկելը և դրանց այլընտրանք հանդիսացող միջոցների լայն կիրառությունը, երեխայի լաված լինելու իրավունքը երաշխավորելը, երեխայի արժանապատվությունը հարգելը: Այս սկզբունքների խախտման անթույլատրելիությունը նշել է նաև ՄԻԵԴ-ը՝ T and V vs UK գործերով¹:

Երեխայի նկատմամբ պատիժ կամ քրեաիրավական ներգործության այլ միջոց նշանակելու սկզբունքները առավել մանրամասն սահմանված են Պեկինյան կանոնների (3) կետ 17.1-ում, որը սահմանում է՝

ա) ներգործության միջոցները միշտ պետք է համարժեք լինեն ոչ միայն իրավախախտման հանգամանքներին և ծանրությանը, այլև անչափահասի դրությանը և կարիքներին, ինչպես նաև հասարակության պահանջներին,

բ) անչափահասի անձնական ազատության սահմանափակման մասին որոշումը պետք է ընդունվի միայն հարցի մանրագնին քննարկումից հետո, և սահմանափակումը պետք է հասցնել հնարավոր նվազագույնի,

¹ Տե՛ս **Charlotte Walsh**. Youth Justice and Neuroscience: A Dual-Use Dilemma//. British Journal of Criminology (2011) 51, էջ 21–39:

զ) *անչափահաս իրավախախտին կարելի է գրկել ազատությունից, եթե միայն նա մեղավոր է ճանաչվում այլ անձի դեմ բռնությամբ լուրջ արարք գործելու կամ լուրջ իրավախախտումներ բազմիցս կատարելու մեջ, և եթե առկա չէ արձագանքման այլ համապատասխան միջոց,*

դ) *անչափահասի գործի քննության ժամանակ նրա բարեկեցության հարցը պետք է որոշիչ գործոն լինի»:*

Անչափահասների գործերով արդարադատություն իրականացնելիս առանձնահատուկ են նաև այն նպատակները, որոնց պետք է ձգտի իրավասու մարմինը: Մասնավորապես, Պեկինյան կանոնների կետ 5.1-ի համաձայն՝ «...անչափահասների գործերով արդարադատության համակարգը պետք է հատկապես կարևորի անչափահասի բարեկեցությունը և ապահովի, որ անչափահաս իրավախախտների նկատմամբ կիրառվող ցանկացած միջոց միշտ համարժեք լինի թե՛ իրավախախտի առանձնահատկություններին, թե՛ իրավախախտման հանգամանքներին»: Ներկայացված դրույթից հետևում է, որ անչափահասների գործերով արդարադատություն իրականացնելիս պետք է երաշխավորվեն.

Անչափահասի բարեկեցությունը ապահովելու նպատակը, ինչը ենթադրում է խուսափել զուտ պատժիչ ներգործությունից, հանցագործությանն արձագանքելիս նշանակել այնպիսի քրեաիրավական ներգործության միջոցներ, որոնք կապահովեն հանցանք կատարած անչափահասի կարիքները, կերաշխավորեն «երեխայի լավագույն շահից» գործելու պահանջը:

«Ջամայափության սկզբունքի» ապահովման նպատակը, ինչը ենթադրում է կատարվածին՝ իրավախախտման ծանրությանը, բնույթին, հանցանք կատարած անձի առանձնահատկություններին (առողջական, սոցիալական վիճակին, մտավոր զարգացման, հասունության աստիճանին, ընտանեկան հանգամանքներին, կյանքի պայմաններին և այլն), հանցագործությունից հետո դրսևորած վարքագծին (օրինակ՝ պատճառված վնասը հարթելը կամ հատուցելը) համաչափ արձագանքի երաշխավորում:

Այս նպատակները, թեև փոքր-ինչ վերացական և անորոշ կերպով, ամրագրվել են նաև ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 90-ի 1-ին մասում, որի համաձայն՝ «անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի են առնվում նրա կյանքի և դաստիարակության պայմանները, հոգեկանի զարգացման աստիճանը, առողջության վիճակը, անձի այլ առանձնահատկությունները, ինչպես նաև նրանց վրա այլ անձանց ազդեցությունը...»:

Փաստորեն, նշված գործոնների ուսումնասիրությունն է դատարանին հնարավորություն տալիս վեր հանելու ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 62-ում ուղղակիորեն չամրագրված պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները և նշանակելու մեղմ պատիժ:

Ներկայացված դրույթից հետևում է, որ ՀՀ-ում դատարանը պետք է ուշադրություն դարձնի՝

ա) անչափահասի կյանքի և դաստիարակության պայմաններին՝ որոշելու համար, թե որքանով են այդ պայմանները (օրինակ՝ ընտանիքի նյութական ծանր վիճակը, ընտանիքում հաճախադեպ վիճաբանությունները, բռնության գործադրումը, երեխայի ծնողի կամ ընտանիքի այլ անդամի կողմից ակոհուլի չարաշահումը կամ թմրանյութ գործածելը², անբարո վարքագիծը, երեխայի նկատմամբ անտարբերությունը, ծնողական հոգատարության, ընտանիքում ջերմ հուզական կապերի բացակայությունը, երեխայի մեջ ամենաթողության մթնոլորտի ձևավորումը կամ խեղված արժեքների սերմանումը) դերակատարություն ունեցել անչափահասի հանցավոր վարքագծի ձևավորման մեջ³:

բ) Հոգեկանի զարգացման աստիճանին, ինչը ենթադրում է անձի մտավոր, կամային և հուզական ոլորտների գնահատում: Անչափահասներին բնութագրական համարձակությունը, վճռականությունը, անկայունությունը, իմպուլսիվությունը, կամակորությունը, էմպաթիայի բացակայությունն են հաճախ պայմանավորում նրանց շեղվող կամ հանցավոր վարքագիծը:

գ) Առողջական վիճակին (ինչպես ֆիզիկական, այնպես էլ՝ հոգեկան), քանի որ հանցավոր վարքագծի դրսևորման պատճառը կարող են լինել ինչպես անձի ֆիզիկական արատները, քրոնիկ հիվանդություններով պայմանավորված հոգեկան վիճակը, այնպես էլ տարաբնույթ հոգեկան խանգարումները, որոնք ոչ միշտ են հանգեցնում անմեղսունակության կամ սահմանափակ մեղսունակության: Բացի դրանից, այս գործոնների պարզաբանումը կարևոր է նաև անչափահասի հատուկ կարիքները բացահայտելու և դրանց բավարարումը երաշխավորող քրեաիրավական արձագանքի միջոց ընտրելու համար:

դ) Անձի այլ առանձնահատկություններին: Այս ձևակերպումը շատ ընդգրկուն է և թույլ չի տալիս հստակ կոդմոդրոշվել, թե որ հանգամանքները կամ հատկանիշները պետք է ուսումնասիրվեն անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելիս⁴: Ենթադրվում է, որ դրանք պետք է բնութագրեն, օրինակ, անձի վարքագիծը, արժեքները, մոտիվացիոն ոլորտի առանձնահատկությունները, նրա կարիքները, սոցիալական կարգավիճակը (վերաբերմունքը ուսմանը, աշխատանքին, ըն-

² Տե՛ս **Пудовочкин Ю. Е.** Уголовно-правовая борьба с вовлечением несовершеннолетних в совершение антиобщественных действий: проблемы квалификация и профилактики. Ставрополь, 2000, էջ 99:

³ Տե՛ս **Шестаков Д. А.** Криминология: Новые подходы к преступлению и преступности. Противодействие преступности в изменяющемся мире. СПб., 2006, էջ 345:

⁴ Տե՛ս **Долматов А. О.** Учет личности несовершеннолетнего при назначении уголовного наказания // «Правовые проблемы укрепления российской государственности». Томск, 2013, էջ 95-96:

կերներին, հասարակությանը, հասարակության համար ընդունելի արժեքային համակարգին, ունակությունը դիմակայելու շրջապատի բացասական ազդեցությանը, մանկական մոտիվացիայով պայմանավորված առանձնահատկությունները արկածախնդրություն, ամեն գնով ինքնահաստատման, մեծ երևալու ձգտում, պատճառով ավասար հարթելու ձգտում և այլն):

ե) Երեխայի վրա այլ անձանց ազդեցությունը, որի գնահատումը խիստ կարևոր է. երեխային բնութագրական է ներշնչվողականությունը, ուրիշի ազդեցության տակ ընկնելը, հեշտությամբ գայթակղվելը, որոնք էական դեր են խաղում նրա հանցավոր վարքագծի մեխանիզմում: Ընդ որում, «այլ անձ» ասելով պետք է հասկանալ ինչպես չափահաս, այնպես էլ անչափահաս անձի: Անհրաժեշտ է, որ անչափահասը ոչ թե պարզապես գործի այլ անձի հետ, այլ նրա վարքագիծը պայմանավորված լինի այդ անձի բացասական ազդեցությամբ:

ՀՀ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ դատարանները հաճախ անտեսում են այն միկրոմիջավայրի, օրինակ՝ ռեֆերենտային խմբերի ուսումնասիրությունը, որի հետ անչափահասն անմիջական և անընդհատ շփում է ունենում⁵: Մինչդեռ նման գործոնների ուսումնասիրությունը խիստ կարևոր է ոչ միայն նրա հանցավոր վարքի պատճառական մեխանիզմը վեր հանելու, այլև նրա հետագա հնարավոր հանցավոր վարքագիծը կանխելու համար:

Անչափահասի կողմից կատարված հանցանքը քննելիս երեխայի լավագույն շահից բխող որոշում կայացնելու համար դատարանը պետք է ամբողջական տեղեկատվություն ունենա երեխայի, նրա սոցիալական կարգավիճակը, կարիքները բնութագրող հանգամանքների, ինչպես նաև ՀՀ-ում հասանելի՝ հանցանք կատարած երեխաների համար նախատեսված վերականգնողական, կրթական բնույթի ծրագրերի մասին: Երեխայի վերաբերյալ տեղեկատվությունը դատարանը կարող է ստանալ անչափահասի ծնողներից, հարևաններից, ընկերներից, ուսուցիչներից կամ այլ անձանցից ու մարմիններից: Ճիշտ կլիներ, որ դատարանը չբավարարվեր միայն իր ձեռք բերած նյութերով, այլ գուգակցեր հատուկ մասնագետի (օրինակ՝ պրոբացիոն ծառայության աշխատակցի) կողմից անչափահասի վերաբերյալ պատրաստված գեկույցով, որը թույլ կտար առավել հավաստի ներկայացնել անչափահասի հոգեբանական բնութագիրը, նրան բնութագրող բոլոր առանձնահատկություններն ու կարիքները: Ցավոք, ներկայումս համապատասխան կանոնակարգումների բացակայության պատճառով ՀՀ-ում նման պրակտիկա չի գործում:

⁵ St' u Долматов А. О. Обстоятельства, характеризующие условия жизни и воспитания несовершеннолетних, совершивших преступления, подлежащие учету при назначении наказания // "Вестник Томского государственного университета". Право. 2014, № 2 (12), էջ 54-58:

Բանալի բառեր – պատիժ, պատժի նշանակման սկզբունքներ, երեխայի լավագույն շահեր, պատժի արդյունավետություն, Պեկինյան կանոններ, երեխայի բարեկեցություն

АННА МАРГАРЯН – Особенности назначения наказания и иных мер уголовно-правового воздействия несовершеннолетним. – Трудней и ответственней всего при производстве правосудия в отношении несовершеннолетних выбрать действенные меры реагирования на совершённое подростком преступное деяние. Обычно, выбирая такие меры, учитывают как общие, так и специальные принципы назначения наказания. Последние предусмотрены как национальным законодательством, так и международно-правовыми нормами, учитывающими возрастные, социально-физиологические, психологические особенности детей.

Однако в Армении ввиду несовершенства уголовного законодательства названные принципы не всегда реализуются. Это связано с поверхностным, абстрактным регулированием специальных правил назначения наказания несовершеннолетним. Необходимо, говорится в статье, детально регулировать требования, которые должны быть учтены компетентными органами при назначении несовершеннолетним наказания или иных уголовно-правовых мер воздействия.

Ключевые слова: наказание, принципы назначения наказания, интересы подростка, эффективность наказания, Пекинские правила

ANNA MARGARYAN – Peculiarities of Juvenile Sentencing. – The most difficult and crucial decision when dealing with juvenile justice is the choice of effective measures to address criminal behaviour of the juveniles. Usually, both general and special principles of sentencing are applied when making such a choice and especially – when sentencing a juvenile to a punishment. Special principles of sentencing are provided both by national and international regulations and are conditioned by the peculiarities of the children due to their age, social, psychological and social status.

However, the latter ones are not always fulfilled in Armenia because of the lacks and shortcomings of criminal legislation. First of all, this is a result of facile and abstract regulation of special rules of juvenile sentencing. The author justifies the necessity of detailed regulation of those requirements, which should be secured by competent authorities in the process of juvenile sentencing.

Key words: punishment, sentencing principles, best interests of a child, efficiency of punishment, Beijing rules, wellbeing of a child

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՔԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՕԼԻՄՊԻԱ ԳԵՂԱՍՅԱՆ

Արդի ժամանակաշրջանում բոլոր տեղեկատվության արդյունաբերության բուռն զարգացման ակնատեսներն ենք, ինչը պայմանավորված է գիտության ու տնտեսության և հասարակության զարգացման օրինաչափություններով: Հասարակական կյանքի տարբեր ոլորտների ու գործունեության մասին տեղեկությունների, տվյալների փոխանակման աճի շնորհիվ «տեղեկատվություն» հասկացությունը 20-րդ դարի սկզբներին հայտնվեց գիտնականների հատուկ ուշադրության կենտրոնում¹: Ակնհայտ դարձավ, որ առօրյա խնդիրների լուծումից մինչև գիտակրթական ոլորտի պլանավորումն ու պետական կառավարման արդյունավետ իրականացումը ուղղակիորեն կախված են նաև յուրաքանչյուրի ու բոլորի տեղեկացվածության մակարդակից: Ցանկացած հասարակության մեջ նույնիսկ սովորությունների ու ավանդույթների պահպանումը, իրավագիտակցության մակարդակը, տնտեսական, գիտական, էկոլոգիական և այլ ոլորտներում արձանագրված հաջողություններն ու բարձր պրոֆեսիոնալիզմ ապահովող կադրերի առկայությունը ևս սերտորեն առնչվում են հասարակության տեղեկացվածության որակին: Պատշաճ տեղեկացվածությունը մի կողմից ապահովում է գաղափարական հարուստ ներկայակ հասարակության կազմակերպման և զարգացման դաշտում, մյուս կողմից՝ իշխանություններին զգոն պահող գործոն է:

20-րդ դարն առանձնանում է նաև յուրաքանչյուրի տեղեկատվության իրավունքի և դրա հետ կապված հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման առումով: Ասվածի վառ ասպարեցն է այն փաստը, որ տեղեկատվության ազատության իրավունքն այսօր արդեն ամրագրված է աշխարհի գրեթե բոլոր երկրների սահմանադրություններում ու բազմաթիվ միջազգային պայմանագրերում («Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր», 1948 թ., 19 հոդված, «Մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա, 1950 թ., 10 հոդ-

¹ Տե՛ս **Городов О. А.** Информационное право. М., 2014, էջ 5:

ված, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր», 1966 թ., 19 հոդված, «Էկոլոգիական տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացմանը հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա, 1998 թ., «Բաց տեղեկությունների միջազգային խարտիա» և այլն)², և «տեղեկատվություն» հասկացությունն էլ իր հերթին կենտրոնական տեղ է զբաղեցնում բոլոր գիտությունների ու գիտելիքների համակարգում:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվության մատչելիության իրավունքի օրենսդրական ամրագրմանը, ապա թե՛ 1995 թ. ՀՀ-ում ընդունված Սահմանադրության³ և թե՛ 2005 թ. փոփոխություններով Սահմանադրության մեջ⁴ ամրագրված է եղել յուրաքանչյուրի խոսքի ազատության իրավունքը, ինչը ներառում էր նաև տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից: 2015 թ. դեկտեմբերի ՀՀ Սահմանադրության փոփոխությունների ընդունման հանրաքվեի արդյունքում⁵ ներկայումս տեղեկատվության ազատության իրավունքը կարգավորվել է հետևյալ ձևակերպմամբ. «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու ու ստանալու և տարածելու ազատությունը...»:

Անհրաժեշտ է նշել, որ, Սահմանադրությամբ ամրագրվելուց զատ, ՀՀ օրենսդրության՝ քննարկվող ոլորտի խիստ կարևոր ու առաջադեմ քայլերից է համարվում նաև 2003 թ. սեպտեմբերին ՀՀ-ում «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի⁶ ընդունումը, որը ՀՀ-ում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր մարդու իրավունք է վերապահում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, բյուջեից ֆինանսավորվող կազմակերպություններից, ինչպես նաև հանրային նշանակություն ունեցող մասնավոր կազմակերպություններից ստանալու նրանց տիրապետած գրեթե ողջ տեղեկատվությունը:

² Տե՛ս ՀՀ ԱԳՆ Պաշտոնական տեղեկագիր, Հրատարակության երրորդ տարի, 2004, № 4 (12): ՀՀ ԱԳՆ Պաշտոնական տեղեկագիր, 2002, № 17 (192): ՀՀ Պաշտոնական տեղեկագիր, 1997.12.25/29: <http://www.mnp.am/?p=201>

³ Ընդունվել է 05.07.1995, ուժի մեջ է մտել 13.07.1995:

⁴ Ընդունվել է 27.11.2005, ուժի մեջ է մտել 06.12.2005, ՀՀ ՊՏ, 2005.12.05, Հատուկ թողարկում:

⁵ Ընդունվել է 06.12.2015, ուժի մեջ է մտել 22.12.2015, ՀՀ ՊՏ, 2015.12.21, Հատուկ թողարկում:

⁶ Ընդունվել է 23.09.2003, ուժի մեջ է մտել 15.11.2003, ՀՀ ՊՏ, 2003.11.05/55(290):

Միջազգային չափորոշիչներին համահունչ՝ օրենքը նշված կազմակերպություններին պարտադրում է հրապարակել նաև իրենց գործունեության հետ կապված տեղեկատվություն՝ անկախ հարցումներ ստանալուց: Այս օրենքի կարևորագույն արժանիքներից մեկն էլ այն դրույթի առկայությունն է, որը պատասխանատվություն է նախատեսում տեղեկատվությունը ապօրինաբար չտրամադրելու կամ ոչ լիարժեք տեղեկատվություն տրամադրելու համար:

Իհարկե, ակնհայտ է, որ «տեղեկատվություն» եզրույթն այսօր հավակնում է դառնալ տեսական ու պրակտիկ ոլորտներում իր կարևորությամբ սահմաններ չճանաչող հասկացություն, սակայն պետք է նշել, որ այն երբեմն հանդես է գալիս նաև բավականին բարդ ու հակասական, իսկ առանձին դեպքերում՝ նույնիսկ վիճելի կողմերով: Մասնավորապես, անհրաժեշտ է նշել, որ «տեղեկատվություն» հասկացությունը ներառում է ամենատարբեր ոլորտներ, այդ թվում նաև «էկոլոգիական տեղեկատվությունը», որը բավականին նոր հասկացություն է թե՛ ազգային, թե՛ միջազգային օրենսդրության բնագավառներում: Ժողովրդագրական ու քաղաքական լուրջ տեղաշարժերի հետ մեկտեղ՝ անսպասելի փոփոխություններ է կրում շրջակա բնական միջավայրը: Նոր տեխնոլոգիաները հնարավորություններ ընձեռեցին հավաքելու ու մշակելու շրջակա միջավայրի փոփոխությունները արձանագրող հսկայական նյութ⁷: Ստեղծված էկոլոգիական գլոբալ ճգնաժամի պայմաններում հատկապես կարևորելով էկոլոգիական տեղեկատվության դերն ու նշանակությունը՝ միջազգային հանրությունն ու առանձին պետություններ 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբներին նախանձախնդիր են, որ հնարավորինս հստակ սահմանվեն էկոլոգիական տեղեկատվության հասկացությունը, էկոլոգիական տեղեկատվության մատչելիության իրավունքի բովանդակությունը, սուբյեկտների շրջանակը, սուբյեկտների իրավունքներն ու պարտականությունները: Բազմաթիվ պետությունների երկարատև ու համախմբված աշխատանքի շնորհիվ 1998 թ. Դանիայի Օրհուս քաղաքում ընդունվեց «էկոլոգիական տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացմանը հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիան (այսուհետ՝ Օրհուսի կոնվենցիա), որի կարգավորման ոլորտն ընդգրկում է էկոլոգիական տեղեկատվության և այդ իրավունքի մատչելիության իրավական կարգավորման բոլոր հարաբերությունները: Որպես միջազգային աննախադեպ փաստաթուղթ, Օրհուսի կոնվենցիան հստակորեն մատնանշում է մարդու առողջ ու բարենպաստ միջավայրում ապրելու իրավունքի մեջ էկոլոգիական տեղեկատվության մատչելիության իրա-

⁷ Ст' у Данилов-Данилян В. И., Лосев К. С. Экологический вызов и устойчивое развитие. М., 2000, էջ 8:

վունքի բացառիկ դերն ու նշանակությունը, սահմանում այդ իրավունքի արդյունավետ իրականացման մեխանիզմները ու նախատեսում պատասխանատվություն այն խախտելու համար:

Իհարկե, տեղեկատվության, այդ թվում էկոլոգիական տեղեկատվության մատչելիությունը բազմաթիվ երկրների օրենսդրությամբ հստակ ամրագրված լինելը շատ կարևոր է: Շատ հաճախ էկոլոգիական տեղեկատվության ոլորտը պետք է փաստեր ու տվյալներ հավաքի, այնուհետև դրանք ուսումնասիրի և վերլուծի այնպիսի բնական ռեսուրսների ու երևույթների մասին, ինչպիսիք են, օրինակ, ռադիոակտիվ ճառագայթումը, վիրբացիան, աղմուկը: Ավելին, պետությունների համար ակնհայտ դարձավ, որ շատ դեպքերում տեղեկատվությունը, այդ թվում էկոլոգիական տեղեկատվությունը, որոշակի հանգամանքներից ելնելով, պետք է հասանելի լինի միայն օրենքով նախատեսված սուբյեկտների շրջանակի համար: Խոսքն այն տեղեկատվության մասին է, որը նախատեսված չէ երրորդ անձանց տրամադրելու կամ, առհասարակ, հրապարակելու համար: Դրանք կարող են լինել անձի անձնական տվյալները, պետական, բժշկական, արդյունաբերական գաղտնիքը և այլն: Ուշագրավ է, որ աշխարհում օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ ակտերում մարմնավորված են գաղտնիության մոտ հիսուն տեսակներ, որոնց թիվը շարունակում է աճել⁸: Որոշակի տեղեկատվություն տրամադրելու սահմանափակումները կապված են հասարակական կյանքի տարբեր ոլորտների առանձնահատկությունների, մարդկանց կյանքի ու կենսագործունեության ապահովության, հասարակական կարգի պահպանության, պետությունների անվտանգության հետ: Պատահական չէ, որ ավելի քան վեց տասնյակից ավելի երկրներում տեղեկատվության ազատության հարաբերությունները կարգավորող իրավական ակտերում համապատասխան դրույթով առանձնացված է այն տեղեկատվությունը, որը ենթակա չէ հրապարակման առանց կոնկրետ անձանց համաձայնության կամ ենթակա չէ հրապարակման ընդհանրապես: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 8 հոդվածի համաձայն՝ 1. Տեղեկատվություն տնօրինողը, ...մերժում է տեղեկատվության տրամադրումը, եթե դա՝

ա. պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք,

բ. խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակ-

⁸ Տե՛ս **Бачило И. Л., Лопатин В. Н., Федотов М. А.** Информационное право: учебник. СПб., 2005, էջ 354:

ցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը,

գ. պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ,

դ. բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք),

ե. խախտում է հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ-ում ևս օրենսդրական ամրագրում են ստացել որոշակի տեղեկատվություն տրամադրելու սահմանափակումներ, ինչն առկա է նաև Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի, Ֆրանսիայի, Գերմանիայի և մի շարք այլ երկրների օրենսդրություններում:

Օրհուսի կոնվենցիան ևս առաջնորդվում է այն պարզ տրամաբանությամբ, որ առանձին դեպքերում, որոշակի անձանց անձնական տվյալների և երկրում հասարակական անվտանգության ու որոշ այլ ոլորտների ապահովության երաշխիքներից ելնելով, ավելի նպատակահարմար է չհրապարակել համապատասխան տեղեկատվությունը: Բնականաբար, թե՛ յուրաքանչյուր երկիր, թե՛ միջազգային հանրությունն այս պարագայում առաջնորդվում են այն չափորոշիչներով, որ համապատասխան տեղեկատվությունը հրապարակելը չվատթարացնի ու բացասական ազդեցություն չունենա երկրի արտաքին քաղաքականության ու ներքին գործունեության առանձին ոլորտների վրա, որ պաշտպանվեն անձի անձնական տվյալները: Այսինքն՝ էկոլոգիական տեղեկատվության տրամադրման սահմանափակումները յուրաքանչյուր առանձին դեպքում բխում են հենց շրջակա միջավայրի էկոլոգիական կայունության ապահովման, անձանց ու երկրի տնտեսության պահանջների բավարարման, բնական ռեսուրսների արդյունավետ կառավարման շահերից:

Մասնավորապես, Օրհուսի կոնվենցիայի 4 հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ «Շրջակա միջավայրին վերաբերող տեղեկատվություն ստանալու կապակցությամբ կատարված հարցումը կարող է մերժվել, եթե այդպիսի տեղեկատվության հրապարակումը բացասաբար կանդրադառնա՝

ա. պետական մարմինների գործունեության գաղտնիության վրա, եթե այդպիսի գաղտնիությունն նախատեսված է ազգային օրենսդրությամբ.

բ. միջազգային հարաբերությունների, ազգային պաշտպանության կամ հանրային անվտանգության վրա.

գ. արդարադատության իրականացման, անձանց՝ արդար դատական քննության իրավունքի վրա կամ պետական մարմինների՝ քրեական կամ կարգապահական գործերով քննություններ անցկացնելու կարողության վրա.

դ. առևտրային և արդյունաբերական տեղեկատվության գաղտնիության վրա՝ այն դեպքերում, երբ նման գաղտնիությունը օրինական տնտեսական շահերի պաշտպանության նպատակով պահպանվում է օրենքով: Այս շրջանակներում շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող արտանետումների մասին տեղեկատվությունը ենթակա է բացահայտման.

ե. մտավոր սեփականության իրավունքի վրա.

զ. անձնական տվյալների և/կամ ֆիզիկական անձանց վերաբերող արխիվների գաղտնիության վրա, եթե համապատասխան ֆիզիկական անձը համաձայնություն չի տվել տրամադրելու այդպիսի տեղեկատվություն՝ ելնելով ազգային օրենսդրության պահանջներից.

է. հարցվող տեղեկատվությունը ներկայացրած երրորդ կողմի շահերի վրա, եթե այդ կողմը չի կրում նման ձևով վարվելու իրավական պարտականություն, կամ եթե այդ կողմի վրա չի կարող դրվել այդպիսի պարտավորություն, և այն դեպքերում, երբ այդ կողմը չի տվել համաձայնություն՝ հրապարակելու համապատասխան տեղեկատվությունը, կամ

ը. շրջակա միջավայրի վրա, որին վերաբերում է այդ տեղեկատվությունը, օրինակ՝ հազվագյուտ տեսակների բազմացման վայրերի մասին»:

Այս հոդվածում նախատեսված սահմանափակումների վերլուծության կարևորագույն բաղկացուցիչ է այն հանգամանքը, որ Օրինակի կոնվենցիան չի պարտավորեցնում Կողմ պետություններին իրենց ազգային օրենսդրությամբ պարտադիր կերպով արտացոլելու վերոհիշյալ բոլոր սահմանափակումները: Ավելին, տեղին ենք համարում վկայակոչել նույն Կոնվենցիայի նույն հոդվածի վերջին կետը, ըստ որի՝ «Մերժման վերոհիշյալ հիմքերը ենթակա են սահմանափակ մեկնաբանման՝ հաշվի առնելով այդ տեղեկատվության հրապարակման հարցում հասարակության շահագրգռվածությունը, և այն, թե արդյոք հարցվող տեղեկատվությունն առնչվում է շրջակա միջավայր կատարվող արտանետումներին», և 3 հոդվածի 5-րդ կետը, ըստ որի՝ «Սույն Կոնվենցիայի դրույթները չեն սահմանափակում որևէ Կողմի իրավունքը շարունակելու իրագործել կամ ձեռք առնել շրջակա միջավայրին առնչվող հարցերի վերաբերյալ տեղեկատվության ավելի լայն մատչելիություն...», քան դա նախատեսված է Կոնվենցիայով»: Վերոհիշյալի վառ ապացույցն է հենց «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով տեղեկատվության ազատության՝ ավելի քիչ թվով

սահմանափակումներ ամրագրելը: Խոսքը մասնավորապես Օրիուսի կոնվենցիայով նախատեսված տեղեկատվության տրամադրման մերժման այն հիմքի մասին է, ըստ որի՝ շրջակա միջավայրին վերաբերող տեղեկատվություն ստանալու հարցումը կարող է մերժվել, եթե այդպիսի տեղեկատվության հրապարակումը բացասաբար կանդրադառնա շրջակա միջավայրի վրա, օրինակ՝ հազվագյուտ տեսակների բազմացման վայրերի մասին: Այս բացառությունը Կոնվենցիայի հեղինակները նախատեսել են այն նպատակով, որ կառավարությունը հնարավորություն ունենա պահպանելու այն տարածքները, որտեղ բազմանում են, օրինակ, անհետացման եզրին գտնվող բույսեր: Ըստ Կոնվենցիայի հեղինակների՝ այդ տարածքների մասին տեղեկատվությունը հասարակությանը չտրամադրելը որոշակի ուղեցույց է պետական մարմինների համար՝ հարցվող տեղեկատվությունը տրամադրելու կամ չտրամադրելու մասին որոշում կայացնելիս նկատի ունենալու այն վնասը, որը կարող է հասցվել շրջակա միջավայրին՝ դրա մասին տեղեկատվություն տրամադրելով⁹: Սակայն ՀՀ ազգային օրենսդրությունն այս տիպի տեղեկատվությունը հասարակությանը չտրամադրելու մասին որևէ դրույթ չի պարունակում: Դեռ ավելին, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8 հոդվածը նախատեսում է, որ տեղեկատվության տրամադրումը չի կարող մերժվել, եթե

... բ. տեղեկատվությունը ներկայացնում է ՀՀ տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պահպանության ... բնագավառում տիրող իրական վիճակը...:

ՀՀ օրենսդրության այս դրույթը տարածվում է շրջակա միջավայրի մասին, այդ թվում՝ հազվագյուտ տեսակների բազմացման վայրերի մասին տեղեկատվության մատչելիության վրա: Մեր խորին համոզմամբ, օրինակ, անհետացման եզրին գտնվող կոնկրետ բուսատեսակների կամ կենդանատեսակների պահպանության գործում կարևորագույն իրավական երաշխիքը տվյալ վայրերը որպես բնության հատուկ պահպանվող տարածքներ սահմանելն է, ինչը նախատեսված է «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքով¹⁰: Այդ օրենքում հստակ նախատեսված է, որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի պահանջելու և ստանալու բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, օգտագործման և իրավիճակի վերաբերյալ տեղեկատվություն, և լիազորված պետական մարմինը տեղեկատվություն է տրամադրում բնության հատուկ պահպանվող տարածքում նախատեսվող գործունեության, բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանության և օգտագործման վերաբերյալ որո-

⁹ Տե՛ս «Орхусская Конвенция: Руководство по осуществлению». Второе издание, М., 2014, էջ 109:

¹⁰ Ընդունվել է 27.11.2006, ուժի մեջ է մտել 04.01.2007, ՀՀ ՊՏ, 2006.12.25/66 (521):

շումների, բնության հատուկ պահպանվող տարածքների էկոլոգիական իրավիճակի մասին (հոդված 29, 30): Ի լրումն վերոհիշյալի՝ տեղին ենք համարում վկայակոչել նաև «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին»¹¹ ՀՀ օրենքի 10 հոդվածը, ըստ որի՝ պետական և ծառայողական գաղտնիքի շարքին չեն կարող դասվել՝

... բ. տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պահպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, ներքին առևտրի, մշակույթի բնագավառներում տիրող իրական վիճակը ներկայացնող տեղեկությունները: Վերոհիշյալ դրույթների վերլուծությունից բխում է, որ Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրությունը, չհակասելով Օրհուսի կոնվենցիայի դրույթներին, նախատեսում է, որ շրջակա միջավայրի և դրա վիճակի մասին տեղեկատվությունը ենթակա է հրապարակման:

Նմանատիպ մոտեցում է ցուցաբերված նաև Ուկրաինայի Սահմանադրությամբ, որի 50 հոդվածը սահմանում է, որ ոչ ոք չի կարող սահմանափակել շրջակա միջավայրի վիճակի, սննդամթերքների ու կենցաղային ապրանքների մասին տեղեկատվության մատչելիությունը:

Ինչ վերաբերում է անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության պահպանությանը, ապա պետք է նշել, որ թե՛ Օրհուսի կոնվենցիան, թե՛ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը սահմանում են անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության պահպանությունը, որի նպատակն է անձանց մասին համապատասխան տեղեկությունների տիրապետելու դեպքում զերծ մնալ դրանք՝ առանց տվյալ անձի համաձայնության հրապարակելուց՝ ելնելով նրա անձնական և ընտանեկան կյանքի պահանջների բավարարման, կյանքի ու կենսագործունեության տարբեր ոլորտներում կայունության ապահովման կարևորությունից:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8 հոդվածը, Օրհուսի կոնվենցիայի 4 հոդվածի գ կետի պահանջներին համահունչ, նախատեսում է. «Տեղեկատվություն տնօրինողը, մերժում է տեղեկատվության տրամադրումը, եթե դա՝

...խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը.....»:

Այս իրավունքի ամրագրումն իսկապես անհրաժեշտ և անխուսափելի գործոն է առանձին անձանց իրավունքների և ժողովրդավարական հասարակության շահերի միջև հավասարակշռություն հաստատելու համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մարդու կյանքի

¹¹ Ընդունվել է 03.12.1996, ստորագրվել է 30.12.1996, ՀՀ ԱԺՏ, դեկտեմբեր 1996/23-24 (1123-1124):

որակը մեծ մասամբ կախված է այն շրջակա միջավայրի վիճակից, որտեղ նա բնակվում է, և հաշվի առնելով յուրաքանչյուրի՝ առողջ ու բարենպաստ շրջակա միջավայրի իրավունքի կարևորությունը, կարծում ենք՝ պրակտիկայում բազմիցս կարող են հանդիպել դեպքեր, երբ անձնական և ընտանեկան կյանքի տեղեկատվությունն ուղղակիորեն պայմանավորված է շրջակա միջավայրով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային իրավունքից բխում է, որ անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք ասելով չպետք է ենթադրել միայն պետության «պասիվ» վարքագիծը, այսինքն՝ անձնական և ընտանեկան կյանքին միջամտելուց ձեռնպահ մնալը: Եվրոպական դատարանն իր վճիռներից մեկում նշում է, որ «հարգանք» ասելով պետք է հասկանալ նաև անձի՝ պետության կողմից պաշտպանվելու պոզիտիվ իրավունքը: Պետության պոզիտիվ պարտավորություններն անհրաժեշտ են հատկապես անհատների ֆիզիկական ու բարոյական անձեռնմխելիությունն ապահովելու համար¹²:

Վերոհիշյալ համատեքստում խիստ կարևոր ձեռքբերում պետք է համարել 2015 թ. հուլիսի 1-ից ուժի մեջ մտած՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը¹³, որը իրավական մանրամասն կարգավորման է ենթարկել անձնական տվյալների, դրանք մշակելու, տվյալների սուբյեկտների իրավունքների, անձնական տվյալներ մշակողի պարտականությունների, անձնական տվյալներ մշակելու օրինականության նկատմամբ հսկողության իրավական հարաբերությունները:

Որպես տեղեկատվության, այդ թվում՝ էկոլոգիական տեղեկատվության տրամադրումը մերժելու հաջորդ հիմք ցանկանում ենք անդրադառնալ թե՛ Օրհուսի կոնվենցիայով, թե՛ ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով նախատեսված տեղեկատվության տրամադրման սահմանափակմանը՝ պայմանավորված պետական մարմինների գործունեության գաղտնիությամբ: Կոնվենցիան նախատեսում է, որ գաղտնիության սահմանումը պետք է նախատեսվի ազգային օրենսդրությամբ, ինչը հնարավորություն կտա խուսափելու պատկան մարմինների կողմից տեղեկատվության տրամադրումը անհարկի մերժելուց: Այսինքն՝ պետական մարմինը, որին ներկայացվել է տեղեկատվության տրամադրման հարցումը, չպետք է ինքնուրույն որոշմամբ տվյալ տեղեկատվությունը դասի հրապարակման ոչ ենթակա տեղեկությունների շարքին: Դեռ ավելին, Օրհուսի կոնվենցիայի 4 հոդվածի 6-րդ կետը պարտավորեցնում է յուրաքանչյուր կողմին ապահո-

¹² St' u X and Y v. the Netherlands, Judgment of 26 March 1985, Costello-Roberts v the United Kingdom, Judgment of 25 March, 1983:

¹³ Ընդունվել է 18.05.2015, ուժի մեջ է մտել 01.07.2015, ՀՀ ՊՏ, 2015.06.18/35(1124):

վելու, որ հնարավորության դեպքում հրապարակման ոչ ենթակա տեղեկատվությունն առանձնացվի ընդհանուր տեղեկատվությունից՝ չխախտելով հրապարակման ոչ ենթակա տեղեկատվության գաղտնիությունը, և տրամադրվի պետական մարմինների կողմից: Այս առումով անհրաժեշտ ենք համարում մեջ բերել «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածը, որը սահմանում է. «Պետական գաղտնիքը Հայաստանի Հանրապետության ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, և որոնց տարածումը կարող է ծանր հետևանքներ առաջացնել Հայաստանի Հանրապետության անվտանգության համար: Ծառայողական գաղտնիքը սույն հոդվածի առաջին մասով նախատեսված բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, և որոնց տարածումը կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության անվտանգությանը: Այդպիսի տեղեկությունները, որպես կանոն, պարունակում են պետական գաղտնիքի մաս կազմող տվյալներ, սակայն ինքնին չեն բացահայտում պետական գաղտնիքը:

Պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունները համարվում են Հայաստանի Հանրապետության սեփականությունը ու պահպանվում ու պաշտպանվում են պետության կողմից»: Նույն օրենքի համաձայն՝ պետական և ծառայողական գաղտնիքի շարքին կարող են դասվել.

1. Ռազմական բնագավառում՝

գ. հատուկ կարևորության և ռեժիմային օբյեկտների տեղաբաշխման, նշանակության, պաշտպանվածության ու պատրաստակամության աստիճանի, դրանց նախագծման և շինարարության, ինչպես նաև այդ օբյեկտների համար տարածքներ հատկացնելու մասին տեղեկատվությունը:

... 3. Տնտեսության, գիտության և տեխնիկայի բնագավառում՝

գ. թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի, Հայաստանի Հանրապետության պետական պահուստների և պաշարների, նրա ֆինանսների և բյուջետային քաղաքականության մասին տեղեկատվությունը:

Վերոհիշյալ հոդվածի բովանդակությունից պարզ է դառնում, թե օրինակ՝ շրջակա միջավայրի բնագավառում կոնկրետ ինչի շուրջ ծագող տեղեկատվությունը կարող է պետական գաղտնիք համարվել: Սակայն, ինչպես արդեն նշել ենք, պակաս կարևոր չեն նաև նույն օրենքով՝ այս կամ այն տեղեկատվությունը պետական գաղտնիքի շարքին

դասելու համար նախատեսված սահմանափակումները, որոնք կարելի էր են որոշակի տեղեկատվությունը պետական մարմինների կողմից պետական գաղտնիքի շարքին ինքնակամ և կամայականորեն դասելու հնարավորությունը բացառելու համար: Մասնավորապես, նույն օրենքի 10 հոդվածի համաձայն՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի շարքին չեն կարող դասվել.

ա. քաղաքացիների անվտանգությանը և առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերի, աղետների, ինչպես նաև տարերային (ներառյալ պաշտոնապես կանխատեսվող) աղետների, դրանց հետևանքների մասին տեղեկատվությունը.

բ. տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պահպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, ներքին առևտրի, մշակույթի բնագավառներում տիրող իրական վիճակը ներկայացնող տեղեկությունները.

գ. քաղաքացիների իրավունքների և ազատությունների սահմանափակման փաստերի, իրավախախտումների և սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների մասին տեղեկությունները.

դ. այն տեղեկությունները, որոնք եթե դասվեն պետական և ծառայողական գաղտնիքի շարքին, ապա բացասական ազդեցություն կունենան Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական և հոգևոր-մշակութային զարգացման պետական և ճյուղային ծրագրերի իրականացման վրա.

ե. արտակարգ իրավիճակների կանխման կամ դրանց առաջացման դեպքում հնարավոր հետևանքները նվազեցնելու ու վերացնելու, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելու, մարդասիրական օգնություն ցուցաբերելու համար նախատեսված արագ արձագանքման պաշարի մասին տեղեկությունները»:

Ինչպես տեսնում ենք, պետական և ծառայողական գաղտնիք չհամարվող տեղեկատվության շարքում իր ծանրակշիռ տեղն է զբաղեցնում բնության և շրջակա միջավայրի պահպանության իրական վիճակի մասին տեղեկատվությունը, ինչը պայմանավորված է մարդկանց կյանքում ու նորմալ կենսագործունեության համար բնության ու շրջակա միջավայրի ունեցած գերկարևոր դերի և բնությունն ու շրջակա միջավայրը որպես կյանքի գոյության նախապայման պետության կողմից գնահատվելու հանգամանքով:

Ինչ վերաբերում է Օրհուսի կոնվենցիայով նախատեսված առևտրային և արդյունաբերական տեղեկատվության գաղտնիության այն դեպքերին, երբ նման գաղտնիությունը օրինական տնտեսական շահերի պաշտպանության նպատակով պահպանվում է օրենքով, ապա

պետք է նշել, որ այն միանշանակ ուղղված է պետական մարմինների գործունեության, պետության ու առանձին առևտրային կազմակերպությունների տնտեսական շահերի պաշտպանությանը: Ու քանի որ Օրհուսի կոնվենցիան չի մեկնաբանում «օրինական տնտեսական շահեր» եզրույթը, ուստի Կողմերն իրենք պետք է մշակեն այնպիսի մեխանիզմներ, սահմանեն այնպիսի չափորոշիչներ, որոնք կօգնեն հստակ որոշելու, թե արդյոք համապատասխան տեղեկատվության տրամադրումը կհանգեցնի բացասական հետևանքների: Վերոհիշյալ հարաբերությունների իրավական կարգավորման ոլորտում գործող «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը¹⁴ հստակ սահմանում է. «Բանկային գաղտնիք են համարվում բանկի հաճախորդին սպասարկելու կապակցությամբ տվյալ բանկին հայտնի դարձած հաճախորդի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները, հաճախորդի հանձնարարությամբ կամ հոգուտ հաճախորդի կատարած գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև նրա առևտրային գաղտնիքը, գործունեության ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուտի, արդյունաբերական նմուշի մասին տեղեկությունները և նրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը հաճախորդը մտադիր է եղել գաղտնիք պահել, և բանկը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ»:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի՝ տեղեկատվության ազատության սահմանափակման հիմքերի մեջ պետական, ծառայողական, բանկային գաղտնիքների շարքն ավարտվում է առևտրային գաղտնիքով, որի շուրջ առաջացող հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումը նախատեսված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով¹⁵, որի 141 հոդվածի համաձայն՝ «Տեղեկատվությունը ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք է, եթե այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն և տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար»: Կարևոր է նշել, որ «արդյունաբերական տեղեկատվություն» եզրույթը ՀՀ ազգային օրենսդրությամբ սահմանված չէ: ՀՀ քաղաքացիական օրենսգրքը կարգավորում է արտադրության գաղտնիքի՝ որպես նոու-հաուի հետ կապված հարաբերությունները: Սակայն հենց ռացիոնալ բնօգտագործման ու շրջակա միջավայրի պահպանության բնագավառում նախատեսված են բազմաթիվ նորմեր, որոնք ուղղված են արդյունաբերական տեղեկատվության պահպանությանը: Մասնավորապես, «Ընդեր-

¹⁴ Ընդունվել է 07.10.1996, ստորագրվել է 14.10.1996, ՀՀ ԱԺՏ, 1996.10.15/19(1119):

¹⁵ Ընդունվել է 05.05.1998, ուժի մեջ է մտել 01.01.1999, ՀՀ ՊՏ, 1998.08.10/17(50):

քի մասին» ՀՀ օրենսգրքի¹⁶ 12 հոդվածը նախատեսում է, որ ընդերքի երկրաբանական կառուցվածքի, ընդերքում առկա օգտակար հանածոների, հանքավայրերի երկրաբանական տվյալների, պաշարների չափերի, վերամշակման պայմանների, ինչպես նաև ընդերքի այլ առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկությունները, որոնք պարունակվում են երկրաբանական հաշվետվություններում, քարտեզներում, երկրաբանական փաստագրման առաջնային և այլ նյութերում, Հայաստանի Հանրապետության սեփականությունն են՝ անկախ դրանց ստացման ֆինանսավորման աղբյուրներից: Նույն օրենսգրքի հաջորդ հոդվածը սահմանում է. «Ընդերքօգտագործման իրավունքի սահմաններում ընդերքօգտագործողի ստացած երկրաբանական տեղեկությունը չի կարող բացահայտվել առանց ընդերքօգտագործողի համաձայնության: Լիազոր մարմինը պարտավոր է ապահովել երրորդ անձանցից երկրաբանական տեղեկության գաղտնիությունը դրա կուտակման, արձանագրման, պահպանության, փոխանցման և օգտագործման ընթացքում:

Երկրաբանական տեղեկության գաղտնիության բացահայտման դեպքում բացահայտողը ենթարկվում է պատասխանատվության Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով»:

Քննարկվող խնդրի կարևորագույն կետերից մեկն այն է, որ օրենսդիրը նախատեսել է այն կոնկրետ դեպքերը, երբ երկրաբանական տեղեկության բացահայտման արգելքը չի գործում:

Վերոհիշյալ համատեքստում տեղին է վկայակոչել նաև ՀՀ «Զբաղիչ օրենսգիրքը»¹⁷, որը արտոնագրված անձի կողմից Կարգավորող հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը սահմանում է որպես հրապարակային, եթե, իհարկե, այն արտոնագրված անձի կողմից չի համարվում գաղտնի և նշված չէ որպես «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն»: Ընդ որում, արտոնագրված անձն իրավունք ունի ապացուցելու, որ իր ներկայացրած տեղեկատվության (ներառյալ «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվության») հրապարակումը կարող է վնասել իր առևտրային գործունեության շահերը: Այս դեպքում Կարգավորող հանձնաժողովը քննարկում է գաղտնիության վերաբերյալ լիցենզավորված անձի հիմնավորումները և իրավասու է ընդունել կամ մերժել նման տեղեկատվություն չհրապարակելու վերաբերյալ վերջինիս դիմումը:

Ինչպես պարզ է դառնում վերոհիշյալ նորմերի վկայակոչումից, ՀՀ օրենսդրությունն անդրադարձել է տեղեկատվության, այդ թվում՝ էկոլոգիական տեղեկատվության մատչելիության իրավական կարգավորմանը, սակայն, բնակչության տեղեկացվածության ցածր մակարդակով

¹⁶ Ընդունվել է 28.11.2011, ուժի մեջ է մտել 01.01.2012, ՀՀ ՊՏ, 2011.12.21/69(872):

¹⁷ Ընդունվել է 04.06.2002, ուժի մեջ է մտել 10.10.2002, ՀՀ ՊՏ, 2002.07.10/24(199):

պայմանավորված, հետընթաց քայլ ենք համարում ՀՀ Սահմանադրության փոփոխություններով այն նորմից հրաժարվելը, որը նախատեսում էր պաշտոնատար անձանց պատասխանատվություն՝ բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար: Միաժամանակ պետք է նշել, որ իրավական դաշտում կան մի շարք թերություններ ու բացթողումներ, որոնք ճշգրտման ու լրացման կարիք ունեն. օրինակ՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքն օգտագործում է «տեղեկություն» եզրույթը, մինչդեռ Օրհուսի կոնվենցիան և ազգային մի շարք օրենքներ կիրառում են «տեղեկատվություն» եզրույթը: Նկատի ունենալով այն փաստը, որ քննարկվող ոլորտը պահանջում է լիակատար հստակություն, ինչպես նաև հաշվի առնելով ոլորտի արդյունավետ կառավարման միջազգային փորձն ու պրակտիկան, մեր խորին համոզմամբ, հիմնավորված կլինի ՀՀ-ում «Էկոլոգիական տեղեկատվության մասին» օրենքի ընդունումը: Կարծում ենք՝ առավելագույնս իրավական կարգավորման ենթարկելով համապատասխան հարաբերությունները՝ այն կարևորագույն նախապայման կդառնա պետական, հասարակական, անձնական կյանքի տարբեր ոլորտների բարելավման համար:

Բանալի բառեր – *էկոլոգիական տեղեկատվության մատչելիություն, էկոլոգիական տեղեկատվության մատչելիության սահմանափակումներ, պետական գաղտնիք, բանկային գաղտնիք*

ОЛИМПИА ГЕГАМЯН – Правовое регулирование некоторых оснований ограничения доступа к экологической информации в РА. – Эра информационных технологий характеризуется беспрецедентной прозрачностью и общественной информированностью относительно принятия решений по экологическим вопросам. Тем не менее, информация по-прежнему остаётся строго регулируемой сферой; требуемые сведения далеко не всегда предоставляются по первому требованию. Иными словами, государство ограничивает доступ к разного рода данным с целью защитить частную жизнь и интересы лиц, которые могут пострадать от произвольного их использования. Ряд государств и международное сообщество в целом взяли на себя обязательство внедрить правила, ограничивающие доступ к конфиденциальным сведениям. Это в равной степени касается экологических данных и информации.

Статья посвящена анализу правовых оснований по ограничению доступа к экологической информации. В частности, положения законодательных актов РА рассматриваются наряду с реальными последствиями их применения. Акцент делается на информации, которая, исходя из международной практики, должна публиковаться без всяких ограничений.

Ключевые слова: *экологическая информация, ограничение доступа к экологической информации, государственная тайна, банковская тайна*

OLIMPIA GEGHAMYAN – Legal Regulation of Certain Grounds for Restricting Access to Environmental Information in the RA. – The modern era of information technologies and access to information is increasingly characterized by unprece-

mented level of transparency and public awareness with respect to decision making process on environmental matters. Nevertheless, access to information still remains one of strictly regulated areas and not all the information is readily available or randomly accessible to public upon demand. Access to data remains under governmental regulation, the reason being to protect privacy and interests of others who may suffer from such data sharing.

Individual states and the international community have committed to regulate policies leading to creation of regulations restricting data sharing and access to protected information. This is equally true regarding environmental data and information.

The present article is devoted to analysis of legal grounds for imposing restrictions on accessing environmental information in the context of applicable international legal framework. In particular, the relevant provisions of pertaining legislative acts of Armenia are discussed along with practical ramifications of their application. Special emphasis is made on data and information that shall be published anyway and no restriction is allowed based on the content of such information and international practices.

Key words: *accessibility of environmental information, limitation of access to environmental information, state secret, bank secrecy*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

1. **Վահե Ստեփանյան** – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ
Вале Степанян – доктор юридических наук, профессор, заведующий кафедрой европейского и международного права ЕГУ
Vahe Stepanyan – Sc. D. in Legal Sciences, Professor, Head of the Chair of European and International Law, YSU
Էլ. փոստ՝ vstepanyan@ysu.am
2. **Մերգեյ Մեղրյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ
Сергей Мегрян – кандидат юридических наук, доцент, заведующий кафедрой гражданского процесса ЕГУ
Sergey Meghryan – PhD, Associate Professor, Head of the Chair of Civil Procedure, YSU
Էլ. փոստ՝ meghryan@ysu.am
3. **Վահե Հովհաննիսյան** – իրավաբանական գիտությունների դոկտոր, ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ
Вале Оганнисян – доктор юридических наук, доцент кафедры гражданского процесса ЕГУ
Vahe Hovhannisyan – Sc. D. in Legal Sciences, Associate Professor, Chair of Civil Procedure, YSU
Էլ. փոստ՝ vahehovhannisyan@ysu.am
4. **Վահրամ Ավետիսյան** – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ
Ваграм Аветисян – доктор юридических наук, профессор, заведующий кафедрой гражданского права ЕГУ
Vahram Avetisyan – Sc. D. in Legal Sciences, Professor, Head of the Chair of Civil Law, YSU
Էլ. փոստ՝ v.avetisyan@ysu.am
5. **Աննա Մարգարյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ
Анна Маргарян – кандидат юридических наук, доцент кафедры уголовного права ЕГУ
Anna Margaryan – PhD, Associate Professor, Chair of Criminal Law, YSU
Էլ. փոստ՝ annamargaryan@ysu.am
6. **Օլիմպիա Գեղամյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ
Олимпия Гегамян – кандидат юридических наук, ассистент кафедры гражданского процесса ЕГУ
Olimpia Geghamyan – PhD, Assistant, Chair of Civil Procedure, YSU
Էլ. փոստ՝ olimpiageghamyan@ysu.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ
КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО
CONSTITUTIONAL LAW**

- Վահե Մտեփանյան* – Խորհրդարանի կայունության երաշխավորման հիմնախնդիրները ՀՀ խորհրդարանական կառավարման համակարգում..... **3**
- Vahe Stepanyan* – Проблема обеспечения стабильности парламента в системе парламентского правления РА
- Vahe Stepanyan* – The Issue of Securing the Stability of the Parliament in the System of Parliamentary Governance of the RA

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱԴՈՒԹՅՈՒՆ
ГРАЖДАНСКИЙ ПРОЦЕСС
CIVIL PROCEDURE**

- Սերգեյ Մեղրյան* – Հեռակա դատաքննության ինստիտուտը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագծում **11**
- Sergey Meghryan* – Заочное производство в проекте гражданского процессуального кодекса РА
- Sergey Meghryan* - Default Judgment in the Draft Civil Procedural Code of the RA

- Վահե Հովհաննիսյան* – Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումը որպես դատական ակտը նոր հանգամանքով վերանայելու քաղաքացիադատավարական հիմք **26**
- Vahe Ogannisyan* – Решение о привлечении судьи к дисциплинарной ответственности как гражданско-процессуальное основание для пересмотра судебного акта по новому обстоятельству
- Vahe Hovhannisyan* - The Decision to Bring a Judge to Disciplinary Responsibility as a Civil-Procedural Ground for the Review of Judicial Act due to New Circumstance

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ
ГРАЖДАНСКОЕ ПРАВО
CIVIL LAW**

- Վահրամ Ավետիսյան* – Բանկ հանդիսացող բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերի համախմբման առանձնահատկությունները..... **40**
- Vahram Avetisyan* – Особенности консолидации акций акционерных обществ, являющихся банками
- Vahram Avetisyan* – Features of the Reverse Stock Split of Joint Stock Companies-Banks

**ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ
УГОЛОВНОЕ ПРАВО
CRIMINAL LAW**

Աննա Մարգարյան – Անչափահասների նկատմամբ պատժի և քրեաիրավական ներգործության այլ միջոցների նշանակման առանձնահատկությունները **55**

Анна Маргарян – Особенности назначения наказания и иных мер уголовно-правового воздействия несовершеннолетним

Anna Margaryan - Peculiarities of Juvenile Sentencing

**ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ
ЭКОЛОГИЧЕСКОЕ ПРАВО
ENVIRONMENTAL LAW**

Օլիմպիա Գեղամյան – Էկոլոգիական տեղեկատվության տրամադրման սահմանափակման որոշ հիմքերի իրավական կարգավորումը ՀՀ-ում..... **62**

Олимпия Гегамян – Правовое регулирование некоторых оснований ограничения доступа к экологической информации в РА

Olimpia Geghamyan – Legal Regulation of Certain Grounds for Restricting Access to Environmental Information in the RA

Տեղեկություններ հեղինակների մասին **77**

Сведения об авторах

Information about the Authors

«Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:

Журнал "Вестник Ереванского университета. Правоведение" выходит три раза в год. Издаётся с 2010 года. Правонаследник издававшегося в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета".

The "Bulletin of Yerevan University. Jurisprudence" is published thrice a year. It has been published since 2010. It is the successor of "Bulletin of Yerevani University" published in 1967-2009.

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1, 107
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1, 107
Address: 1, 107, Alek Manoukian str., Yerevan

Հեռ. 060 710 218, 060 710 219

Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am
Կայք՝ ysu.am

Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Գ. Գրիգորյան
Г. Григорян
G. Grigoryan

Համակարգչային ձևավորում՝
Компьютерная верстка
Computer designer

Մ. Աբգարյան
М. Абгарян
M. Abgaryan

Ստորագրված է տպագրության 25. 03. 2017:
Տպարանակ՝ 100: Չափսը՝ 70x108 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 5 մամուլ: